Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ԱՐԱՄՈՐԴՈՒ ԳԻՐԸ

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ԵՐԿԵՐ
Հատոր վեցերորդ

ԱՐԱՄՈՐԴՈՒ ԳԻՐԸ

Բանաստեղծություններ,
պոեմ, թարգմանություններ,
հարցազրույցներ, գրախոսություններ

Դու գրում ես լույսով Հորիզոնի -
հրեշտակի արյամբ,
և ճանապարհորդում է հոգուդ
աշխարհում
աղոթքը Լույսի:

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ - 2020

ՀՏԴ 821.19-8Եսայան
ԳՄԴ 84(5Հ)
Ե 583

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հրատարակվել է պետպատվերով

Շապիկին և գրքի մեջ օգտագործված են
Գառզուի ստեղծագործությունները

Եսայան Ռոբերտ
Ե 583 Արամորդու գիրը: Բանաստեղծություններ, պոեմ, թարգմանություններ, հարցազրույցներ, գրախոսություններ/ Ռ. Եսայան.- Ստեփանակերտ: «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2020.
Հատոր վեցերորդ.- 256 էջ + 4 էջ ներդիր:

Ռոբերտ Եսայան բանաստեղծը բաց երակ է և զգում է ժամանակի բևեռացումները: Գրքի տողերում ընդգծված են իրականության խորքերն ընկալելու ինքնատիպությունը: Բառը նրա գրչի տակ դրսևորվում է տարերքի ամբողջ ուժով: Հոգեբանական պատկերներով ոչ միայն բանաստեղծության ոգին է բացահայտվում, այլև ժամանակի դիմագիծը, և նա դառնում է ժամանակի գեղարվեստական վավերագիրը:

ՀՏԴ 821.19-8Եսայան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-1-1091-2

© Ռոբերտ Եսայան, 2020

ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է ԻՐ ՀԵՏՔԵՐԻՑ

(Ինքնազննում)

- Ի՞նչ են ձևը և բովանդակությունը կամ, ինչպես դու ես բնորոշում, ձևի բովանդակությունը:

- Ձևի բովանդակության փնտրտուքն է մղում ինձ դեպի Ոգու կենտրոնը, ուր ներշնչանքը հայտնագործում է բառի իրական ու անիրական հնարավորությունները, բեկելով սովորույթի ուժը: Ես ըմբռնում եմ, որ եթե նոր է հոգեպատկերը, նրանից բխող բանաստեղծական ձևը հնացած լինել չի կարող: Նորը հոգին է, որ արթնացնում է դարավոր նիրհից բառերի երազներն ու լռության անսպառ պաշարները, մղում նրանց հազվագյուտ առնչությունների…

- Իսկ ինչից և ոգու ո՞ր եզրերից է անդրադարձվում բանաստեղծը:

- Բանաստեղծն անդրադարձվում է իր իսկ անցած ճանապարհի հետքերից: Տողերի միջև շնչող տարածությունը շիկացնում է ապրումները, հոգեբանական անցումներ գծում նոր առնչությունների համար:

- Ե՞րբ եք ճանաչում Ձեր կեղևը:

- Ես ճանաչում եմ իմ կեղևը, երբ իմ տեսողության կաղապարը ճեղքում է բառը:

- Օրինակ, ութնյակը կամ սոնետը նույնպես Ձեր կեղևն են:

- Իբրև կեղև՝ նրանք ժամանակահունչ ու կենսունակ են այնքանով, որքանով բացահայտում են կյանքի հոգեբանությունը:

- Իսկ ի՞նչ են ստեղծում բառերն իրենց ներաշխարհով:

- Բառերն իրենց ներաշխարհով ստեղծում են մի նոր իրականություն:

- Հակադրության դերը…

-Հակադրությունն ավելի է ընդգծում մտքի և զգացմունքի նպատակասլացությունը:

- Ո՞ր ձևն է կատարյալ:

- Կատարյալ չէ բանաստեղծական և ոչ մի ձև, եթե այն բանաստեղծի ինքնահաղթահարումը չէ:

- Իսկ կամքը:

- Ստեղծագործական կամքը կոփվում է ներշնչանքի եռքի մեջ:

- Ստեղծագործությունը ինքնահեռացո՞ւմ է, թե ինքնամոտեցում:

- Ստեղծագործությունը ինքնահեռացում է կամ ինքնամոտեցում,- նայած թե ո՞ր նժարին է կանգնում ճանաչողության լույսը:

- Կարոտո՞ւմ ես ավանդական չափերին:

- Երկար ժամանակ իմ մեջ մեծ կարոտ էր խտանում դեպի ավանդական չափը, հանգը, նվագը: Ես ուզում էի ինքս ճանաչել բանաստեղծական այս չափը՝ սոնետը:

- Սոնետը լաբիրինթո՞ս է, թե բնակարան:

- Մտնելով նրա մեջ, ես համոզվեցի, որ բանաստեղծական այս չափն ունի (բացի արտաքին տեսքից) ներքին կառուցվածք ու ընթացք և իր ընթացքի մեջ ինքն է կարգավորում մտքի ու հույզի ուղղությունը: Գրելու պահին անընդհատ պայքարի մեջ են եղել իմ ինքնությունն ու սոնետի կառուցվածքը, և եթե բանաստեղծությունների այս շարքը («100 սոնետ») որևէ արժանիք ունի, հենց այդ պայքարի արդյունքն է:

- Քառյակը և ազատ բանաստեղծությունը կարծես երկու բևեռներ լինեն:

- Քառյակը ինձ մղում է դեպի ազատ բանաստեղծությունը, իսկ ազատ բանաստեղծությունը՝ դեպի քառյակը: Ազատ բանաստեղծության մեջ ամենակարևորը՝ ներքին ռիթմի հայտնագործումն է և նրա պահպանումը ստեղծագործության արարման ողջ ընթացքում: Քառյակի ուժը բանաստեղծությունը ճիշտ պահին ավարտելու և ոգու նպատակասլացության մեջ է:

- Այսքանից հետո ի՞նչ ընդհանրացում կանեիք:

- Հոգեաշխարհիս բացահայտումը թերի կլիներ, եթե այն անմասն լիներ ազատ տողերի սլացքներից, եթե տենչս չկոփվեր ազատ բանաստեղծության տատանումների հողմերում:

- Եթե՞…

- Եթե պոետական տեքստը, տողը, ռիթմը հայտնություն չեն, նշանակում է զուրկ են իրականության հոգուն առնչվելու հնարավորությունից:

- Էլ ի՞նչ կավելացնեիք…

- Այս պահին լսում եմ Ռիլկեի ձայնը. «Ինչ մեր ոգին է քաոսից շահում, այն ապրողներին պետք կգա մի օր»:

- Ամեն գիրք ստեղծելիս ի՞նչ եք ապրում:

- Ամեն գիրք ստեղծելիս փորձում եմ հատել ներաշխարհիս սահմանագծերը, սովորույթի փակուղուց շարժվել դեպի զգացողության անսահմանությունը:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

ԲԱՌԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Բառերիս միջով հոսում է երկինքը:
Տողերս դռներ են,
որոնցով հորդում է ժամանակի ոգին:
Եվ Աստծո շուրթերից բուսնում է լռությունը,
որպես ծաղիկ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՈՂԵՐ

Եվ տոհմածառի կեղևից մաս-մաս ալիքվելով,
ես գոյանում եմ,
որպես երազի իրականությո՛ւն:

Եվ քամին բերում է բաբախո՛ւն մի երգ:

Իսկ ես նայում եմ հայելու մեջ ստվերիս
և անհետանում իմ արմատներում.
այդպես մաքրվում է տեսողությունս
պարտադրված փառից:

Եթե կարոտը լուսանցքն է ժամանակի,
եթե երազը լուսանցքն է ժամանակի,
եթե թախիծը լուսանցքն է ժամանակի,
ապա իմ տողը ոչ այլ ինչ է,
եթե ոչ՝ գրչից թռած ասո՛ւպ:

Եվ ճանապարհս Աստծո հայացքի ներքո
սլաքի պես ցույց է տալիս հիմա
իմ ու քո միջև ծնվո՛ղ ժամանակը:
Եվ լուսանում է դեմքս
որպես ա՛ստղ ցավի:

Երկու ծաղկի շունչը՝ ալպիական հոտով,
երկնային պարգև է, որ չի՛ գնվում ոսկով.
քո շուրթերը:

Մենակության մեջ թե ճչամ հանկարծ…
կբարձրանա տողս՝ տարածության անո՛ւն…
Եվ քայլերս ելքեր են…
Եվ դեմքս սուզում եմ շնչառության մեջ արահետների,
բարձրացնում, որպես
մանուշակը Հույսի:

Հ. Գ.
Ես իմ շպրտած տողերի կույտից
վերցրի անհրաժեշտ մի քանի տողեր.-
և կրկին բռնկվեց կրակը ներշնչանքի,
բոցավառվեցին հիշողության օրեր…

1.11.2018թ.

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԼԱՊՏԵՐԸ

Երբ սալաքարից բխող տերևը լույսն է հիշողության,
և իմ թևերում հասունանո՛ւմ է երկինքը սիրո,
ամեն քայլափոխի ինձ ժպտում է վաղը,
ամեն քայլափոխի զգաստացնո՛ւմ է ինձ
երախը քաոսի:

Ալիքը հիշողության
արթնացնում է լույսը՝
ա՛փը տառապանքի:

Իմ և իմ միջև եռում է
ժամանակը բառի՝
տարածությո՛ւնը խղճի:

Հավատիս զիգզագները
լռության օվկիանոսի վրա
բնե՛ր են թռչունների:

Իմ գրչի ծայրին
հիշողության արյունն ընդվզո՛ւմ է,
խոյանում է վեր
հրդեհը ոգու…

Եվ հետքերիս լեզվով
խոսում է առասպելը ճանապարհի.
երազի հողմապտո՛ւյտ է
ճանապարհիս դեմքը:
Եվ ցավի անկյուններից ողջունում է ինձ
լապտե՛րը տառապանքի:

21.04.2019թ.

ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Բառերը իրար չարչարում էին,
երբ ես ներս մտա…
Եվ կասկածների ձյունով ծածկվեց մտքիս հովիտը:
Չգիտեմ, ո՞վ է տերն այն տարածքի,
որ կոչվում է հոգի…
Ցցվում են լռության ուսերը քարե…
Իմ խաղն իմ կյա՛նքն է,
խորհո՛ւրդը լույսի…
Եվ շոյում է ինձ ստվեր՝ը տողի,
թե անակնկալ շշո՛ւկն Անհունի:
Հանգստությունը
իմ շապի՛կը չէ:
Լույսի և մութի
միջև գրեթե
հոգեվարո՛ւմ է տողի ապագան:
Եվ ներշնչանքը բերնակրի պես
արձագանքների շեղջեր է բերում,
և հորիզոնը, որպես մի կտավ,
իմ դիմա՛ց է դեռ…
Եվ մի թռչուն է խփվում անընդհատ
հոգուս պատերին…
Մի պահ նայում եմ ես տառապանքի աչքի մեջ ուղի՛ղ…
Դժոխքի հե՛տք է
վարանումը այս…
Մինչդեռ բառերը շե՛մն են դրախտի
և Մեսրոպատառ վեհ ժամանակի ընթա՛ցքը զորեղ…

14.01.2019թ.

*

Բառը լապտեր է,
որով լուսավորում եմ խաչմերուկը կյանքի:
Բառը երազ է,
որով տեսնում եմ տարածությունները
և ըմբռնում խորհուրդն Անդիի:

24.11.2018թ.

ՀԱՆԳՐՎԱՆ

Լռության ակունքները բներ են արցունքների:
Համբուրում եմ տողերիս միջև բաբախող լռությունը,
և ծաղիկներ են բուսնում…
Սանդուղք է հիշողությունը,
որով բարձրանում է իմ մանկությունը:
Կարոտի արգանդից կաթող արյունը
թռչուն է:
Տարածության նշան:
Ինձ կորցրել է հրեշտակը…
Արևի շուրթից իմ անունն է կաթում
հիշողության տանիքների վրա…

19.12.2018թ.

*

Եթե իմ ստվերից հոսում է աղբյուրը
և լվանում զոհասեղանը հիշողության,
ուրեմն իմ ձեռքերից ծլո՛ւմ է հորիզոնը,
իմ արյունից ելնում է կա՛նչը Ապագայի:

20.12.2018թ.

*

Բառի մեկուսարանից ելնում եմ
և մտնում սրահն Անհայտի.
և ստվերիս վրա գալարվում է
արշալո՛ւյսը ծովի:

19.12.018թ.

ՆԵՐՇՆՉԱՆՔԻՆ ԴԻՄԱՎՈՐԵԼԸ

Ցավի ստվերում ապրում եմ, ինչպես
մի աքսորական,
և ինձ շոյում են տաք փետուրները արձագանքների:
Որպես պատանդը ճակատագրի,
սփոփվում եմ ես ու երջանկանում,
երբ իմ ափի մեջ
կաթո՛ւմ է աստղը բանաստեղծության:
Իսկ ճանապարհիս վառվող ջահերը
ուղեկիցներ չեն,
այլ գագաթները Ոգու և Կամքի:
Եվ ներշնչանքին դիմավորելը
ինձ համար նույնն է,
ինչ ցավահարույց դռներ բացելը,
երբ ալեկոծվող մի փոթորիկ են
իմ ներսն ու դուրսը:
Բառերս ճախրող բներ են, որոնք
հանգրվանում են հենասյուներին տառապանքների
և սպասո՛ւմ հույսի արագիլներին:

22.12.2018թ.

*

Մենք ի զորո՞ւ ենք անշառ լուծույթում
քննել հիմնովին Բանը աշխարհի,
վերընձյուղելով քնած թե արթուն
բոլոր գույները Մեծագույն պահի:

Ինչո՞ւ թաքնվել… Ու հորինել չափ,
ձևեր՝ սքողող իսկությունը մեր,
երբ դրոշմված ենք… մեր արտաշնչած
և շնչած օդի անդաշնության մեջ:

Երբ բազմադիմակ այս աշխարհի մեջ,
ուր լույսը քար է, քարը՝ ապակի,
չափանիշներն են խախտվում անվերջ,
չափանիշները կեղծ ու շիտակի:

Եվ լինելության սարսուռն է հոսում
այն ճամփաներով գաղտնիքի անցած,
որտեղ ճայթել է Անհայտի ասուպ,
սուտ աստվածներն են գահավիժում ցած:

Կյանքն Անհունի հետ գալիս ագուցվում
և հաղորդվում է ոգով Տեսիլքի,-
հաղթահարելով հոսանքները ցուրտ,
գնում ենք դեպի բացատը Ելքի:

Մենք ի զորո՞ւ ենք անշառ լուծույթում
քննել հիմնովին Բանը աշխարհի,
վերընձյուղելով քնած թե արթուն
բոլոր գույները Մեծագույն պահի:

*

Բառեր, բառեր…
մերթ քրտնում եք իմ շուրթերին,
մերթ թփրտում թռչունի պես…
Մինչև որ դուք ձեզ գտնում եք:
Եվ առաջին անգամ բացվող
կրծքի նման
ձերմակ թռ՛ղթն է հևում
այնժամ
աստվածային ձեր հպումից…

Բառե՛ր,
ես ձեր հիշողությո՛ւնն եմ դարավոր:
Ինչպես թռչունն իր թևերով
լայնացնում է շնչառությունն
հորիզոնի,
ձեր հայացքի շեղբով խիզախ
լայնացնո՛ւմ եք ժամանակը…
Կան համբույրներ,
որ չեն լցվում
հույսի,
լույսի
և կարոտի սարսուռներո՛վ:
Ու դրանից մարդը փոխվում
վարագուրված մենակության
և փնտրում է ոգու սառը անեզրության

մեջ սուրբ մի բան
ու չի գտնում,
ու չի՛ գտնում…
Արվե՛ստ,
եղիր դու այն ճյուղը,
որին եթե պատվաստենք մեր հույսը միակ-
չուշացնի՛ նա փրկության տաք ընձյուղը,
չուշացնի՛ նա փրկության տաք ընձյուղը…

ՀԱՄԱՆՎԱԳ

Ես բացում եմ հիշողությունը արյան,
որպես ճանապարհի դեմք,
և երազի հողմապտույտից
հառնում է երկինքը,
որպես ցավի բիբերում ծնվող արշալո՛ւյս:

21.02.2019թ.

*

Ես ընտրում եմ բառը,
որպեսզի հոգու դատարկությունը
կրճատվի քիչ-քիչ՝
լցվելով լույսի տաք շնչառությամբ:
Ընտրում եմ բառի
անհայտությունը,
ուր լռությունս հոգու պահո՛ւստ է:
Իմ ճանապարհին ինձ ուղեկցո՛ւմ են
հիշողությունը
և շունչը բառի:
Ինձ աջակցո՛ւմ է ոգին դարերի:

04.03.2019թ.

*

Պատմության վիհերն հաղթահարող զինվո՛ր,
արյանդ կաթիլը
երկի՛ր է Ավետյաց:

19.02.2019թ.

*

Երբեմն քնում եմ լուսանցքում հիշողության,
որպեսզի ազատվե՛ն խոհերս
մոխիրներից ոխի.
երբեմն արթնանում եմ բիբերում ճակատագրի,
որպես արցունք,
և իմ քունը շարունակո՛ւմ է
անապատով անցնող քարավանը ցավի:
Երբ բառերից ցայտող աղը հա՜մ է տալիս
ճաշին Անհայտի,
ես փաթաթվում եմ ստվերով ցավի
և բուժո՛ւմ վերքս համբույրով լույսի:

26.02.2019թ.

*

Հետքերս վառվում լամպերի պես,
լուսավորո՛ւմ են տարածքը Ոգու:
Իսկ բառերը տառապո՛ւմ են երկար,
որպեսզի ազատվեն փառից ժամանակի:
Եվ իմ հետքերում դարեր քարացած հորիզոնները
հալվում են դանդաղ,
բացում լուսա՛յգը հիշատակների:
Եվ ղողանջո՛ւմ են զանգերը հոգուս
երկնակամարում:
Եվ ընդլայնվո՛ւմ է սահմանն հաղորդության
խորանում բառի:

20.02.2019թ.

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒՀԻ
ԱՂԱՎՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հրեշտակի թևը սպեղանի՞ է…
Բառը
ամենակարևոր դիրքն է:
Եվ ցավը սլանում է լույսի արագությամբ:
Եվ օրագրի էջ է
եզրը ճանապարհի:
Դու գրում ես լույսով Հորիզոնի-
հրեշտակի արյամբ,
և ճանապարհորդում է հոգուդ աշխարհում
աղո՛թքը Լույսի:
Եվ անկշռելին
ճի՛չն է Անհունի:
Որպես աղբյուր՝
բխո՛ւմ է հորովելը
հետքերից հրասայլի:
Եվ հիշողության լուսանցքն է
կակաչը երազի:
Եվ հրեշտակի թևերի լո՛ւյսն է բացվում…

19.11.2018թ.

*

Երկի՛նքը նյութի մուժի մեջ թաղել
զանգերը հոգու
և սրթսրթո՛ւմ է…
Տողս շնչում է օդը վերերկրային:
Գնդակի պես գլորվում է հիշողությունը
բառի:
Ժամանակի խա՛ղը…
Տեսնես ո՞ւմ երակի միջով է հոսում
դեմքս վերածնվող:
Նռան կեղևի պես ճեղքվում հայացքս
և սփռում է հողին հատիկները շեկ…
Դա լույսի անդրադա՛ռձն է
ոգուս սարսռող կտավի վրա:

10.05.2019թ.

ԶԻԳԶԱԳՆԵՐ

*

Բառն անցնում է իմ միջով,
որպես ճանապարհորդ,
իսկ ես ապրում եմ բառի մեջ,
որպես զանգահա՛ր Ոգու:

22.11.2018թ.

*

Եվ հայացքիս պատերից
կախված բառաշերտից
ծորո՛ւմ են ու փոթորկվում
արշալույսներն արյան:

22.11.2018թ.

*

Ես նկարում եմ.
և իմ մատներից
իրերն ըմպում են արտացոլքն իրենց,
և իմ աչքերից
կախվում է ոգին առասպելների:
Եվ ճանապարհս քառատո՛ղ է գրում
քարե մատյանում:

30.11.2018թ.

*

Երկնքի խոսքերը հանգրվան են գտնում
իմ և իմ միջև,
դառնում դեմքը հողի,
լուսաբա՛ցը հարության:
Եվ բառի ոգին հառնող խաչքա՛րն է:

30.11.2018թ.

*

Երբ արմատներով սնվում է բառը,
իսկ ծաղկաթերթով շնչում երկինքը,
ոգու հրայրքով ճեղքում եմ մութը,
համբուրում անհագ ծնո՛ւնդն աստղերի:

24.01.2019թ.

*

Բառերը հատում են
շեմը Անհայտի
և հայտնվում մի նոր հարթության վրա:
Եվ ժամանակը ձեռք է բերում հայացք,
և ճանապարհը ձեռք է բերում հայացք,
և ընթերցողը ձեռք է բերում հայացք:
Իսկ ժամանակի հայացքը
վերածնվող բա՛ռն է-
հոգի՛ն տարածության:

12.02.2019թ.

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Օ՜, գրիչն ունի հայացք աստվածային,
որով գրում եմ էջին տարածության,
աբսուրդի ակունքը
ասպարեզն է բառի,
որ շրջանցում եմ և մտնում հունը Անհունի:

Եվ կայծակների հետքով սահում եմ,
որպես ներշնչանք, ոգի՛ Անհայտի,
ցնցո՛ւմ հիմքերը Անսահմանության:
Եվ ակունքներն եմ ես հայտնաբերում
իմ մեծ լռության:
Եվ արյանս մեջ մի աքսորյա՛լ է
արթնանում մեկեն.-
դա ճանապա՛րհն է աստղային Ոգու:
Եվ ընդառաջ է գալիս ինձ բառը,
որպես ասպարե՛զ փոխակերպության:
Եվ բառի հայացքից ծնո՛ւնդ է առնում
իմ ճանապարհը:

28.22.2018թ.

ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԳԻԾԸ

Ճանապարհի հայացքը բացվում է,
ինչպես վարդ:
Սիրահարի շուրթով սահող արցունքը
ցո՛ղն է առավոտի:
Տարածության վանդակը,
ուր ճռվողում է թռչունն ազատության,
օրագրի էջն է ճանապարհորդի:
Ես բացում եմ դեմքը պահի,
և օրն ազատվելով հագուստից տագնապի,
ցնծո՛ւմ է, ինչպես բառը՝
շրթունքին փրկվածի:
Եվ աղոթքը լրացնո՛ւմ է
շրջագիծը երկնային մեծ համբերության:

31.12.2018թ.



ԴՐԱԽՏԻ ԾԵՄԸ

Թող քո շուրթերով սահի հայացքս,
որպես գաղտնաբա՛ռ.
այդպես բողբոջի շուրթով սահում է սարսուռը լույսի,
և ծաղիկնե՛րն են բացվում համբույրից հրեշտակների…

*

Ահա մատներս խմում են լուսաբացը,
ըմպում քարի երգը,
լռությունը բառի,
երբ շոյում եմ առեղծվածը մարմնիդ,
արյանս միջով ճախրո՛ւմ են գարնան
ծիծեռնակները:

*

Թևավո՛ր է լույսը քո հայացքի,
և շուրթերիդ բախտի հուրն է շողում,
քանի դո՛ւ ես երգում շնչիս դողում-
թևավո՛ր է լույսը քո հայացքի:
Ես քո գրկում փոխվում եմ կարգին,
մերթ մարդ, մերթ երա՛զ ես շնչիս դողում,
թևավո՛ր է լույսը քո հայացքի,
և շուրթերիդ բախտի հուրն է շողում:

ԱՆՀԱՅՏԻ ԸՆԹԱՑՔԸ

Բա՛ռն եմ գիշերային, ասո՛ւպն եմ ոգու:
Կարմի՛ր էր
մրմուռն
անհայտության:

Դուռը նոր էր բացվում,
երբ տեսա՝ ձնծաղիկն Անհունի:
Փնտրո՛ւմ էի պատուհանը ազատության,
փնտրում էի տողերիս շնչառությա՛մբ:

Ես համբուրեցի
հորիզոնի ճյուղին պայթող բողբոջները
և ըմբոշխնեցի հա՛մը Անհայտի լույսի:

Ուսերս գորովանք փնտրեցին
և գտան ճյուղերը ծառի,
որոնք համբուրում էին օդը՝
իրարից անկախ ու մեկուսի՛…

Աչքերս քնքշանք փնտրեցին
և գտան ստվերը լապտերի,
ուր բուսնող հրաշունչ ծաղիկը
երա՛զն էր ճանապարհորդի…

Երազի երկի՛նքն էր դատարկվում: Կյանքի
հո՛ւնը:
Ես ընդլայնվում և երփներանգվո՛ւմ էի
ներաշխարհում բառի:
Ես գգվում էի ակունքները լռության,
և ժայթքո՛ւմ էր ներսից հիշողությունը քարի:

Եվ մենակության շուրթերը համբուրում էին
ողկույզները վայրկյանների
ոգու ծիրից թռած հափշտակությա՛մբ:

Եվ ինչքան բերկրանք ապրեց հայացքս
իր սեգ մերկությամբ,
և ինչքան ցնծաց մարդն՝ ազատությա՛մբ:

Դուռը նոր էր բացվում,
երբ տեսա՛ ձնծաղիկն Անհունի:
Եվ շուրթերիս վրայով հոգեվարքների
հողմերը անցան:

Բա՛ռն եմ գիշերային, ասո՛ւպն եմ ոգու:
Կարմի՛ր էր
մրմուռն
անհայտության:

7.11.2018թ.

ՔԱՐԸ՝ ԱՐԱԳԻԼԻ ԿՏՈՒՑԻՆ

Հայոց աշխարհում արու արագիլը
երբ ուզում է
սիրո խոստովանություն անել էգի՛ն, կտուցի մեջ
բերում, նրան նվիրում է մի …քար:

Վարդան Հակոբյան

Արագիլի կտցին՝ սարսուռների քար է,
Արագիլի կտցին՝… սիրո նոր աշխա՛րհ է:

Ավետումի շյո՞ւղ է կտցին արագիլի.
Ամրացնում է բույնը շողով արեգակի:

Անրջանքի լո՛ւյս է կտցին արագիլի.
Ըմբոշխնում է հոգին ցողով երկնային:

Եդեմական ջո՛ւր է կտցին արագիլի.
Հագեցնում է վերում տենչը թռիչքների:

Արագիլի կտցին՝ սարսուռների քար է,
Արագիլի կտցին՝… սիրո նոր աշխա՛րհ է:

05.02.2020թ.

*

Ստվերիս հայելին է հայացքը ցանկապատի,
որ լցվում-դատարկվո՛ւմ է քայլքով աղջիկների:
Բառս բողբոջի պես կուզեմ այսօր պայթի,
համբույրի՞ պես ապրի մեր շուրթերի միջև,
անդեմ բախտի եզրով քայլող աղջիկներին
կուզեմ բաշխե՛լ շունչս թևով ծիածանի:
Ստվերիս հայելին է հայացքը ցանկապատի,
որ լցվում-դատարկվո՛ւմ է քայլքով աղջիկների:

16.11.2018թ.

*

Ոգի կառնի սիրո դողը
և կխրվի կարոտիս մեջ,
ես կարթնանամ, ինչպես շողը,
մարմին կառնեմ տեսիլքիս մեջ:
Շունչը շնչից կառնի թևեր,
տողը տողից՝ անհուն երազ,
որ դարձնեն Սիրո լույսը
տիեզերքի համար հենակ:

ՀՈՐԻԶՈՆԻ ՄԻՐԳԸ

Սերը
ծնվում է իմ ներշնչանքի սահմաններից դուրս:
Եվ զնգզնգում է հուշերիս շղթան
քո պարանոցին
ու քո զիստերին թփրտացող ձկան
շնչառության մեջ:
Եվ կարոտներս բողբոջի նման
պայթում են, ծաղկո՛ւմ
քո հպումների ճերմակ թիրախում:
Չէ որ իրականության հաճելի եզրը
ո՛չ թե այս մայթն է
կամ այս փողոցը,
այլ մեր… համբո՛ւյրը,
որ տարածության ճյուղից կախվելով,
շողո՛ւմ է, որպես
հորիզոնի միրգ:

26.11.2018թ.

ԴՐԱԽՏԻ ՇԵՄԸ

Քո հայացքը՝
ապաստարան կրքերի:
Լսո՛ւմ եմ համանվագը ստվերիդ:
Դրախտի շե՛մն է
քո անունը:
Շուրթերիդ միջև
ժայթքում է լռությունը անհայտի:
Օդապարիկը խոսքի
օրորվում է ահա
ունայնության
անդունդի վրա:
Եվ ոգուդ թռչունը
հարությո՛ւն է առնում
անդրժամանակի
սյուների վրա:

27.11.2018թ.

ՍԻՐՈ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սիրո տարածությունների միջև
գոյանում են
միջանցքները Տենդի:
Ո՞վ է բախում հիմա դուռն իմ մենակության:
Չէ՞ որ համբույրներիս անդրադարձներում
ոչ թե ամառ է,
աշուն կամ ձմեռ,
այլ գլխակորույս ու գիժ գարո՛ւն է:
Եվ ցավահարույց մի դուռ է բացվում
դեպի մենության
լաբիրինթոսը,
ու մի անդո՛ւնդ է գոյանում բառի
շարժուն հայացքում:
Եվ միջանցքում Տենդի
ես նշմարո՛ւմ եմ վիհը Երազի:
Եվ իմ մտքերի քարաժայռի վրա
շարժվող մրջյունը
լապտե՛րն է խղճիս:

17.12.2018թ.

*

Մեր շուրթերի միջև բացվում են ծաղիկները:
Եվ շատրվանում է հատակից բառերի
խորհուրդը լռության:
Եվ շուրթերիս ածուխը վառվում է
հուշով աստեղային:
Քո մաշկի փափուկ ու տաք լույսը՝
ապաստարան գգվանքների:

19.12.2018թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Եթե համբույրին չեն մասնակցում շուրթերը,
կարելի է այն կոչել մեկ բառով՝ գգվանք:
Կա աչքերի գգվանք և թարթիչների՛,
կա ձեռքերի գգվանք և սրունքների՛,
կա տենչերի գգվանք և կարոտների՛,
կա խոսքերի գգվանք և նոր հույսերի՛…
Եթե համբույրին մասնակցում են շուրթերը,
մասնակցում են ձեռքերը, տենչերը, հույսերը,
մասնակցում են ծաղիկնե՛րը և աստղե՛րը…

30.12.2018թ.

ՎԱՐԴԸ

Իմ հիշողության դեղին ավազում
բուրող վարսերիդ շշուկները կան,
որոնցից բխող մի երկինք է կամ
կրակ է բառը,
որ դեպի կյանքի
ջրվեժն է վազում:

Իմ շնչառության ճյուղերին բուսնող
բողբոջները այս
քո շրթունքներն են,
որոնք ընթերցում էջը համբույրի,
անհետանում են
ըմբռնումից դուրս ծավալվող լույսի
օազիսի մեջ:

Եվ իմ ձեռքերը
ըմպում են ծունկիդ սարսուռները խոլ,
կորչում գաղտնիքի
լռակյաց ծալքում:
Եվ սարսռում է երկնակամարը
մեր գգվանքներում,
երբ նայում ես ինձ
կամ երբ չես նայում,
իմ թարթիչները քո մաշկի վրա
նկարում են մի
հրատոչոր վարդ:
Եվ սկսվում է ինքնաըմբռնման նոր եղանակը:

28.12.2018թ.

*

Դու ինձ մի՛ վանիր,
երբ իմ գգվանքը լուսավորում է
նեղ միջանցքները զգացմունքներիդ,
առաջնորդում քեզ դեպի սրա՜հը խոստովանության:
Փաթաթվի՛ր, սեր իմ, երկնքով ծաղկի
և քո համբույրով սնուցիր հունդերն իմ կարոտների,
որոնցից բուսնո՛ւմ է անսահմանությունը:
Փաթաթվի՛ր նաև իմ գրչից հոսող երազանքներով
և լսիր ճերմակ սրտատրո՛փը երգող Անդիի:
Բառն իմ աղբյո՛ւր է հավիտենական,
ուր հորիզոնն է աճում, ինչպես ծա՛ռ:
Թող քո շուրթերով սահի հայացքս,
որպես գաղտնաբա՛ռ.
այդպես բողբոջի շուրթով սահում է սարսուռը լույսի,
և ծաղիկնե՛ր են բացվում համբույրից հրեշտակների…
Դու ինձ մի՛… փնտրիր,
դու միայն բռնիր իմ ստեղների վրա նվագող
ձեռքն հորիզոնի
և քո մարմընի երաժշտությամբ
ու սրտի դողով…
լցրո՛ւ իմ հոգին:

31.12.2018թ.

*

Շոյում եմ ձեռքդ,
և իմ կրակի բիբերը համբուրո՛ւմ են
մաշկագծերիդ երազները խոլ:
Գգվում եմ ճերմակ բողբոջը տենչիդ,
և իմ հայացքով ըմբոշխնում եմ ես
արյան կանչերը քո կարոտների:
Եվ լռությունդ հղկվո՛ւմ է հիմա
շուրթերիս վրա,
որպես քանդակներ,
որոնք ընդունում,
ոսկեզօծո՛ւմ եմ ես կարոտներով
և տեղադրում իմ շնչառությամբ
բաց դարակներում Ոգուս սրահի:
Եվ կյա՛նք են տալիս քո համբույրները
առավոտներին, ծիծեռնակներին
ու ծաղիկներին:

02.01.2019թ.

*

Խղճի
ավերակներից բուսել է մանուշակը:
Եվ Հավատի հորիզոնում
միավորվում են բևեռները կյանքի:
Բառի հայացքը
տարածությունն ընդունում է,
որպես համբո՛ւյր:
Ծառն իր մի ճյուղով
հավերժի մեջ է,
մյուսով հողից ներքաշում է
ավյուն,
երրորդով երկնքից պոկում է ահա
օրհնության կաթի՛լ:
Եվ ոգու միջով հորիզոնի
ճախրո՛ւմ են սիրո ծիծեռնակները:

02.01.2019թ.

*

Աղջիկը
նվագում է ստեղներին հորիզոնի,
և երաժշտությունը կոհակ առ կոհակ
լցվում է գուռը,
որից ջո՛ւր են խմում ճանապարհները…
Այրվո՛ւմ են
շեղջերը երազի,
որոնցից դո՛ւրս են ցայտում մերթընդմերթ
բիբերը թռչունների…
Ճակատագրի ափի մեջ շողո՛ւմ է
արցունքը հրեշտակի…
Լցվել է երկինքը
ճիչերո՛վ թևավոր…
Եվ գարնան հետքերի վրայով
անցնում է
հողմը կրակի:
Աղջիկը
նվագում է ստեղներին հորիզոնի…

04.01.2019թ.

*

Բարձրացնում եմ
կափարիչը տենդի և շնչում օդը գարնան:
Եվ իմ ձեռքերից կաթկթում է լուսաբացը
ոտնահետքերիս ճիչերի վրա:
Եվ բառի հոգին փնտրում է ու գտնում
իմ Սկիզբը: Մանկության
հայացքից ընկնող ճանապարհը
ձուկ է թփրտացող:
Եվ բառի երազը
ջերմացնում է ինձ, որպես
ներշնչանքի դուռ:
Քո ժպիտը, սեր իմ, շեմն է
դրախտի: Կյանքի
ու մահի միջև հայտնվում են և անհետանում
թովչանքները քայլերիդ,
շրջազգեստիդ շրշյունն առինքնող:
Իսկ շնչառությունը խոտի
բացում է հուշերիս փեղկերն արծաթե:
Մի տեղ գրկում է ինձ և հրապուրում
պտտահողմը թախծի:
Մի այլ տեղ՝ ընդառաջ է գալիս ինձ
խայտանքը լույսի,
և ես ըմբռնում եմ,
որ ուսերիս տանում եմ աճյունը Համբույրի:

*

Որպես բիբը փողոցի՝
սահում եմ կրծքիդ վրայով,
հետո ամփոփվում ծալքում քո ծունկի:
Դու սարսռում ես,
և ես ըմպում եմ երկինքը հայացքիդ
ու արևի խոլ ճառագայթի պես
սահում քո մարմնի ճերմակ
տարածքով: Մինչև որ
շրշյունը զգեստիդ
հափշտակում է ինձ
իր երազային կոհակներում,
տարուբերում է
և հասցնում կրծքիդ հևոցին կրկին:
Իմ ներշնչանքի թարթիչների վրա
իջնում է հայացքդ,
որպես թիթեռ:
Գարնան տարածքը սուզվում է
ձեռքերիս մեջ,
և կարոտներիս գգվանքի միջից
ճախրում են ճերմակ աղավնիները…

05.01.2019թ.

ԽՈՍՔ՝ ԿՆՈՋԸ

Դու լուսայգից առաջ
աշխարհին շնորհված
լուսայգ ես մի,
որ իր մեջ երազների
փշրանքները ոսկե
հավաքում է ի մի…
Դու Անհունն ես,
օ, կի՛ն,
բայց խավարը գիտի
օրորոցներ քերել,
լուսաբացներ քերել
քո արգանդից բերրի…
Ահա քո շնչից երկինքն է ծիծաղում,
ողկույզի՞ պես քամվում շուրթին կարոտներիդ,
ակոսի մեջ ծիլն է անհայտի պես բուրում,
լցվո՞ւմ բառերի պես:
Ես դիտում եմ հաճախ
օրվա այն պահը, երբ
քո խանդն իր թևերն է տարածում քնքշորեն,
երբ մայթն է լայնանում լռությունից օրվա,
երբ ստվերդ է քաշվում ծալքի մեջ ծնկներիդ…
Եվ բառերն են սկսում շուրթերիդ պես հևալ,
քեզ քեզանից խլում
ու սկսում են լա՛լ
քեզ քեզանով խաբող պատրանքների վրա:

Դու անուրջ ես,
օ՜, կին,
մի հողեղեն անուրջ,
և մնում ես շուրթիս,
որպես դողի անուն…
Շնչիդ լռությունը գիրկ է որբի համար,
փլատակված որբի,
որ ծնկներն է հանում
կորած երազների
ցավոտ սարսուռներից…
Դու կարո՜ղ ես,
օ, կին,
օրորոցվո՜ղ կարոտ,
և քո արյան խորքում հորիզոնն է տնքում
հիմա՛
հայածին,
հայահավաք հույսի
և ուժերը կծկում
քո արգանդի ահեղ հյուլեի՛ մեջ…
Դու անմա՛հ ես,
օ, կին…

*

Աներևույթ
տեղա՛նք է սերս,
իսկ հիշողությունս ոչ թե շարժում է,
ինքնամոտեցման կամուրջ
կամ ե՛զր,
այլ հուշարձա՛նն ու վկան է կյանքիս:

13.01.2019թ.

*

Երբ ես տխրում եմ,
երակներիս միջով հոսում է
արցունքի՛ մոխիր:
Եվ ես իմ շնչի կրակով արթնացնո՛ւմ եմ
առեղծվածային ոգին,
իսկ իմ հոգում բացվո՛ւմ են հայտնության ծաղիկները…

13.01.2019թ.

*

Շուրթերիդ պահը այնպե՛ս է շարժվում,
որ իմ հոգուց բխում է ցո՛ղը երկնքի…

*

Ես քայլում եմ՝
մազերիս պես իմ մտքերը ետ-ետ տալով…
Եվ ստվերս աչքն է թարթում փողոցներում…
Թվում է, թե անունդ տամ-
և կբացվի՛ պատուհանդ…
Ցավոտ շուրթս կարո՛ւտ է դեռ հպումներին…
Ահա ո՛ւր է հասել օրը…
Եվ ձգվում է մի անողոք մենակություն,
որի վրա արեգակն է անգամ… ձյունո՛ւմ…
Եվ աչքերդ, թա՛ց աչքերդ
հավքի նման իջնում են իմ
սրտի ամեն զարկի՛ վրա,
դաջվո՛ւմ, որպես…
մի… վերջակե՛տ…

14.01.2019թ.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճակատս ընթերցում է
լռությունները
հուշերի
և խտանում, որպես կայծակների
շղթա՛:

Ուսերս ընթերցում են
հիշողությունը տարածության
և անցնում սիրո կանչերի միջով,
իրենց զգալով ծաղկած ծառերի
և բուրմունքների շրջապտույտում:

Ոտքերս ընթերցում են խորհուրդը ճանապարհի:
Աչքերս ընթերցում են աստղերը երազների:
Ձեռքերս ընթերցում են կարոտը գգվանքների:
Շուրթերս… չե՛ն ընթերցում… համբուրո՛ւմ են օդը…
և երկինքը լցվո՛ւմ է աղավնիներով…

*

Դու գալիս ես:
Եվ արևի ճառագայթն է կոտորակվո՛ւմ
քո իրանի կոհակներում:
Եվ իմ սիրուց երփներանգված ճանապարհը,
կատվի նման մի փափկամազ,
գգվում է ու զվարճանո՛ւմ
կոհակներում քո քայլվածքի:
Երբեմն էլ ինքնատարված հարդարվո՛ւմ է
քո ստվերի հայելու մեջ:
Եվ կարոտիս շնչառության մեջ հևասպառ
վա՛րդն է բացվում
ու սահում քո կրծքի վրա, որպես գարնան
ցող ու հմա՛յք…
Եվ ստվերիդ հայելին է փշո՛ւր-փշո՛ւր
լինում, երբ քեզ…
գրկում եմ ես
ու համբուրում…

18.01.2019թ.

ԱՆՐՋՈՒՄ ՈՒ ԹԵՎՈՒՄ ԷԻՆՔ ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐՈՎ

Շատ դժվա՜ր էր բառի նավով
մտնել ծովը քո հմայքի,
և ես ստիպված լռության պաղ ջրանցքներով
առաջացա…
Եվ փնջեցի ծաղիկները հովիտների,
մոտենալով
շառավիղին քո գգվանքի:
Եվ բացեցի նուրբ ծրարը քո շշուկի,
ուր հրդեհ էր ամեն բառը…
Ես ըմպեցի
նվագները քո ստվերի,
և երբ հանկարծ… հանդիպեցին մեր աչքերը…
պարանոցդ և շուրթերդ
վաղուց ի վեր
անրջում ու թևռ՜ում էին համբույրներով…

19.01.2019թ.

*

Բառերը սիրահար զույգերի նման
շրջում են՝ իրար թևանցուկ արած.-
կյանքը նրանց մեջ թեև ներդաշնակ է,
իրենց խորքերում կրում են ի վերուստ
սերմը բաժանման…

ՀՈՐԻԶՈՆԻ ՀԱՆԳՐՎԱՆԸ

Կորցրել եմ երբեմն ինձ գիշերներում թարթիչներիդ
և, ի վերջո, գտնելով ինձ խոլ ճախրանքում ծիծեռնակի՝
երկնքի թարմ շունչն եմ փռել ալիքներին քո վարսերի,
և դու շուրթով ըմբոշխնել ես թրթիռները անհայտության,
ամփոփվելո՛վ իմ գրկի մեջ, դարձել կղզին երջանկության:

Եվ երբեմն դու պոկելով շրթունքներդ շուրթիս դողից,
թվացել է, թե իմ ձայնն ու իմ հավա՛տն ես վերադարձնում
և արթնացնում իմ արյան մեջ հրդեհն ոգու ու վարդերի:
Թվացե՞լ է: Ո՛չ: Տենչերիս երկարությունն այնքա՛ն է լոկ,
ինչքան սիրող սրտիդ զա՛րկը…

Եվ կամրջի տակով խոհիս
հորդանալով, անցնո՛ւմ են խոլ ջրերը իմ հիշողության,
և խշշո՛ւմ են ափերիս մեջ տերևները մեր գգվանքի…
Ու չգիտեմ. անդեմ կյանքիս իմա՞ստն էի ես համբուրում,
թե ճախրա՛նքը ծիծեռնակի…

Բայց զգում եմ. իմ շուրթերը անջատվում ու միանում են
քո անունո՛վ… Դեռ երկինքը շփոթվում է աչքերիս մեջ.
ասել է թե՝ նույն սիրահար պատանին եմ,
և երազի վթարներից
ճչո՛ւմ է իմ սիրտը կրկին…
Ես լիապես ըմբռնում եմ, որ շա՛տ վաղուց
կարծես չկամ,
բայց և այնպես՝
մեր համբույրին
հորիզո՛ն է մնում հենված…

21.01.2019թ.

*

Երազի հոգեվարք է
հիմա ամեն բառս:
Ո՞վ է կորզում ինձնից վայրկյաններս չապրած,
մոլոր ոգիների տառապանքը կարծր:
Թե ածխացել են բառերը սիրո,
նրանցից գուցե հարություն առնեն մեր համբույրները:
Ժամանակը, որպես
տառապանքի տեր մի ճանապարհորդ,
ինձ ունենալով՝ ի՞նչ ունի արդյոք:
Օ՜, ապագայի նժարները, սեր իմ,
նորածինների ուսերն են հսկա:
Իսկ իմ շուրթերից սահում է համբույրն ասուպի նման,
լուսավորելով քարանձավները տվայտանքներիս:
Հիմա, չգիտեմ, գրկիս մեջ
ո՞վ է ամփոփվում, ո՞վ է
հարդարում լուսե ձեռքերով
փոթորկված ծովիս ալիքները հորդ:
Գիտեմ, պատրանքս բանտի՜ է նման,
հողի պես լո՛ւռ եմ,
քարի պես հա՛մր,
և կայծակները բնակվո՛ւմ են իմ ոտնահետքերում:

23.01.2019թ.

*

Հավատի աչքերը
լցվում են արցունքներո՞վ,
թե… թիթեռներով:
Հավատի աչքերից
թևում են երազները,
և արցո՞ւնքն է փայլում
թևերին թիթեռների:

26.01.2019թ.

*

Եվ պարանոցդ սարսռալով իմ հպումից՝ նվաղում է
թփրտումով ծիծեռնակի,
բուրո՞ւմ ցողոտ երկինքներով մանուշակի:

04.02.2019թ.

*

Դեմքիս ցավի պես հետքերն են եռում
Մի անլուսամուտ անորոշության:
Լցվել է հոգուս լուսազուրկ հեռուն
Աչքերիդ տխուր հյուրընկալությա՛մբ:
Տանջանքի ձայնը հեռո՞ւ է ու խուլ:
Ցավը լռում է հիշատակի՞ պես:
Քաղցր է շշուկդ, գգվանքդ՝ տխո՞ւր:
Դեռ դյութո՞ւմ է մեզ մի մսե պատրանք:
Եվ մեր երազի երկի՞նքն է իշխում
Անորոշության անդունդի վրա:

ՀԱՄԲՈՒՅՐԻ ՎԱՐԴԸ

Համբույրի վարդ է քո անունը, սեր իմ:
Քո անվան տառերն
իրար միանում
և հեռանում են
ոգու ափերից նավակների՞ պես.
հեռանում, կրկին
վերադառնում են,
երբ համբուրում եմ երազները քո,
պատրանքները քո բուրող շուրթերի…
Դու չես նկատում,
որ իմ խոսքերն են զատվում լռության
հալվող բաբախից:
Դու նայում ես ինձ:
Եվ չես տեսնում ինձ,
այլ համբուրում ես քո անվան բուրող,
ալ թերթիկները…
Համբույրի վարդը…

28.01.2019թ.

*

Եվ մեկուսարանը բախտի՝
սիրո ապաստարան:
Բառը լռության դուռն է:
Եվ ճակատագրի ափից
ջուր է խմում ճանապարհս,
հետո փաթաթվելով քո ոտքերին,
ծաղկում է բաղեղի պես:

05.02.2019թ.

*

Քո գիրկը, սեր իմ, շարունակվում է
սոսափով ծառի,
անունդ՝ բուրող թերթերով վարդի.
շարունակվում է ժպիտդ լույսով այգաբացի,
քայլքդ՝ աստղասյուն շառափով անձրևի…
Սեր իմ, համբուրում եմ ես քո լռությունը
տաք թևերով բառի,
իսկ դու ցնցվում ես.
քեզ թվում է, թե գարնան երազն է
ծաղկաշշուկով հասնում ռունգերիդ…

09.02.2019թ.

ԱՆԾԱՆՈԹՈՒՅԻՆ

Քո զգեստն է շրշում ստվերներով թախծի,
քո զգեստը՝ գերո՛ղ մի վարագույր,
որի բացվել-փակվելու անակնկա՛լն ես օրորում
դու քո քայլքով:

Քո զգեստը, որ հյուսո՛ւմ է մի այգահամ հեքիաթ
և փողոցը լցնում բուրմունքներով ծաղկի…
Որպես գգվանքների անհա՛ս շտեմարան,
անցնում ես փողոցով՝
տանելով քո հայացքում ցոլքե՛րն Առեղծվածի:

06.02.2019թ.

*

Մենք կհանդիպենք,
քանզի չես սպառել շուրթերիդ առեղծվածը.
սարսուռը մեզ կփոխանցի անհայտ կրակին,
կրակը՝ բույրին,
իսկ բույրն՝ արբունքի՛ն…
Հետո ամբողջությունդ
տարրալուծվելով գգվանքներիս մեջ,
ի մի կբերվի շուրթերիս վրա,
այրող հայացքում
և քեզ փայփայող տաք ձեռքերիս մեջ…

06.02.2019թ.

*

Այն բառերը, որոնց շաղոտ շվաքի տակ
մերթ մերկանում էինք, մերթ էլ հագնում պես-պես
եղանակներ, բույրեր, միջօրեներ անթագ,
միթե՞ իրենց լուսե արգանդներն են պղծել:

Միթե՞ բոլոր-բոլոր այդ բառերի կորիզը
արցունք բառի մեջ էր ի սկզբանե դրված
և ոչ մի սիրահար համբույրներով կիզուն
չի ճեղքել այն երբևէ՝ թեկո՛ւզ զոհաբերմամբ:

Կապար լռության մեջ խճճվել եմ հիմա
ճակատագրի չա՛փ իմ մայր լեռնաշխարհի,
և այն ցոլքը, որով նախնիներս ելան
մեր խոհերի, մտքի անդեմ քարանձավից,
ցոլք, որ հետո դարձավ հորիզոնների ծիր,
միթե՞ կփշրվի քո կորստով, ի՜մ սեր,-
այս հարցերն են ճնշում ինձ, որպես շղթաներ,
և արյո՛ւն է կաթում աչքից առեղծվածի…

Միթե՞ բոլոր-բոլոր այդ բառերի կորիզը
արցունք բառի մեջ էր ի սկզբանե դրված
և ոչ մի սիրահար համբույրներով կիզուն
չի ճեղքել այն երբևէ՝ թեկո՛ւզ զոհաբերմամբ:

*

Խրամատը՝ հողում խրված մի տավիղ,
որի վրա նվագողը՝
քամին է թափառական…
Օրը թնգթնգում է, ինչպես տեսիլադեմ
այն աղջիկը, որի
սրունքաբաց ստվերի մոտ
նստել է վիրավորը,
կողքին՝ ինքնաձիգն է,
որի կարմիր փողը ճակատագրի ա՛չքն է:

11.02.2019թ.

*

Դու ծրարում ես շունչս շնչիդ մեջ,
հղում աստղերին, որպես լույս անշեջ,
և տիեզերքում ամեն մի հյուլե
մեր համբույրներով կշռո՛ւմ է իրեն…
Ինքնաճանաչման սահմանը հատում,
հաղորդակցվում է ոգուն Անհայտի:
Սեր իմ, կարոտս աչքեր է անթարթ,
իսկ մաշկդ՝ այրող կրա՛կը վարդի:

22.02.2019թ.

*

Քո աչքերը օրորոցներ չեն հուշերի,
ոչ էլ միտքս հլու ձեռք է՝ որ օրորի,
ա՜խ, իմ միտքը առաջվա պես վրան է մի,
որ ուռչում է հմայքներդ գաղտնիքելուց:
Քո տաք մարմնին բողբոջում է առաջվա պես,
առաջվա՛ պես բողբոջում է իմ հպումը,
հետո թաքուն ծրարվում է հայացքիդ մեջ,
առաջվա պես լույսի դռ՜ղ է մաշկդ, իմ սեր:
Հանկարծ դժգոհ մի ալիքը քո վարսերի
թե շշուկի. «Առաջվա՛ պես սիրիր մի քիչ»,
«առաջվա՛ պես»,- թե մատներդ ճառագայթեն,
հպումներս կակաչների պես կթափեն
թերթիկները քո ուսերին,
ուր մատներիս հետքը ճի՛չ է…
Իսկ իմ ձայնը… վերելակ է,
որով հիմա (և ողջ կյանքում) բարձրանում ես,
բարձրանում ես՝ համոզվելո՜վ,
որ աչքերդ օրորոցներ չեն հուշերի,
ո՛չ էլ միտքս հլու ձեռք է՝ որ օրորի…

*

Անունդ, սիրելիս,
բուրո՛ղ տարածություն,
ուր ես ապրում եմ և գրում բանաստեղծություն:
Հմայքիդ սահմանները հատում է մի թռչուն.
նա իմ Մուսան է,
որ իր թևերով ընդարձակո՛ւմ է տենչը ապրելու:
Իսկ երբ մերկանում ես,
ճրագներիդ լույսը ընդարձակում է
սահմանները քո հմայքի.
հետքերս աղոթում են
քո շնչառության ալիքների վրա
և ելնում մարմնիդ ճառագայթն ի՛ վեր…

25.02.2019թ.

*

Ձայնս լցվում է փեթակի՜ նման:
Եվ մեղուների պարսերի հանգույն
նրա փոքր ու մեծ արձագանքները
հավաքվում են քո զգեստի զգլխիչ
շրշյունի՜ շուրջը:
Երակներիս մեջ գիշերում է դեռ
լուսինն իմ ոգու,
որն արթնանում է այն պահին, սեր իմ,
երբ մեր շուրթերը մոտենում իրար,
լուսավորո՛ւմ են խորքերը հոգու:
Ձայնս լցվում է համբույրո՛վ լույսի:
Եվ ճանապարհն իմ աչքերի միջով
գգվո՛ւմ է մաշկիդ արշալույսները.
և ծաղիկներն իմ հայացքի միջով
համբուրո՛ւմ են քո հևոցները տաք
ու սփռում տենչի բացատի վրա:
Եվ խոտերը մեր շնչառությունից
աստղեր են պոկում
ու երջանկանում…
Եվ մենք ապրում ենք
երջանկությա՛ն մեջ խոտի ու ծաղկի…

06.03.2019թ.

*

Նստարանը՝ գգվանքների շտեմարան,
որտեղ օրերը կայանո՛ւմ էին
կրակի ուրույն գալարումներով:
Այստե՛ղ էր, որ դու համբուրում օդը,
հեռագի՛ր էիր հղում… աստղերին:
Այստեղ… շուրթերդ՝ թևեր թիթեռի,
որոնք պտտվում լապտերի շուրջը
ոգու ու արյան,
հավաքո՛ւմ էին աստեղափոշին…
Եվ մեզ գտնում էր մի անակնկալ
ու արբշիռ… գարուն,
որ քո զգեստի ծաղկապատկերից
հանում էր բույրե՛ր, երազնե՛ր, հույսե՛ր,
փռում սիրահար հայացքի՛ս վրա…

Հիմա ծխում եմ հուշն իմ արևկա
և ըմբռնում, որ
քո ապրած ամեն վայրկյանում ես կա՛մ…
Դիմագծերդ մոմերի նման
վառվում խորանում իմ հիշողության,
լուսավորո՛ւմ են ուղին ճամփորդիս:

08.03.2019թ,

ՄԱՏՆԱՀԵՏՔՍ՝ ՍՏՎԵՐԻ ՄԵՋ

Մատնահետքս՝ ստվերի մեջ
արթնացող բարո՛ւր:
Լուսաբացի ճի՛չ:
Բառը, որպես վարդ,
բուրում է ծաղկամանում
հորիզոնի…
Նկարում եմ
ոգին տարածության
մաշկագծերիդ լուսանցքներում,
և ծնկներդ միանո՛ւմ են
կրակով իմ ձեռքերի:
Համբույրը, որպես բառ,
թևավո՛ր երկինք է,
որի առանցքը-
աղոթքի լո՛ւյսն է:

01.02.2019թ.

*

Օտարակա՞ն եմ ես
սենյակում զգացմունքներիս:
Մի հենարան
եմ որոնում
սահանքներում ժամանակի:
Կյանքս անցնում է իմ կողքով,
ցնցելով ակունքն իմ հիշողության:
Անցնում
եմ տարածքը բառերի,
նստում քարին լռության…
Ինքս ինձ դիտում եմ
կողքից. կարծես
կինոնկարի կադրե՞ր են
օրերը…
Հիշողության խաչմերուկում
ես տեսնո՞ւմ եմ ինձ.
ուսերս երջանկության
երևացող մա՞սն են,
ձեռքերս ստվերներ են,
որ գգվանքից դուրս
թփրտո՞ւմ են, ինչպես
ափ նետված ձկներ…
Ինձ խոցոտում են
ստվերները քո բացակայության…
Ստվերիդ կանաչ հայելում
ե՞ս եմ, թե իմ
անդրադարձը՝
քո բարձի վրա…
գգվի՛ր ինձ շնչիդ կոկոն վարդերով…

04.01.2019թ.

*

Սեր իմ, պատա՞նդ է մեր համբույրներում
այս ժամանակը:
Եվ ճանապարհի դեմքն է բացահայտվում
ջրերում հույզերի:
Անհայտի գնդակով
սպանվել է երեկոն:
Ո՞վ է չրթում հիմա մտքերն Անհունի,
որպես սերմերը արևածաղկի:
Մի մրջյուն սպանված մեր երեկոյի
դին է քարշ տալիս:
Ինչքան իրար մեջ ենք,
այնքան էլ, սեր իմ,
իրարից դո՛ւրս ենք:
Հիշողության գնդակով սպանվե՛լ է…
Հորիզոնը:

06.07.2019թ.

*

Սերը դեռ չծնված՝ վերածվում է ցավի՛,
մութը խտանում է՝ դեռ չծագած լույսը,
միտքը չիրողացած՝ ժամանակից դուրս է,
և պահը չայցելած՝ մասնի՛կն է անցյալի:

26.03.2019թ.

ԵՎ ԼՈՒՅՍ Է ԵԼՆՈՒՄ
ԵՐԱԿԻՑ ՑԱՎԻ

Պատմության հանգույցն երբեմն պայթում է, ինչպես մոռացվա՛ծ ական: Հողից բխում է ծյուղն Անսահմանի: Եվ լո՛ւյս է ելնում երակից ցավի: Լո՛ւյսն հիշողության:

ՀԵՏԱԳԻԾ

Ճակատագրի ոստայնում թփրտում է իմ ապագան,
և իմ խորքից ելնում է առավոտը տողի:

Կենդանի հավատը շրջանակից դուրս է:

Որտեղ բառերն անգամ բացակա՛ են,
գործում է նրանց հրեղեն ոգին:

Աստղը հասնում է պատկերին ոգու՝
ներքին ճառագումին տարածության:

Բառի ճանապարհ է գիրը Արամորդու:
Ներշնչանքից բարձրանում է ճակատն հորիզոնի,
ուր համբույրս դեմքն է տողի
և ասուպը ժամանակի:

Ակոսի մեջ նետում եմ իմ դեմքը՝
սերը Անհունի:

Եվ ցավի բիբերում ծնվող արշալույս է
հիշողությունը տառի:

Տարերքի վարդը:

16.04.2019թ.

*

Արարվում է մի նոր Սկիզբ
ոտնահետքերում հիշողության:
Եվ իմ ցավից շատրվանում է
լուսայգը խոսքի:
Քիչ անց՝ հենվելով
սյունին անհայտության,
ըմբռնում եմ խորհուրդը կյանքի:
Տիեզերական ելք է
այսուհետ իմ բառը:
Խղճի լապտերով
լուսավորում եմ ճանապարհը Ոգու:
Անցնելով եզրով անդունդի,
շարժվում եմ դեպի երկինքը Հույսի:
Ցավի երկունքից
ծնվում է մի տող,
և ապագայի ճիչով
բացահայտվում է դեմքը Անհայտի:
Եվ իմ ողջույնը
պատանդ ժամանակի ոտնահետքերում
բուսնող ծաղիկ է:

24.12.2018թ.

*

Զանգի լեզվակ է հիշողությունը,
որից բռնած՝ զանգահարում է
այս պատանին.
և բոցավառվող սահանքներից ոգու
վեր են խոյանում լեռնապարերն արյան,
և ազատության պատյանից հանվող ճանապարհը
Թուր-Կայծակին է…

12.01.2019թ.

*

Սեղմում եմ
ձեռքը հուշի և փաթաթվում
երկնքով հորովելի:
Հորս դեմքը
ծաղկած ծառի պես
բարձրանում է
երկինքն ի վեր…

12.01.2019թ.

ԾՆՈՒՆԴ

Երկնքի ճառագայթը
համբույրի՞ պես անցնում է
բառերի շնչառության միջով
և բացում սրահները Ոգու:
Ծնվող տողի դեմքը
ելնո՞ւմ է ցողունն ի վեր լուսաբացի:

12.01.2019թ.

ՀԱՅՐԵՆԻՔ

Քո՞նն է իմ ձայնը՝ քավարան խղճի,
լռությունս, որ նահատակների խո՞սքն է մրրկված…
Քո կորուստների քարե կոպի տակ շարժվող ա՛սքն եմ ես…
Ոտից գլուխ քո շնչառությո՞ւնն եմ,
քո՞նն են ձեռքերս՝ ընդվզում ոսկրե,
շուրթերս՝ կամքի աղեղներ պրկված,
և իմ տողը, որ… շեմն է Անհայտի:

04.02.2019թ.

ՔՈԼԱՏԱԿ

Գյուղն իր խաղաղ աչքն է թարթում
մերթ կամրջով մեր հյուրահոտ,
մերթ՝ դաշտերով կոտորակված…
Կայծակները իրար գրկում խայտո՛ւմ են դեռ,
ինչպես ձկներն ակվարիումի…
Իսկ արևից շիկակարմիր հորիզոնը
ճակա՛տն է իմ նախապապի:

11.02.2019թ.

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Դեմքդ՝ աստղային ակունքից բխող հիշատակի հողմ,
տողերիդ միջից ժայթքող արև է հավատամքը քո,
իսկ ակոսներում հունդերդ պիտի դառնային երազ
և լուսաբացով համբուրեին վեհ ճակատն հայության:

Վիրավոր սիրտդ վրեժի կոչ է և բռունցք հույսի,
իսկ տառապանքդ ջա՛հ է պայքարի, ուղեցույց ոգու,
կարմիր մրմուռով լցվեցին աչքերն անսահմանության,
և լռության խոլ ոռնոցը լսվեց խորքից Անհունի:

Քո ճանապարհը երկփեղկվեց, ինչպես արնահոս երակ,
հետո մագլցեց կարմիր երազդ հորիզոնն ի՜ վեր…
Թեև խոցում էր բիրտ նիզակներով քաոսն ահարկու,
բայց ներշնչանքի մոխրից ազատվեց ակո՜սը տողիդ:

Դու կաս, որպես լույս և որպես խորան հաղորդակցության,
տողերդ ցավի վառվող ճրա՛գ են խավարում դարի,
դու սիրո ճա՛յնն ես, հավատի ե՛լքն ես, օազիս խղճի,
և հանճարը քո ո՛չ սահման ունի և ո՛չ էլ վախճան:

15.01.2019թ.,
23.09.2019թ.

ԱՆԴԻԻ ՃՅՈՒՂԸ

Երկինքը
թե փորձի հենվել մի անգամ
աղոթողների ձեռքերի վրա-
չի՞ փլվի արդյոք:
Մեղա՛, մեղա՛, մեղա՛…
Ես ոտից գլուխ՝
հավատի խորան:
Ես տեսնում եմ
էջերով Սուրբ գրքի
և հատում սահմանը
ճանաչողության:
Կարմիր խիղճ է
և լույս՝ իմ սերը,
որից բխում է
ճյուղը Անդիի:

27.11.2018թ.

ՈՒՄ ԹԻՐԱԽՆ ԵՄ ԵՍ

1
Եվ Անհայտի խոռոչում սև՝
միայն մի խոց-
մի կետ ցավի:
Ո՞ւմ թիրախն եմ ես,
երբ առաջնորդում է ինձ
խորհո՛ւրդը Աստղի:

2
Հողը նախասկի՛զբն է,
ռիթմը Անհունի:
Եվ նոր ոգիներ են
ծնվում բառարանի
տաք լուսանցքներում:
Եվ բառերից, ինչպես
կախաղանից կախված՝
օրորվո՛ւմ է հուշը՝
լույսը խաղաղության:
Եվ արյան կաթիլները՝
հայելիներ հոգու:

05.02.2018թ.

ՏՈՆԱԾԱՌԸ

Տոնածառը
հավաքվում է մաս առ մաս՝
փրկելո՛վ մի ծառի կյանք
անտառում:
Նույնը կարող ենք անել
և առաջնագծում՝
ապահովելով տեխնիկական
հագեցվածություն.-
այս անգամ զգայուն թիրախում
զինվո՛րը չէ,
առաջնագծում
սպանվողն այսուհետ՝
պատերա՛զմն է:

ՀԻՇԱՏԱԿԻ ՊՏՏԱՀՈՂՄԸ

Կյանքը
շրջանակից դուրս - երջանկություն է,
որին հասնում ենք՝ հաղթահարելով
բարձունքները եսի:
Ոտիդ տակ
մասնատվում է աշխարհը
տերևի: Ծողը,
որպես մարգարիտ,
շողում է մատին Անհայտի:
Քարի շուրթով ըմպում է ինձ
ելևէջը անմահության:
Անցյալի ակնախոռոչից
ելնում է օրը,
որպես ողջույնը Ապագայի:
Իմ հետքերից բուսնող վարդը
իմ անունն է,
որ բուրում է անցյալի և
ներկայի միջև,
և ներգործող ժամանակն է
նկարագիրը տողի:
Եվ անդրժամանակի կեղևի տակ
կայանում է
իմ դեմքը,
որպես
պտտահողմը Հիշատակի:

29.12.2018թ.

*

Ցավիս երկնակամարում ղողանջ՛ում են աստղերը:
Եվ թռչունների բիբերը կարկտահարում են
տանիքը մարդկության հույսերի:
Եվ թևավոր ճիչերով լցվո՛ւմ են շարունակ
միջանցքները ճակատագրի:
Մի դուռ է բացվում
դեպի փրկության լաբիրինթոսը:
Գո՛րշ են
դռները հիշողության ու տենդի:
Հորիզոնն ի վեր
ճախրո՛ւմ են ստվերները մեղքերի:
Եվ թռչնագրիպի թափորը դեպի ա՛րևն է տանում
դիակն հորիզոնի:

30.12.2018թ.

*

Մահվան ստվերը ուսերից Արարատի
հրվո՛ւմ է անընդհատ
թարթիչներով լույսի:
Հողը ներծծում է փոթորիկնե՛ր թախծի:
Հողը արթնանում է տարերքից ոգու:
Եվ խոհերիս մամռապատ ու խոլ ժայռածերպից
ցատկում են երազները
ու ճողփում Վանա լճի ջրերում:

07.01.2019թ.

*

Ես չէի կարող
իմ արմատների տառապանքներին
մնալ անհաղորդ:
Պիտի խրվեի
սերմի պես այն ակոսների մեջ,
որ փակվել էին ծալքերում հուշի,
ամլացել էին՝
պտղելով արցունք,
քարացել էին
լքված… ասքի պես.
պիտի խրվեի
ու թրթռայի
արշալույսների երգող գույներով,
եկող օրերի պտղաջրերով
օծելով կարմիր այն պատրանքները,
որ հող են դարձել:
Ու ես խրվեցի
հողում դեգերող ձայներում
այնպես,
որ անզուսպ հողը պայթեց
աղբյուրով
ու հովացրեց իմ պատրանքները:
Ձայնս թրթռաց կորստիդ ծալքում
ու պղնձացավ: Մտքիս շեղբերը
խրվեցին ոգու հորիզոնի մեջ
ու ցոլցլացին
տառապանքներիս լուսե եզրերով…

ՎԱՐՔ ՏԱԳՆԱՊԻ

Ժամանակի անդունդի վրայով
անցնում է իմ էության մի մասը,
մյուս մասը
դառնում է անդունդին կեր:
Ժամանակի անդունդը լցվում է
արյանս աղաղակո՛վ:
Դատարկվում են ոչ միայն էջերը կյանքի,
այլև մտքերը,
որոնք խարտվում են առօրյայի ձեռքով:
Դատարկվում են ոչ միայն բառերը,
այլև գույները,
որոնք միանալով, ամրապնդում են
Գորշի իշխանությունը:
Ահա մտքերի փշալարերը,
աքցանները ոգու,
որոնցով հյուսում են պաստառները վախի
և աքսորո՛ւմ կյանքի հիշողությունը:
Եվ ես իմ ձայնից հեռանում եմ, որպես
մի աքսորական: Աքսո՛ր է դա, ավա՜ղ,
բիբլիական լեզվի՛ց: Աքսո՛ր է դա, անշո՛ւշտ,
պատմության հունի՛ց:
Աքսո՛ր՝
մտքերի՛ց, խոհերի՛ց ու… սիրո՛ւց:
Լույսի և խավարի միջև
ագահաբար լիզո՛ւմ եմ երազներս աղի,
կշիռները արյան
ու շեղբերը հույսի…
Եվ հանելով հողից արմատներս, որպես
կարմրավառ սրեր
զիգզագո՛ւմ եմ օդում վարքն իմ տագնապի
և արշավում
հորիզոնի միջով Ոգու և Բառի…

11.01.2019թ.

ՆԿԱՐԻՉ ԱՌՆՈԼԴ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ

Երաժշտությամբ արթնացող լո՛ւյս են
գույներդ կյանքի ակունքների մեջ,
դու նկարում ես առեղծվածն հոգու
և բացահայտո՛ւմ ընթացքը տենչի:
Օրը կտավ է՝ կախված քո դիմաց:
Արևի շողերն, ինչպես վրձիններ,
զիգզագո՛ւմ են քո վարպետ ձեռքերում:
Գիտե՛ս, որ ձյունի դյուրահալ շերտ չեն
համառությունն ու պայքարը նյութի:
Ստրկության գիծը քերում ես ապա
և բացում ոգուդ դռնե՛րը բոլոր…
Բայց մնում է մի շրջանակ՝ կախված
լանջերից Քիրսի: Դա քո ձգտո՛ւմն է,
ճակատագի՛րն ու… կտա՛վը վաղվա:

18.01.2019թ.

ՊԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄ

Թե ուզում ես չափել խորհուրդը պահի,
ըմպի՛ր գիշերը,
որպես դառը սուրճ:
Չե՞ս կարող: Ինձ պես
հպիր ճակատդ սառը ապակուն:
Դու հո սնդի՞կ չես,
պատուհանդ էլ հո ջերմաչա՛փ չէ,
որով կարողանաս չափել ջերմությունը
երկրի: Ահա և օրը.
հավաքարարն այնտեղ
ավլում է շեղջը կրքերի,
ապա հավաքում կույտը անցաթղթերի,
ցիրուցա՛ն անում
պտտահողմ-ոգին քաղաքական փոշու:
Դո՛ւ էլ նրա պես
կարող ես ավլել քո տագնապները,
ցիրուցան անել
շե՞ղջը տխրության:
Չե՞ս կարող: Ինձ պես
հպիր ճակատդ սառը ապակուն
կամ խմիր սուրճդ՝
որպես գիշե՞րը հիշատակների…
Այլապես հսկա այն Ցախավելը,
որ կայսերական ծագում ունի լոկ,
կավլի՛, կտանի՛ քաղաքներ, գյուղեր
և հորիզոններ երազանքների…
Սակայն հաստատուն կմնան երկու բան՝
խո՛սքը պոետի,
ոգին ժողովրդի:

11.01.2019թ.

ՀՅՈՒՍՎՈՒՄ Է ԵՐԿԻՆՔԸ ՄԵՐ ԿՈՐՈՒՍՅԱԼ ՍԻՐՈ

*

Երբ խոսքի հետագիծն է կախվել ծյուղերից ծառի
և կյանքի հատակին դաջվել է ստվերը
դատարկ օրորոցի, կա մի ճանապարհ՝
սարդոստայնի միջով դեպի լո՛ւյսը ձգվող,
կա մի ճանապարհ՝ փրկությո՛ւնը խղճով:

*

Քաոսի երախում… մի թեժ թոնրատուն,
որի պատերից պոկված ծիածանը
հա՜ց է հոգևոր:

*

Ներսը և դուրսը՝ թռչող արծվի թևեր.
ճախրում են ոգու սահմանի՛ վրա,
հյուսո՛ւմ երկինքը մեր կորուսյալ Սիրո:

17.01.2019թ.

*

Հորիզոնի կտավին նկարում է
մի ձեռք:
Որպես
երկնային հիշատակարան՝
թերթվո՛ւմ է ոգին:
Մի բառ
ճանապարհորդում է ներկայի միջով:
Մի այլ բառ…
շեմն է հավատի…

13.01.2019թ.

*

Պատմության հանգույցն երբեմն պայթում է,
ինչպես մոռացվա՛ծ ական: Հողից բխում է
ձյուղն Անսահմանի: Եվ լո՛ւյս է ելնում
երակից ցավի: Լո՛ւյսն հիշողության:

16.01.2019թ.

*

Եվ արթնանում են դարավոր նիրհից
բառերի շունչն ու երազանքները,
և լռությունն է սկսում խոսել
իրերի ուրույն ընկալումներում:
Եվ լռություն կա, որ իր տարերքով
կարո՛ղ է ճեղքել կայծքարը բառի,
կա ոգու հրդեհ, որ համբուրո՛ւմ է
արշալույսներով ճակատն Անհայտի:

17.01.2019թ.

ԿԱՐԿԱՏԱՆԻ ՏԱԿ

Եվ ես հասկացա.
հնարավոր չէ կարկատել երբեք տարածությունը,
ինչպես քարտեզն են կարկատում այսօր.
հնարավոր չէ բաժանել ոգին իր ակունքներից՝
երազ ու տենչից:
Եվ մեր նախնական լռությունն, անշուշտ,
կարող է դառնալ ինքնաօտարման
բևեռ անանուն…
Ինչ գողացվել է
մեր երակների գանձարաններից,
վարքից մեր արյան,
վերադարձվում է
մեր բիբլիական նկարագրին,
այն, ինչ մեր դեմքն է,
ոգին և ոճը,
վերադարձվում է մեր արմատներին,
պատմության հենքին…
Վերադարձվում է ռիթմին ներկայի
հայ ոգու գիրը,
թե՞ պարփակվում է… գորշ անգղների
կարկատանի՛ տակ:

23.01.2019թ.

*

Թռչունն իր թևերին
տանում է բաբախող շունչը հորովելի:
Եվ իմաստի սահմանները հատում, անցնում է
ոգին հիշողության:

24.01.2019թ.

*

Իսկ խոհերիս ծյուների մեջ մակարդվում է
տաք արյունը առեղծվածի
ու դառնում… կակաչ:

25.01.2019թ.

*

Միամիտ են նրանք,
ովքեր պատմության ընթացքն են թամբում,
մոռացության մեխով
պայտում դարերդ,
ովքեր հիշողության սյուներն են թաղում
Արարատի ծյուների տակ:
Միամիտ են, այո՛,
և ողորմելի-
չէ որ անհնար է
մեզ անջատել մեզնից…

Մի քարանուն երկիր
ոգու մեջ խորանում
և ջահեր է վառում խորանում երկնքի:

25.01.2019թ.

*

Ճանապարհների երակների միջով
հոսում են բիբերը թռչունների,
հոսում են թևերը թռչունների
և հոսում են երկինքները
ճանապարհների երակների միջով:

Ճանապարհների հիշողության մեջ
մի աստղ ինձ է փնտրում շարունակ
մի երազ ինձ է փնտրում շարունակ
մի աշխարհ ի՜նձ է փնտրում շարունակ
ճանապարհների հիշողության մեջ:

Ճանապարհների թևահարումով
հասնում եմ աստղին ու առաջ անցնում,
քարից հանում եմ դեմքը Անհունի,
ինքս իմ դարից բարձրանո՜ւմ եմ վեր
ճանապարհների թևահարումով:

26.01.2019թ.

ԱՂՈԹՔ

Ո՞վ է շնչում իմ հուշերի թիկունքում, Տեր,
և քո որդու հո՛ւյսը վառում
Անսահմանի կոպերի տակ:

Դու իմ բախտի նժարներից մի բուռ խավար
վերցրո՛ւ, Տեր,
որ չլինի իմ տանջանքը խավարամած:
Թո՛ղ իմ շունչը անդունդների շուրթին մնա,
բայց ոչ այնքան երկար,
որ քո… Շնչից զատվի…
Բախտի քանի՛ եզր մնաց
անդունդների միջև,
որ քո
միացնող ձեռքերի՛ն են սպասում
հիմա՛…

Ո՜ւժ տուր, Տեր իմ,
և ուղղիր ընթացքն իմ երկրային,
խաչքարի լույսով թող սրբագործվի
իմ դիմագիծը,
թո՛ղ միշտ անաղարտ ու վսեմ պահի
աղբյուրը լեզվիս,
ոգուս պարիսպը ամրանա Քեզնով,
և հավատի մեջ ես ամբողջանա՛մ…

27.01.2019թ.

*

Ունայնության առանցքից թևում են ծիծեռնակները:
Եվ բները երկինքն ի վեր սլացող լո՛ւյս են:
Իսկ տողս
շնչում ու ապրում է
երկնքո՛վ Անհայտի:
Իմ և իմ միջև կուռքի անկո՛ւմ Է և դիմակազուրկ
իրականություն:
Ինձնից դուրս… աշխարհն առաձգական չէ,
մեկուսարան չեն ինձնից դուրս ապրող բառերը.
նրանք պարզապես հանգրվա՛ն են աստղի:
Իսկ լռությունս
մի մեղրահաց է,
որից կաթո՛ւմ են
ոգին ու ավյունը ճանապարհներիս:

03.02.209թ.

*

Եվ իջել է հիմա մառախուղը հուշի,
դարձել առաստաղ…
Թեև մեծացա
շղթաներից կորզված մի ազատությամբ,
թեև քայլում եմ
շնչառության միջով ցավի ու առեղծվածի,
բայց ծիածանի գույները հոսում են դարձյալ
մտքերիս միջով,
երբ հանդիպո՛ւմ եմ
զով քամիներին իմ մանկության:

04.02.2019թ.

ԶՈՀԱՍԵՂԱՆ

Վարանումները կանչում են մեզ
բոլոր կողմերից,
ծերպերից բոլոր,
որպես ստրկության բնակարաններ,
որոնց դռները բացում ենք դարձյալ
ծեսով տոնական…
Օ՜, ժամանակը իր բարձունքներից,
տես, խղճում է մեզ,
նաև՝ ինքն իրեն,
որ հարկ է լինում երբեմն անցնել
մեր երակների դժոխքի միջով,
իբրև բնության կողմից արհամարհված
ամուլ վայրերով,
ուր թե ապրում են՝
ոչնչի համար,
թե հառաչում են՝
անգործության խիտ ճարպերից միայն,
թե խիզախում են,
ապա ծածկվում են խարխափանքների
մի նոր թաղանթով
և ավելի են ապահով զգում
հագուստներում այդ խոնարհումների.
ուր երազելը համարվում է մի անսովոր արարք,
և սովորական՝ զոհի արյունը
և եկեղեցու գմբեթ փլելը

կամ խաչքարերով
ճանապարհների տեսողությունը խճապատելը…
Ծամնըր է մեր ուղին.-
Օ, արժանի ենք մենք այս արտառոց ճակատագրին,
քանզի տանում ենք
մեր ներսում ճորտի դիակ շարունակ,
որի նեխահոտն արդեն բռնել է
աշխարհը արար,
իսկ մենք տանում ենք, տանում ենք, տանո՜ւմ…
վարանումների զոհասեղանին
դնելու լույսը,
որերո՜րդ անգամ գլխատվող լույսը…

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Եվ հիշատակի քարաժայռից բուսած ծաղիկ է
խոհը լեռնապարի:
Տե՛ս, հորովելի մեջ փաթաթված հորիզոնը
Գաբո Ապե՛րն է,
որն այբուբենի գույն-գույն ծաղիկնե՛րն է ցանում
անդունդի մեջ խղճի.-
և քարերի հիշողության ժամանակն է բխում,
որպես աղբյո՛ւր:

10.02.2019թ.

*

Մոռացության փոշին ճեղքող հետքերս,
արշալույսներ են,
որոնք աշխարհում սկզբնավորում են
տվայտանքներիս նոր եղանակը՝
տարերքիս վարդը:

13.02.2019թ.

*

Եվ իմ մանկությունը վազում է լռության
թիթեռի ետևից
ու բռնում արահետի ոգին,
որպես գնդակ:
Եվ խաղում է ինքնամոռաց՝
օրը գնդակի պես գլորելով
հորիզոնն ի վար…

05.03.2019թ.

*

Չարենցի տողերը
հալեցնում են ձմեռը սահմանագծերի
և դարձնում կյանքը
անսահմանության ամա՛ռ,
և տողերն ասուպի պես
թևում են վերքերից տիեզերքի,
օրհնությա՛ն պես իջնում
մեր կյանքի բոլոր դռների վրա:

03.02.2019թ.

*

Ոտնահետքերիս կայծակից բռնկվում են
հիշողությունների անտառները խիտ:
Եվ խաչքարաէջ պատմությունն հայոց
առնում ինձ զորեղ ձեռքերի մեջ
ու փայփայում է,
որպես բռնկվող նշա՛ն այգաբացի:

24.12.2018թ.

*

Համբուրում եմ
քարերը. ասես
պոկո՛ւմ եմ ծաղիկները լույսի
և ընկղմում արյանս հոսքի մեջ բիբլիական:
Հարվածների միջև ճզմվող ներկան
իմ ճակա՛տն է,
ուր հույսի մի տող է գրում
ծիծեռնակն իր թռիչքներով:

30.12.2018թ.

*

Լռության մահճակալին պառկել է ստվերս
ու հանգստանում է:
Եվ հետքերս իրենց աչքերն են թարթում
բարձունքից անցյալի:
Եվ արևի հյութով լցվում են
ճյուղերը մտքերիս
ու բառերի միջով հորդում, որպես արշալո՛ւյս:

31.12.2018թ.

*

Անտանելի՛ է,
երբ մարդն իր առջև կանգնում է, որպես
հավելվա՛ծ կյանքի:
Սարսափելի է,
երբ մարդու համար բե՛ռ է երազը,
բեռ է հայա՛ցքը և ինքնությո՛ւնը:

02.01.2019թ.

*

Օրերն
իջնում են թևերից հրեշտակի
և բոցավառում ծաղիկները
տարերքո՛վ գարնան:
Պատերազմ
է: Ծաղկո՛ւմ է
ոսկորը զոհի:
Եվ հայացքն այրվում է,
ինչպես մո՛մ:
Եվ աղո՛թք է բարձրանում
երկինքն ի վեր:

04.01.2019թ.

*

Ծնկաչոք հայացք են փակագծերը,
որոնք թե բացվեն ինչ-որ հնարքով,
մեղքից կծորա՜ գիշերը զղջման,
և տողը, որպես մոմ պատարագի,
կվառվի՜ ափում հաղորդակցության…

*

Ծաղիկների շնչից
մանուկների հետքերն աշխույժ թևո՜ւմ էին
թիթեռների նման,
հանում ջրին հունից,
ցրում էին նրա կարկաչները այգում,
հետո կոպերի պես
դանդաղ իջնում էին
վաղվա երազների բիբերի՜ վրա…

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՇՈՒՆԸ

Դիպվածի սյունից
կախվել ճանապարհը մրջյունի
և արտահայտվելու ելք է որոնում…
Արևի թելից կառչել հորիզոնը
և օրորվում է առավոտից
կեսօր, կեսօրից
ապագա՛:
Լաբիրինթոսը կողմնորոշվո՛ւմ է
տողով… չգրվա՛ծ:
Մեկուսարա՛ն են
մտքերս: Իսկ
ազատությունս շողում է
գրչածայրին, որպես
ճակատագրի աչք:
Քայլում եմ, որպես
անդրադա՛րձը Երազի:
Մի ձեռք
հավաքում է քայլերից իմ
իղձերս չիրականացված
և տերև առ տերև հյուսում
մի դեղնակարմիր
պտտահո՛ղմ:
Իսկ իմ ոգու ակնթարթում
չապրված… գարո՛ւն կա,
չապրված… ամա՛ռ կա,
չապրված… աշո՛ւն կա,-
աշո՛ւնը բանաստեղծի…

03.01.2019թ.

ՀՈՐԻԶՈՆԻ ՃԱԿԱՏԸ

Ծառը, որ տնկել եմ,
հայա՛ցքն է ձեռքերիս,
որը նորանոր շիվեր է մխրճում
ոգու մեջ երկնքի:

Շուրթերս
ավետաբեր հողմերի միջով
մոտեցնում եմ մագաղաթի
լուսեղեն շնչին:

Եվ երկնքի արմատն է դուրս արձակվել
հիշողությունից բառերի,
որով փոխանցվում է
ապսպրա՛նքն Աստծո:

Եվ տանիքն այս կնճռապատ
ճակա՛տն է Հորիզոնի:

12.12.2018թ.

ԿԱՆԳԱՌՆԵՐԻ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Եղբորս դստերը՝ սիրելի Անուշին

Կանգառների ոգին
բաբախում է հորիզոններում ընթացքիս
և ծաղիկներ փնջում դաշտերում Անսահմանի:
Բանաստեղծությունից դուրս մնացած տողերը
ափ նետված ձկներ են:
Հայրս իր տնկած ծառերի
շնչից ելնում
և հասնում է տուն,
ափի մեջ՝ ողջույնն արևի:
Հավատից ծորացող արյունը
Հարության թռչունն է:
Կանգառների շունչը
մի բույն է,
որում ծլվլում են
երազները ճանապարհի:
Հայացքիս մոմը վառվում է:
Եվ շարունակվում է սպասումներիս տենդը:

31.12.2018թ.

ԼՈՒՅՍԸ

Դասախոսիս՝ Գուրգեն Բաղդասարյանին

Տառապանքի լույսը
իբրև զոհասեղան
հենվում է կյանքի
կամրջի վրա:

Եվ քո ոտքերը՝
ճանապարհների
քարտեզագրեր,
որոնցից դուրս է ելնում
իրականության շունչը,
որպես մանուշակ:

Դու՝ միտք, ոգի,
ավյուն ու շունչ,
սփռվեցիր ղողանջներում
հիշողության,
որպես կյանքի-
հավերժի կանչ:

Եվ կանգնել ես
հիմա այստեղ,
որպես հույսի զրահ,
մագաղաթի խոյանք:

17.11.2018թ.

ԼՌՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳԻՐԸ

Գրում եմ տողերի միջև ձգվող տարածքում,
բացելով մտքերիս մի՛տքը,
բացելով հույզերիս հո՛ւյզը,
մինչև որ հանկարծ պարուրում են ինձ
ենթագրերը ժերմակ լռության:

ԱՆՀԱՅՏԻ ԱԴԱՄԱՆԴԸ

Իմ դիմաց ոչ թե օրն է,
այլ կտա՛վը լռության,
որին նկարում եմ վրձնով երազանքի:
Իսկ հիշողության անդունդի վրա
ծիածանվո՛ւմ է
իմ արյան խիզախ համաստեղծությունը:
Գտնում եմ ադամանդն Անհայտի:
Հաղթահարում ինքս ինձ:
Հավատա՝
դատարկ չէ պատուհանը ժամանակի.
այստեղ ապրում են երազն ու ծաղկամանը՝
ծաղիկո՛վ լույսի:

03.01.2019թ.

ԲԱՌԵՐԸ

Կյանքս նորից քրքրում են բառերը
հագուստի՛ պես,
և գտնում են մի բան,
որով ապրում են ո՛չ թե իրենք,
այլ ճանապարհները.
և գտնում են մի բան,
որով սնվում են ո՛չ թե իրենք,
այլ երազանքները.
և գտնում են մի բան,
որով բացահայտվում են ո՛չ թե իրենք,
այլ մոլորակնե՛րը:

05.01.2019թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԻՂՁԸ

Մկանների նման
տողերն են ձգվում
հիշողության կապույտ լույսի միջով,
և թևերն են իջնում,
որպես սպեղանի,
իմ ցավերի մաշված սալի վրա…
Հավքի թևով բացվող
առեղծված է շունչս,
որ քսվում է շնչին Անսահմանի,
դրա համար խոսքս
ո՛չ երկինք է անհայտ
(որով մենակյացն է ինքնըստինքյան արբում),
ո՛չ կամուրջ է՝ աստղի ոլորտներով թռչող.-
խոսքս… ընդունեցեք,
որպես… համբո՛ւյր…

*

Բառերի պատերը
փշրելով՝ բացում եմ
ազատ տարածություն պոեզիայի՛ համար…
Իմ ոգու դուռը կարող է գտնել
միայն լռությունը,
որը պատա՛նդ է…
Եվ գրչիս արցունքը կաթում է ուղիղ
թարթիչի՛ վրա Անսահմանության:
Որոնումն համա՛ռ
է: Տարերքի դեմքը
բառերից դո՛ւրս է…
Բառերը հոգի՛ են.
ուրեմն բա՛ց է դեմքը ճանապարհի:
Բառերը երազ են.
ուրեմն կյանքը թևեր է առնում ոգուց Անհունի:

06.01.2019թ.

*

Պտտվում է անիվը օրվա,
և ժամանակի զոհասեղանին
թե մնում է մի բան-
դա հոգի՛ն է բառի.
դա հրեշտակի թևերից բխող
աղբյո՛ւրն է սիրո:

08.01.2018թ.

ՍԿԻԶԲ

Աստծո շուրթերից հոսող լռությամբ
ես ընդլայնեցի սենյակը հոգուս:
Եվ տեսողությամբ մագաղաթների
ինքս իմ միջով ճանապահ անցա՝
բացահայտելով վա՛ղքը պատմության:
Եվ իմ վերքերում քարացան գուցե
տաք ալիքները հորիզոնների:
Ես գրիչ առա ձեռքս
և իջա
արշալույսների շուրթերի վրա՝
փոխվելու բառի՛,
թրթիռի՛,
դողի՛…
Հետո պտտվեց անիվը հույսի,
և սովորույթի սեպերն հանեցի
խորքից հույզերիս,
կյանքիս խորհուրդը կշռեցի կրկին
հարությա՛մբ տողի,
ծնունդո՛վ Խոսքի:

09.01.2019թ.

*

Լեռան գագաթին
այսօր վառեցի կայծքարե մի բառ,
և ասքեր ծնվեցին
եզրագծերից անսահմանության:

09.01.2019թ.

ՀՈՐԻԶՈՆԻ ԴՈՒՌԸ

Հորիզոնի դուռն է իմ բառը,
որ բացվում է զոհասեղանին ժամանակի,
որտեղ աներևույթ թիրամխ է Ապագան:
Զինվորի ոտնահետքերից բուսնում են
ծաղիկներ,
և ճանապարհը ազատվում է
սահմաններից.
այդպես իմ անցյալն է ազատվում
սպիներից
և կառչում լույսից
ներկայի:
Պատմության աչքերը բացվում են
քայլքից երիտասարդի,
որի ուսերից ծնվում են
ելքերը
և ճախրում հորիզոնի միջով,
որպես
ասուպներ ոգու:
Եվ գրչիս հայացքից
ջուր է խմում ճանապարհը…
Եվ լուսանցքից ժամանակի
դուրս են թռչում
տողերը, որպես
հույսի թռչուններ…

10.01.2019թ.

ՆՈՐԸ ՀՈԳԻՆ Է

Քառատողի մեջ գտնո՛ւմ եմ իմ դեմքը:
Քառատողի մեջ չե՛մ գտնում իմ դեմքը:
Եվ ճանաչում է բառն իր շրջապատը՝
նրանից լիովին ազատվելո՛ւ համար:
Բեկվում է այդպե՛ս
ուժը սովորույթի:
Հոգեվիճակների շղթան ձգվում է
նո՛ր շրջադարձով…
Եվ ազատ տողի կոլորիտը ճերմակ
տո՛ւրք չէ ամենևին,
այլ՝ հոգու տարե՛րք…
Եվ անդեմ լռության արթնացած լեզուն
տո՛ղն է կայծքարե…
Նորը հոգի՛ն է…

09.01.2019թ.

ՀԱՅԵԼԻՆԵՐ

Իմ փնտրումները բանտախցեր չեն,
այլ՝ հայելիներ:
Եվ թռչունների խմբանկարն է առվի ջրերում:
Իմ արմատները զսպանակներ են,
որոնք հրում են ծառի երկինքը հորիզոնն ի՛ վեր…
Ես ընդունում եմ հիմա սենյակիս ցնծուն ողջույնը
և ձերմակ թղթի հյուրընկալությունը,
հպվում լռության սեգ ակունքներին…
Եվ բառը, որպես միջանցքը ճակատագրի,
պարգևում է ինձ շունչն Ապագայի…

14.01.2019թ.

ՆԵՐԱՇԽԱՐՀԻՍ ՁԱՅՆԵՐԸ

Եվ ժամանակը, որպես ճգնավոր,
լսո՛ւմ է ձայներն իմ ներաշխարհի:
Հրեշտակն ընթերցում է տո՛ղս չգրված:
Երգս՝ եղերական սպունգներով անցած
ճի՛չը Անհայտի:
Եվ նահատակի լռության տակ ուսերս կքած՝
հիշողության միջանցքից մտնում եմ մայրուղին
հույսի:
Եվ իմ ճանապարհից բխո՛ւմ են թևերը լուսաբացի:
Եվ արյունս հոսում է տառերում փրկության,
ինչպես փոթորի՛կ:
Եվ ամեն ընկնող վարագույրից հետո…
խոյանո՛ւմ է վեր
հրդեհը ոգու
և ծաղիկների…

18.01.2019թ.

ԸՆԹԱՑՔ

Ամեն ծնվողի ճիչ թեև պատված է մոխիրով ցավի,
բայց այն մշտապես կրում է իր մեջ բռնկումները
լուսաբացների:
Եվ ապրումներիս մաքուր տարածությունները
լցվում են հույսի ձնծաղիկներով:
Դարը իմ արյան խորանում թեև չվառեց մի մոմ,
բայց նա բորբոքեց ընդերքիս լույսը կայծքարով տենչի:
Երբեմն իմ մեջ զգում եմ խորունկ մի դատարկություն,
որ սովորաբար համակում է ինձ
օտար ու անլուր երկինքների տակ
կամ հայելու մեջ,
որն անջատում է միշտ ինձ… ինձանից:
Երբեմն քայլում եմ ստվերիս միջով
և առերեսվում… ճակատագրին:
Եվ իմ քաղաքի ներշնչանքները շատրվանում են
մանկությանս տաք խաչմերուկներից:
Եվ ձիերից ընկնող թամբեր են նորից
իմ վայրկյանները…
Եվ ապագայի շնչից բխում է վարդը…

19.01.2019թ.

ՄԻ ԼՈՒՅՍ Է ՍԱՀՈՒՄ

Մի լույս է սահում մթին տողերի շնչի վրայով
և վառում լապտերն իմ հիշողության:
Եվ ամեն մի տող ներաշխարհիս ուղղորդող աչքն է:
Թեև սկսնակի ճանապարհը բա՜ռ է անաշխարհ,
բայց նրա հայացքը հատո՛ւ է ու շեշտակի՛,
ինչպես կայծակը…
Եվ Անհայտի քարաժայռից պոռթկացող ճանապարհը
աղբյո՛ւր է հորդուն…

20.01.2019թ.

*

Երբեմն քայլում եմ անդրաշխարհի մենության միջով,
զգում դեմքիս վրա անընդգրկելի դողը ստվերի…
Իսկ իրարից ո՛ւխ խլող սմբակներն անընդհատ
ջարդում, տրորո՛ւմ են
հունդերը կյանքի…
Եվ ներշնչանքիս թարթիչների վրա
սարսռո՛ւմ է դեռ լույսի մի փաթիլ…

20.01.2019թ.

*

Ճանապարհս իր հողե շերտերով
քամում է կյանքիս ամեն վայրկյանը
նարնջի՛ նման,
և փոխանցելով ավյունս հողին,
նախապապերիս հայացքի լույսին,
ամբողջացնո՛ւմ է ոգին Անհունի:

20.01.2019թ.

ԲԱՌԻ ԻՆՔՆԱՆԿԱՐԸ

Բառի ինքնանկա՛րն եմ որսում ընթացքից,
քամու ժապավենին գրելով մի տող՝
մի ապսպրանք,
հասնում եմ սահմանին ոգու ու արյան:
Ամեն ճանապարհ պիտի՛ հաղթահարի ներքին փակուղին:
Գրում եմ մի բառ տարածքում լույսի,
և բարձրանո՛ւմ է լռության ոգին վիհից մոռացության,
և ցավի դուռը բացվում է դեպի հիշողությունը լեռնապարերի,
և փոթորկված երկինքը տարուբերվո՛ւմ է ծյուղերին ծառի:
Բառերի պատերազմով
ո՛չ թե խոցվում է բիբը ճանապարհի,
այլ ընդարձակվո՛ւմ է տեսադաշտը տողի:
Ժամանակի դեմքը:
Պիտի ե՛տ քաշեմ վարագույրը տենդի,
որպեսզի բացվի՛ ճակատն հիշողության,
պիտի ձեռքս առնեմ
մեր բարբառից բխող ճառագա՛յթը, որպես գրիչ:
Պիտի նկարեմ վրձինով ծիածանի:
Գնա՛մ դեպի ահեղ ակունքները լռության:
Եվ խիղճը, որպես սփռոց,
պետք չէ փռել սեղանին…
Բառի ինքնանկա՛րն եմ որսում ընթացքից:

21.01.2019թ.

*

Ճանապարհի ոգին, որպես գնդակ,
նետվել է ահա խաղահրապարակն իմ մանկության:
Ծաղիկ առ ծաղիկ համբուրեցի քո շնչառությունը, հա՛յր իմ:
Եվ քո քրտինքի ծիածանվող կաթիլը
կախվել է ճակատից հորիզոնի,
որպես մարգարի՛տ:

22.01.2019թ.

ԱՌԱՎՈՏԻ ՏԵՍԻԼԱԺԱՄԸ

Զայնս լցվում է բուրմունքներով ծաղիկների
և սփռում շաղաոտըն նվագները հեռվի:
Իսկ հայացքս, որ նեկտար է
հանում լույսի առէջներից,
դարաթափանց տեսողությո՛ւնն է բառերի:
Հիշողության ստեղների վրա կրկին
նվագում է անհայտ մի ձեռք
տեսիլաժա՛մն առավոտի…

*

Քարերի վրա
ձեռագրերի լուսամուտներն են
որոնում համառ
ձեռքերս
հողի սուր տեսողությամբ:
Շունչս մամլում է
գաղտնիքի խոնավ ընդերքները կույս,
և իմ արյան մեջ բացվում են մեկեն
հին ապարանքներ,
բրոնզե ձայներ,
որոնց օրորվող աստիճաններով
ելնում եմ դեպի ելքը փնտրումիս,
բացում պատկերներ,
երիզ ու գծեր…
Եվ իմ երազը,
որպես մի խորան,
բացվում է,
փակվում,
մնում բառերի
ավազների տակ…
Փոշուց ալիքվող տեսիլքը՝
ես եմ,
ես եմ քարերի երակի միջով
տարածվող հոգին,
ես՝

աչքերիս մեջ բոցկլտող երազ,
ինքս ինձ վանող անհանգստություն,
ինքս ինձ մաքրող մի հիշողություն,
կարոտի խորան:
Ձեռագրերի լուսամուտները
բացող ալիքն եմ,
մագաղաթների
շնչառությունը,
ես՝
ոտքերի տակ բաբախող երկինք…

*

Հիշողության թևերում
արթնանում են տողերը,
որպես շնչառությունն Անհայտի:
Իսկ նախնիներիս հայրենիքում,
ուր տենչի գիշեր էր,
ոգու ցերեկ է հիմա
և հույսի հրդեհ...

02.02.2019թ.

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԻ ՕՐԸ

Դիպվածի սյուներ և թռիչք ոգու,
վիհերից ծորացող առավո՛տ է
վերքը քաղաքի:
Բոսո՛ր մի վարդ:
Խղճի խորխորատից ելնում է լուսինը կարմիր:
Պայթում է հայացքը ծառի,
որպես բողբո՛ջ:
Եղանակավորվո՛ւմ են ճյուղերն Անհունի:
Համբուրվող ճակա՛տ է
դիմագիծն Անհայտի,
ձեռքապա՛րզ մի բառ…
Հորիզոնի կտավին նկարում է ծառը,
և ճյուղերն, ինչպես վրձիններ,
մխրճվում են
երկնքի մեջ հույսի…

28.01.2019թ.

ԾԱՂԿԱԾ ԵՐԿԻՆՔ

Բաբախում է իմ հիշողությունը
հողաթմբից մինչև ծյուղը երկնքի:
Եվ լույսի կշիռը ապակու վրա
հոգեվա՛րքը չի ընդգծում մութի,
այլ հողից բխող երա՛զը բախտի,
լեզո՛ւն արմատի
և շատրվանող աղո՛թքը ծառի…

02.02.2019թ.

ԱՌԱՆՑ ԿԵՏԱԴՐԱԿԱՆ
ԵՎ ԱՅԼ ՆՇԱՆՆԵՐԻ

1
կայծակով ճեղքվող մի բառ է կյանքս
անցյալների անցյալ
հետագիծն իմ ընթացքի
հույսի կամրջի վրա
տարերքի աշտարակ է
մխրճված երկնքի օազիսի մեջ
և պատանդ լռության մեջ
թռչող սլաք է հոգիս
իմ բիբերում հյուսվում է մի աշխարհ
անխոնջ որոնողն այս
երազների թիրախ է
հավատի հանգրվան է
տառապանքի լույսը

02.02.2019թ.

2
հետո կլինի օր
և ճակատագրի խմորի միջով
կանցնի երազը
որպես լույսի սլաք
ես լցվում եմ հիմա
ծիածանով բառի
և սավանով հորիզոնի
փաթաթում եմ վերքն Անհունի
և համբուրում աստղը ցավի
կեղևս իմ գիրն է

և ճանապարհիս պորտը լվանում եմ
ցողով ծիածանի
գրկում եմ կյանքը
զորեղ թևերով հազարամյակի
ստվերիս նստարանին
հանգստանում է հիշողությունը
վերհիշելով իմ ամբողջ կյանքը

02.02.2019թ.

3

տարերքիս թևերը
քսում եմ քարերին
և ծաղկում են ծվենները երկնքի
որպես մանուշակներ
աղոթքիս պատառիկները
հավաքում եմ քո շուրթերից
և համբույրի մեջ արթնանում է
երկինքը ոգու
ներշնչանքիս մոխիրով շփում եմ
դեմքը տողի
որ ջերմանա մի քիչ տարածությունը
փխրեցնում եմ
հողը պատմության
որ աճեցնեմ
ծաղիկն առավոտի

02.02.2019թ.

4

փրկելով երազը կյանքի
բացում եմ աչքերը հավատի
և ընկնող արցունքից ծակվում է
հատակը մեղքի

ակունքը լռության
իմ դեմքն է ժամանկի
որով բացահայտում եմ
վիհը իրականության
ցավի շրջագիծն ամփոփում է
հուշը արմատի
և ինձ ողջունում է բողբոջը հույսի

02.02.2019թ.

5

դատարկության շեմը հատում անցնում է
ճամփորդն անհայտի
վիրավոր ոտնահետքս
տարածության ձեռքում բացված կակաչ է
օրհնությունը ցող է թերթերին նրա
լույսի խավար արցունքը
խոսքի շապիկներից ազատվում է
հիշողության օրը
մերկ է հոգին
երկնքի պես
բևեռների միջև ճչացող երազ է
մարդը
երկու բառն իրար միացնող
անդունդ
հրաբուխը ոգու

02.02.2019թ.

6

հիշողության ստվերով փաթաթված
անորոշության արձան
ես եմ իմ դիմաց
շնչառությունս շատրվանում է

խաչքարի միջից
և ծաղիկներով լցնում դաշտավայրը ոգու
քարե ծիլերով
համբուրում է հորիզոնն իմ արյան
մագաղաթի խոյանք է
ենթագիրը լռության
և ինձ համակում է
հրդեհը ոգու ու ծաղիկների
և բռնկվող կրակի շուրջ
տաքանում է իմ ացնյալը

02.02.2019թ.

7

գրեցի այս շարքը
առանց կետադրական նշանների
բայց ոչ առանց ոգու հրայրքի
գրեցի թռչող տերևի վրա ու թևին հավքի
գրեցի պատառիկներին երկնքի
վարդի պես շիկնող թերթերին ամպի
հայացքում խոտի
և ծառի վերձիգ տարերքի վրա
գրեցի և նրանք
թռան հեռացան
թռչունների հետ ու տերևների
բայց գիտեմ նրանք կվերադառնան
թռչնի թևերին
խոտի շշուկում
և շրթունքներին առավոտների

03.02.2019թ.

*

Ես համբուրում եմ ծնունդն Անհունի:
Կաթիլն իմ արյան բո՛ւյն է կենսալի:
Ստվերիս քարերն համբուրող անձրևը
երգ է չգրված…
Եվ թևավորվո՛ւմ է Անհունն իմ շնչով:

03.02.2019թ.

*

Բանաստեղծությո՛ւն,
աստղային պահերդ
հրո՛ւմն են իմ արյան
դեպի շառավիղն անանձնապատկան:
Ինքնամաքրման հաճույքը ձգի՛ր
ակնթարթներով ոգևորության,
ձգի՛ր անհունդ երակիս միջով
նաև այն անեզր տքնանքից հետո,
երբ ես կանգնում եմ ցնորվածի պես,
և ա՛յգն է տրոփում ոտքերիս տակ…

ԱՇՈՏ ԲԵԿՈՐԻՆ

Շուշի քաղաքի պարսպի վրա
քո հիշատակն է ոգեղենացել,
հայոց խիզախ ու արիական ցեղն
արդեն բացում է վա՛ղքը պատմության:
Ոգու հանդե՛ս է խիղճդ հերոսի
և առասպելի շարունակություն,
նոր նկարագիր տվեցիր բառին
և Գանձասարի հարատևությո՛ւն:

13.01.2018թ.

ԼՈՒՍԱՅԳԻ ՇԻՎԵՐԸ

Թռչունը երևացող մասն է Անհունի:
Եվ Աստծո շունչը
քարից քլթքլթացող աղբյուր է:
Եվ մի բառ ծնվեց՝ ոգուս կերպարանքով:

*

Փոքրիկ բողբոջն այս
իր մնջախաղով
եղանակավորում է ճյուղերն Անհունի:

Փետուր առ փետուր
աճում են այսպես
իմ հիշողության թևերն ապակե:

Այսօր ո՞վ է կանգնել
հայացքում ունայնության,
բուսե՛լ, որպես ծաղիկ:

Ճակատագրի միջանցքում հանդիպեցի ես ինձ
և անցա իմ կողքով անծանոթի՞ պես:

Եվ հասկացա մի բան,
որ մտապատկերի պատուհանից ընկնող
ծաղկման չէ բառը,
ոչ էլ ուրվանկար,
այլ ապագայի կարմրավառ շնչից
բխող այս վա՛ղը…

15.04.2019թ.

*

Արյունս հոսում է տառերում փրկության,
որպես փոթորիկ:
Եվ գրչիս ծայրին՝ լո՛ւյսն է հիշողության:

15.04.2019թ.

ՀԱՅԱՑՔ՝ ՆԵՐՍԻՑ

1
Եվ բնության ձեռքերում
փայփայվում է իմ հայացքը,
որպես բարուր,
որպես աստղը ճանապարհի,
ուղեցո՛ւյցը ոգու ու տարերքի:
2
Ես ծովն եմ,
և իմ ափերը իմ բառերն են,
որոնք հղկվում են ու կերպավորվո՛ւմ
ալեկոծությունից հիշողության:
3
Հորիզոնի սիրտը
բաբախող իմ արյունն է,
որ հոսում է երակներում
լեռնապարերի,
և լուսաբացի ափի մեջ
արթնանո՛ւմ է իմ դեմքը:
4
Մեկն իր լապտերով լուսավորում է
հայելին Անհունի,
որտեղ բացվում է երկինքը պոեզիայի,
այնտեղ բացվում են թևերը ներշնչանքի:
5
Ոգիս ծաղիկ է,
որ բացվում է և բուրո՛ւմ
դաշտերում հիշողության:

*

Քո հողը փո՛քր է,
բայց նրա շնչառությունը միանգամից անցնո՛ւմ է
քանի-քանի՛ դարի հիշատակի միջով:
Քո վայրկյանը
առասպելից արձակված նետի
հավերժությո՛ւնն ունի:
Քո խոտը աճում է:
Երկինքը հենվում է նրա տաք շնչառության վրա:
Իսկ մոխիրդ ներծծվում է
ժամանակի ահեղ պատերի մեջ:
Այդպես դու բարձրանում ես քեզնից,
դառնում անխոցելի՛…

06.02.2019թ.

*

Եվ թևերով քաոսի
ծածկվում է լույսն հիշատակի:
Իսկ տիեզերքի շունչը,
որպես հյուլեն Գեղեցիկի,
հատում է սահմանն ունայնության…

08.02.2019թ.

ԱՉՔԵՐՍ

Ես իմ երազի ավազուտներից
վերցնում եմ աչքերս՝
վախվորած, հիացած,
թախծալի՛ր, երազի՛ն,
լիացած աչքերս
և դնում գոգին պատուհանիս.-
վաղուց ի վեր տեսնում եմ ես
իմ հետքերով,
թարթիչներով նկարում եմ
ալիքներին քո վարսերի:
Թանգարանում պահվող իրե՞ր են
իմ աչքերը…
Ավազանն են նրանք հոգու:
Գուցե նաև զոհարանն են
Վերին Գոյի…

08.02.2019թ.

*

Այսօր ես բառերից հանում եմ
բանտարկյալ երազները ոգիների:
Բառերը բանտեր չեն,
ոգու և լույսի ցատկահարթակ են…
Եվ ես ճակատագրի խմորի մեջ ծնվող
լուսայգն ըմպում եմ,
համարձակ ու անվախ
նայում եմ տառապանքի աչքերի մեջ ուղիղ,
ի մի բերելով
ուժը Արամորդու:
Եվ տողերով պիրկ
ու կենսածավալ
գրկում եմ կյանքը
և համբուրում շիվերն այգաբացի…

08.02.2019թ.

*

Իմ ճանապարհի պատկերն ի վերուստ
հասունանում էր,
ինչպես պտուղ:
Եվ հողմերի դեմ
կրում եմ ես իմ ճակատագիրը,
որպես վահան:

11.02.2019թ.

*

Եվ հիշողության աստիճաններով
բարձրացողը - ես եմ:
Հիմա հիշողությունը կենդանի է ավելի,
քան մեզանից ամեն մեկը:
Սակայն ո՞վ է փլում աստիճանն այն,
որով ես ելնում եմ…
Ո՞վ է իմ փոխարեն
դիմավորում գալիքը…
Նախնիներիս ձայնի սկավառակի վրա
պտտվում է իմ հիշողությունը
և ասեղով կորզում հորովելներ հոգու:

*

Ինչպե՞ս են բիբլիական տառերը ցամաքում,
լռում ահեղաձայն,
որպես մխացող մտքերի քարտեզներից
անհետացող երկիր:
Ավա՜ղ, կա մի լռություն, որ դեպի
քարանձավն է շարժվում,
դեպի արգանդը իր՝
հետևից ձգելով կորստի մի քարավան,
արնափայլ պատրանքներ
ու ոռնացող փոշի,-
ահն այդ իմ շուրթի՛ն է…
Եվ իմ արյան ամեն կաթիլը
թրթռո՛ւմ է, ինչպես
Մասիսի կոպը ձյունե:
Ավա՜ղ, հուսալի մի մագաղաթ չէ մաշկը պատմության,
որն ինչ վիհերի ցավեր էլ տանի,
կմնա անդեմ ու անկերպարանք,
թե կտրվա՜ծ է երակն ազգային:

*

Դիմա՜կը…
Նրա մեջ ինքնասպա՜ն է լինում
մեր պարզությունը:
Վերցրո՛ւ այն գետնից-
և քո ձեռքի մեջ,
ինչպես ափ նետված ձուկ,
կթփրտա՜
մի ողջ դարաշրջան:

25.02.2019թ.

ԷՋԵՐ ՕՐԱԳՐԻՑ

1
Արշալույսով բուրող բառն եմ ընտրում կրկին
և ճամփան՝ որպես խորհն հավատամքի:

25.02.2019թ.

2
Հավատի արահետներում
գտնում եմ ես իմ մենակությունը՝
մոռացված անկյունը ճակատագրիս:

05.12.2018թ.

3
Մի դուռ է բացվում դեպի նպատակը:
Ինձ դիմավորողը սերն է,
թե մեկուսարանը բախտի:

03.12.2018թ.

4
Եվ հառաչանքի քամիները
պտույտ առ պտույտ
լցվում են աչքերը ճանապարհի
և պոռթկում լեռնալանջից,
որպես հույսի՜ աղբյուր:

07.12.2018թ.

5
Եվ ստվերների պարիսպները գրոհում են
մարդկային ոգու ճառագայթի դեմ,
բաժանելով իրարից անցյալն ու ներկան:
Իսկ ապագայի ձեռքով մատուցվում է
հուշը, որպես հաց:

17.12.2018թ.

6
Բառը մոլորվել է
նկուղում բառարանի:
Եվ լուսաբացի ափի մեջ արթնանում է
ոգին տարածության:

17.12.2018թ.

7
Եվ գրչիս հայացքից
ծորում է լույսը՝
մեղրահացը ժամանակի:

29.12.2018թ.

8
Երկու բառի միջև պայթող փակուղի է
լռությունը սիրո:

29.12.2018թ.

9
Եվ անհայտ հեղինակ է լռությունը հոգուս:

29.12.2018թ.

10
Թռչունը երևացող մասն է Անհունի:
Եվ Աստծո շունչը
քարից քլթքլթացող աղբյուր է:

30.12.2018թ.

11
Եվ մի բա՛ռ ծնվեց՝ ոգու կերպարանքով:

30.12.2018թ.

12
Կանգնել եմ ափին երկվության:
Իմ և իմ միջև համակ լռությո՛ւն է:
Եվ տիեզերքն իմ մեջ շրջագայո՛ւմ է
շնչառությամբ տողի:

30.12.2018թ.

13
Հետքերս լո՛ւյս են ըմպում հորիզոնից քարի:
Եվ հիշողության հենասյուներին
արշալույսն է իջնում,
որպես թռչուն:

31.12.2018թ.

14
Ավերակի արհամարհա՛նքը.-
սարդոստայնի համր տարածության մեջ
թփրտո՛ւմ է ճակատագիրը բառի…

15
Եվ գլորվող օրը
անիվ է կորուսյալ
կամ էլ… սկավառա՛կ…

16
Հայացքիս ժամանակը բացեց մի երկինք
տառապանքներիս անապատի՛ վրա:
Եվ ես համբուրեցի Անսահմանի թևով
զոհասեղա՛նը խոսքի:

25.01.2019թ.

17
Թռչունների բիբերը ծեծում են
դռները ճակատագրի.-
փրկություն չունեմ կրակից,
փրկություն չունեմ ջրից,
փրկություն չունեմ վիհից,-
նրանք լցվում են
ճիչերով թևավոր…

26.01.2019թ.

18
Քո սիրտը մխրճվող սրից
կաթկթում է լուսայգն աշխարհի…

19
Տարածքն այս
մարտնչող մասն է իմ հայրենիքի,
որ վրեժի սյուն է,
հանճարեղ կտավն հավիտենության:

02.02.2019թ.

20
Մոռացության վիհի մեջ ցնցվողը
ես չեմ:
Ե՛ս չեմ հոգու խարխափանքներից
խուսափողը:
Ե՛ս չեմ հիշողության պատերին
զարկվողը:
Այլ իմ… Ապագան:

09.02.2019թ.

21

Ճանապարհորդի ուսերին
անապատն է հուշերի:
Ձեռքերից բուսնում են ծաղիկները:
Թափահարում է լուսաբացն իր թևերը
ոգու մակերեսի՛ վրա:
Եվ դեղնակտուց երկինքները ճռվողո՛ւմ են
լարերի՛ վրա հորիզոնի:

10.02.2019թ.

22

Օտարամետ մտքերի փշալարերը
վախի պաստառներ են ամրացնում
շենքերի վրա,
ճակատին հորիզոնի…
Եվ պատմության փղոսկրե ձեռքը
տարուբերվող մի լաստանա՛վ է
քաոսի անհուն հորձանուտի մեջ…

25.02.2019թ.

ՀԵՏԱԳԻԾ
(պոեմ)

Աներևույթ մի կետ է
իմ գրչածայրը,
որից ելնող ծաղիկը
հորիզոնի շո՛ւնչն է…

Ստվերիս պատուհանին հպվում է
մի ուրվական:
Գոյության առա՛նցքը:
Մի բազմակետ է
հետգրությունը իմ ճանապարհի:

Ո՞վ է իր քայլը արմատի պես խրում
շնչառության մեջ հողի,
բուսնում, որպես ծաղիկ:
Ես հիշողության ծաղկամանից
պոկում եմ մի վարդ,
և հոգուս էջերին ճերմակ
գրառո՛ւմ է կատարում
Ապագայի բանաստեղծը…

Հուշերի մի շղթա է քարշ տալիս
Ճանապարհը,
թռչունները կտցահարում են
ստվերը երկնքի,
որպես պատառի՛կ հացի:

Երբեմն կրում եմ ես
իմ ճանապարհը, որպես թիկնոց:

Բանտի դռներից հոսում են
գետերը աղոթքի
և կարմիրով ներկում աստիճանները՝
ըմբռնումները հասարակության:

Գիշերը հուշերի շուրթերից
ծաղիկ է քաղում:
Բևեռների արցունքը:
Եվ վայրկյանների ջահերով
լուսավորվում են պատարագները ցավի:

Ժամանակի ձեռքը
հղկում է հայացքը ճանապարհի,
որպես դիմաքանդակ:
Իմ և իմ միջև աճում է մի ծառ՝
լույսն հիշողության:

Թե տողն է հասցեն տիեզերքի,
դարձրու այն դեմքը
լռության, ոգու պայծառ
ճիչը,
ինքնամոտեցման ծիրը…

Կողմնացույցից պոկված
սլաք է կյանքս:
Ես քեզ մի բան պիտի ասեի:
Անսահմանի դեմքից
պոկում եմ մի բառ՝

ծաղիկն երկնքի,
և դնում վերքիս,
որպես սպեղանի՛:
Իմ ժամանակը պատա՛նդ է:
Բանտարկյալի հույսը երկարո՛ւմ է
բուրող ստվերով խնձորենու:

Մանկան խորքից ճախրո՛ւմ է
հորիզոնը երազի:

Եվ խլրտում են սերմերը ոգու
քարե կանչերում անդունդների:

Ժամանակի ձեռքից վերցնում եմ
լավաշն անեզրության
և կերակրո՛ւմ ճնճղուկներին:

Անհունի լռությունը թարգմանում է մի ձեռք:

Եվ քայլերիս դարպասներն ուտում են
ճրագները մութի:

Սիրո չարտաբերված լռությո՛ւնն եմ ես:
Եվ թևերիս երկնքով փաթաթվում են
քո ազդրերը հողմային:

Խելագարի պես
գրում եմ հիմա բիբով ճանապարհի:
Եվ զանգահարում է բևեռից բևեռ
ոգին տարածության:

Փողոցի անկյունում
կծկված անեզրություն,

որ ելնում է տեղից,
վազում հանկարծակի,
ինչպես կատաղած ցո՛ւլ:

Խաչքարի ձեռքերում
օրորվող բարուրը-
իմ ժամանա՛կն է…

Հորիզոնի ճյուղին ծլվլո՛ւմ է մի բույն:
Հողը լուսանո՛ւմ է
երկնակամարով մանուշակների:

Եվ ձեռքերիս հիշողության մեջ
կայծկլտո՛ւմ են աստղերը:

Ճանապարհն՝
աներևույթ ձեռքերում:

Ժամանակը՝
քարե վանդակներում:

Արցունքներիս թևերից կախվել
և սուրո՛ւմ են հրեշտակները:

Բարձունքի կարմիր ճի՛չը:

Անհայտի հետագի՛ծը:

Գլորվող կափարի՛չ է
երկինքը գաղափարի:

Աստղի բիբ է բառը:

Տողը՝ հյուրասենյա՛կ:

Ասելիքի խորքից
վեր են խոյանում
սյունները Լռության:

Անսահմանի չբռնվող խորհո՛ւրդը…

Իրականությունը մի կետ է:
Անհայտի մի ե՛զր:
Ճանապարհի լո՛ւյսը:

Շառաչուն արյան թևերի՛ վրա:
Փոթորիկների ճերմակ ճյուղերի՛ն:
Ծաղկած քարերի բուրո՛ղ մանկությունը:

Տեսիլքի զսպանա՛կը:
Իմ գրչի ծայրից
հոսո՛ւմ է ավիշը հարատևության:

Ջնջում եմ իմ դեմքը
ճակատագրի սեղմ գրատախտակից:
Եվ տառի ճա՛յնն է որսում
փետուրը լռության:

Հասնում եմ դռա՛նը Ոգու
ըմբռնումի նոր լարի վրայով:

Եվ պատրանքների լեռները
փլուզվում են
ճանապարհների զարկերակի՛ վրա:

Քաոսի աչքերը մխրճվում են
տենդի մեջ տողի:
Քարեղեն ճի՛չ է:
Եվ կարմիր հույս է վարդը՝
լուսա՛յգը հայտնության:

Երկնքի թևերում
խորա՛նն է իմ բառի:
Հայելու կրակե ձեռքերով
բացում եմ դեմքը Անհայտի:

Ունայնությա՛ն փոսը:

Իրակա՛ն է շեմը երազի:

Անիրական չէ բո՛ւյրը հորիզոն-ծաղկի:

Դեմքիս սպին՝
աստղի նշա՛ն:

Իսկ իմ հայացքի ավազանում
լողում է մի վա՛րդ:

Եվ կարոտի ճերմակ աղավնին է իջնում
ոտնահետքերիս ճիչերի վրա…

Թռչունների բիբերը կարկտահարո՛ւմ են
խեցեփեղկերը մարդկային խղճի:

Եվ բառի հայացքը մի թրծարա՛ն է:

Բուրմունքն, ինչպես

համբուրող շուրթ,
ձևավորում է սենյակները հուշի:

Եվ հավատի ժայռերի միջև
ժայթքում է ժամանակը…

Ես շոշափում եմ
քարտեզը ցավի:
Ապագայի դուռը:

Բռնում եմ թիթեռները պատրանքի:
Երբ հավատի լույսը
միակ լեզուն է իրերի,
խորհուրդը լռության:

Եվ գլխատված արևի ճառագայթները
ճանգռոտում են
ավազը Տենդի:

Գալարանքները մութի:

Ես շրջանցում եմ
ոստայնը ճակատագրի:

.....

Քանի՞ կարոտ եմ պատրանքազերծել,
վառել ճրագը գարունքվող հոնի,
անսահմանության սահմանն եմ անցել,
ձուլվել տարերքին բախտ-երգեհոնի:

15.12.2019թ.

ՀԱՐՍԱՆՅԱՑ ՄԵԾ ՏՈՆ

Մեծ բարերար Լևոն Հայրապետյանին
և 700 նորապակներին

Հայաստան աշխարհ, դու սեր ու հոգի,
պսակադրող հավիտենությունն,
դու գիտես հաղթել հարվածով բազկի,
երազդ դարձնել Հարսանյաց մեծ տոն:
Դու գիտես սրբել արցունքը և մոր,
բացել արահետ մխիթարության,
սպեղանի՜ ես և հավատի դող,
ոգեղեն շունչ ես, կամուրջ միության:
Հաղորդությունն է ճախրում երկնքում,
որպես աղավնի,
որպես հավատի ու ելքի նշան՝
զույգերն են իրենց կնիքը դնում,
կնիք համբույրի՜,
սիրո, երազի,
որից ելնում են հրեշտակային
բյուր արարումներ…
Եզերք և օջա՛խ, հավատամք և լո՛ւյս:
Այսպես ազգովի կերտում ենք վաղվա
և այսօրվա մեծ ներդաշնությունը,
այսպես սերմանում և՛ շունչ, և՛ հավատ,
հանգավորո՛ւմ ենք երջանկությունը:
Հայաստան աշխարհ, դու սեր ու հոգի,
պսակադրող հավիտենությունն,
դու գիտես հաղթել տարերքով Ելքի,
երազդ դարձնել Հարսանյաց մեծ տո՜ն:



ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտնե՞լ աշխարհ: Գուցե... հենց տուն վերադառնալ...
Քեզ կհուզի մի միտք խաչուղում անտարակույս,
Որ էությանդ մեջ, քո՛ մեջ պիտի միայն
Գտնես արդարացում, հանգստություն ու լույս:

Ելենա Իսաևա

ՄԻԽԱՅԻԼ ՄԱՄԱԵՎ

(Մոսկվա)

ԳԱՐՈՒՆ

Թթվաշ հացի պես բուրում է խոնավ օդը:
Գորշ ձյունն է մերվել ջրափոսերում սև:
Եվ երկնքի տակ իրերի գույնն արդեն
Ընդգծված չէ այնպես,
Ինչպես որ... ճակատագի՛րը:
Լվացված ու մերկ երկնքին ի՞նչ գույն,
Մեկ է, չի կորցնի նա իր դեմքը ուրույն-
Այս ձյունը՝ մերված ջրափոսերում սև,
Եվ հոտն այս՝ բխող քաոսների ծովից:
Ամեն ինչ մնում է,
Ինչպես որ եղել է
Գարնան լվացված աշխարհում այս.
Ծերուկ նրբանցքների պատուհանները գորշ,
Պատկերը՝ ծածկված աստծո արցունքներով,
Սառույց, որ փշրվում է նման ափսեների
Դղրդյունով լցնում խողովակները:
Առաջվա պես
Կոպիտ նստարաններին
Զույգերն են ծիծաղում՝ չսպառելով օրը:
Երկինքը կախվել է տանիքների վրա,
Օդի մեջ ճչում են բառերն արհամարհված,
Փողոցն ի վեր սողում են մառախուղները՝
Թափառող շների թաթերից տաքացած:

*
Դո՛ւ ես:
Ու նարնջագույն մի անտառ:
Ծառերն իրենց սառցե ծաղիկներով
Խրվել են
Երկնքի կապույտ ցոլքի մեջ:
Կաթիլը
Փայլում է ոսկու պես:
Խորհրդավոր նույն անտառն է:
Ու կրկին-
Դու ես: Եվ ես:
Նարնջագույն հողը լցված է
Արևով:
Է՛,
Մանկությունս մնացել է
Սառնամանիքով պատկերազարդ
հեռու անտառներում:
Ինչպես երազում,
Գարնանը բուրում են ջրերը:
Արևն իր ոսկով ընդարձակում է
Անտառը:
Կրկին - ես եմ:
Դու... այնտեղ չկա՛ս:
Դու... այստեղ ես, սեր իմ:
Ես այստեղ եմ: Եվ թե կամ ես -
Այնտեղ - միա՛յն
Քեզանով:
Լռությունը խշշում է թփերի մեջ
Եվ ի մի բերում անդորրը...
... Ես միայն հիմա հասկացա՛ հանկարծ,
Որ չենք տեղավորվում երկուսով... երգի մեջ,
Այնինչ... ուզո՛ւմ էի ընդգրկել... աշխարհը...

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՄՅԱԿՈՎ
(Ռյազանի մարզ)

ՎԻՇՏ

Եվ ինչքա՜ն մորմոք է հոսել
Եվ՝ ի՜նչ արցունքի գետեր-
Թափվում է
Բարձրից
Անձրևը աղի,
Եվ դաշտերը ծածկում են
Աղի ձյան բազո՛ւմ շերտեր:

ՀԱՄԲՈՒՅՐ

Կյանքի ահեղ քմահաճո՛ւյք.
Մեկին ճորտ ես դարձնում դու,
Իսկ մյուսին՝
Վառ մարգարե:
Քրիստոսից
Մինչև Հուդա-
Ընդամենը մի համբույր է:

ԽՈՀ

Բլրից նայում է հույսին աստղային՝
Թևի տակ պահած երկու զավակներ,
Գեղեցիկ չէ նա,
Ոչ էլ մոդայիկ,
Բայց ինչ-որ մեկի անհա՛ս երազն է:

Անտառ է: Ջրի թոքերով բարակ
Տարին է հոսում: Ջինջ է հատակը:
Ջուրը ճնճղուկի ծունկը չի ծածկում:
Բայց ինչ-որ մեկի համար… գետակ է:

Դատարկված,
Լլկված
Դաշտավայր համր,
Եվ իր բախտի մեջ ճահճացած հոսանք,
Անհրապո՛ւյր հող-
Բայց մեկի համար
Անկրկնելի՜
Հայրենիք է սա՛:

ԵԼԵՆԱ ԻՍԱԵՎԱ

(Մոսկվա)

«Աֆղանական շարքից»

*

Ընկերուհին ուղղում է վարսերը,
Ծիծաղելի է մի քիչ, անքուն,
Բոլորիս տեղ շռայլում իրեն,
Բոլորիս տեղ մոլորվում է կյանքում:

Իսկ մենք ավանդական տանիքի տակ
Դողում ենք մեր մաքրության վրա,
Չբացելով պարսը երջանկության
Նրա մոտ կամ ստվերի մոտ նրա:

Երբեմն չենք թաքցնում մեր գոհ
Աչքերը՝ բախտի հայելի:
Ինչ-որ չգրված օրենքով
Բաժին է դարձել սատանայի:

Վճարում է արյամբ սեփական
Այդ մոլոր տարիների համար,
Բաշխելով իր սերը ակամա,
Որպես մի էժան մանրադրամ:

Առիթով թե առանց առիթի
(Ամեն երգ իր վերջը ունի),
Շրխկացնում է երեսին բախտի
Վավաշոտ դռներն անհունի:

Այդպես ինքն իրեն կործանում է,
Չբացած գարնան դեմ ոչ մի փեղկ:
Բոլորիս տեղ ատում է նա մեզ,
Եվ մեր մեղքը չենք քավի երբեք:

*

Գիշերն էինք ձգում դողով երազանքի,
Գրքերից գիտեինք սիրո մասին միայն,
Եվ մեզ ուսուցչուհին սփոփում էր հանգիստ,
Որ ըստ տվյալների շատ են… տղաները,
Որ մեզ համար նույնիսկ ձոխ կլինի անչափ
Ընտրության դաշտը - եթե լինենք խելոք,
Ծնկներով սեղմվում էինք նստարանի տակ,
Իբր անտարբեր էինք, չէինք լսում նրան:
Հետո վստահելով՝ կիսում էինք թաքուն,
Երեկվա գաղտնիքների պաշարները մաքուր,
Չէ որ ծանոթ չէր մեզ դեռ այն ժամանակ
Պատմության այն հաստատ նախանշանը սև,
Որ եթե ավելի շատ տղաներ են ծնվում,
Պատերազմ է լինում…
Եվ ահա թերթերում թարմ
Տեսնում ենք մենք ծանոթ դեմքեր՝ մահով դաջված.
Ոչ թե քսանմեկի, այլ հենց վաթսունվեցի՛…
Թող որ պատերազմը հայտնություն չէ այնքան,
Եվ շատերն են խարտվել միայնության բախտից,
Միջուկն է խոցոտվում մեր սերնդի սակայն
Աֆղանական անվրեպ ու սև գնդակից:
Տագնապի լուրն, ինչպես մանկան վիրավորանք,
Դաժան ասեղներով մաշկդ է ծակոտում,
Եվ ուզում ես ուժգին ինչ-որ մեկին ատել,
Բայց ո՞ւմ…

*

Ես և դու եղել ենք տարբեր պիեսներում,
Տարբեր լեզուներով խաղացել մեր դերը,
Միայն հանկարծ նեղվածք է դարձել այն տեղը,
Ուր մենք ապրում էինք, արարում և մեռնում:
Մոռանալով կյանքի կանոն ու արգելակներ՝
Մենք հանդիպեցինք՝ չհարցնելով անգամ,
Թե ինչո՞ւ են քո բոլոր պատասխանները
Իմ հարցերին այնքան, այնքան նման…

*

Հանկարծ դու ցնցվում ես հոսքից քո արյան,
Կյանքի դաշնությունը լքում է քեզ ասես,
Չես գտնում անցյալում հույս ու հենարան,
Եվ հենարան չունես ապագայում նույնպես:
Երկիր ու ժամանակ…կյանքից դուրս են կարծես,
Հետ են մնում, ինչպես կեչիները՝ գնացքից,
Եվ երկինքն է խրվում ուսերիդ մեջ այնպես,
Որ աստղեր են ցայտում… թե՞ շիթեր արցունքի…
Մտնե՞լ աշխարհ: Գուցե… հենց տուն վերադառնալ…
Քեզ կհուզի մի միտք խաչուղում անտարակույս,
Որ էությանդ մեջ, քո՛ մեջ պիտի միայն
Գտնես արդարացում, հանգստություն ու լույս:



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

**Թեման չի սպառվում: Կարևորն այն է,
թե պատկերավոր խոսքի ջերմությունն ու լույսը
ինչ ներշնչումներ են հաղորդելու իրականության ոգուն:**

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԿԱՊԸ՝ ՍԵՐՆ Է

Վարդուհի Առուշանյան

- Պարոն Եսայան, հիշո՞ւմ եք Ձեր ստեղծագործական առաջին քայլերը:

- Առաջին բանաստեղծությունս գրել եմ 7-րդ դասարանում: Կարևոր ունակությունը, որ ես ունեի, դա հորինելու ընդունակությունն էր և հորինածս, որպես իրականություն ընկերներիս ներկայացնելու համոզիչ պատմելաոճը: Այն ճանապարհը, որ ես անցել եմ, երազ էր, գուցե և՝ պատրանք: Ես մտատանջության մեջ էի և գրելու ելք էի որոնում: 9-րդ դասարանի աշակերտ էի, երբ իմ գրականության ուսուցիչ Ժան Անդրյանը սկսեց հետաքրքրվել իմ գրած բանաստեղծություններով: Մտնելով դասարան, նա առաջին հերթին բարձրաձայն ընթերցում էր նոր բանաստեղծությունս, քննարկում աշակերտների հետ, դրանով իսկ կարևորելով ստեղծագործելու ունակությունն ավելի՛, քան նույնիսկ… դա՜սը: Ես սկսեցի մասնակցել Ժ.Անդրյանի ղեկավարությամբ գործող գրական խմբակի պարապմունքներին, որտեղ մեր առաջին քննարկած գիրքը Անահիտ Սեկոյանի «Եթե Որոտանը խոսեր» վեպն էր: Խմբակի մասնակիցների ուժերով «լույս էր տեսնում» պատի թերթ, ուր ընդգրկվում էին ստեղծագործող աշակերտների բանաստեղծություններն ու մանրապատումները:

Դասարանի բանաստեղծն էի: Այնուհետև դարձա դպրոցի բանաստեղծը: Միջոցառումների ժամանակ ասմունքում էի իմ ստեղծագործություններից, արժանանում ջերմ ծափահարությունների: Դպրոցը «նվաճված էր»: Իմ դիմաց… քաղաքն էր և… անհայտ ընթերցողը: Իմ դիմաց… որոնումների անծայրածիր դաշտն էր, որն հաղթահարել էր պետք՝ վայրկյան առ վայրկյան և բառ առ բա՜ռ: Իմ օգնականն էր Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»:

- Ովքե՞ր էին Ձեր ներշնչող և ոգևորող մարդիկ և ինչպիսի՞ միջոցներով ու եղանակներով էին զարգացնում Ձեր բանաստեղծական ունակությունները:

- Միջնակարգն ավարտեցի 1976 թվականին: Նույն թվականին «Սովետական Ղարաբաղ» թերթում տպագրվեց բանաստեղծություններիս առաջին շարքը՝ բանաստեղծ և խմբագրի տեղակալ Վարդան Հակոբյանի «Բարի ճանապարհի» մաղթանքով: Հարկ է նշել, որ բանաստեղծ Վարդան Հակոբյանը այն ազդեցիկ մտավորականն ու հրաշալի մարդն է, որը նկատեց և առաջինը գնահատեց իմ ստեղծագործական «փորձերը»: Նա հուսադրեց ինձ և ոգևորեց իր խորհուրդներով՝ մղելով ինձ դեպի ստեղծագործական որոնումների բարդ ասպարեզը: Ահա Վարդան Հակոբյանի խոսքը, որ զետեղվել է թերթում՝ «Նոր անուն» խորագրի տակ: «Ռոբերտ Եսայանի բանաստեղծությունները վարակում են իրենց անմիջականությամբ, տեղ-տեղ դա հասնում է մանկական պարզության: Ախր, նա բոլորովին նոր է բաժանվել մանկությունից: Բայց և արդեն զգում է իր հասունացումը. «Հասունությունս երգով է հղի…»: Ռոբերտի հաջողված երգերում ամեն տող ունի իր բնավորությունը, հեռու է ուրիշ տողերի հաշվին ապրելու մոլորությունից: Բարի ճանապարհ մաղթենք նրան և հավատանք, որ Ռոբերտ Եսայան անվանը հանդիպելիս, ամեն անգամ մեզ կպարուրեն բանաստեղծական թարմությունն ու ջերմությունը»:

- Ամեն բանաստեղծ ունի իր ներշնչանքի աղբյուրը: Ստեղծագործական առաջին շրջանում բանաստեղծությունը Ձեզ համար «արծաթե հայելի» էր, ուր փորձում էիք գտնել Ձեզ հուզող երևույթների նրբերանգները:

- 17 տարեկանում գրեցի մի բանաստեղծություն, որն ինձ համար դարձավ ուղեցույց. Արծաթե հայելում//Տեսնում եմ ու շտկում//
Իմ արտաքինը, //Իսկ իմ պարզ երգի մեջ՝ //Իմ ներսը, խորքը…//
Եվ ամենքի՛նը:

Այստեղ տեսնելու չափ կարևոր է նաև երանգ շտկելը… Այդ բառը կարծես առաջին անգամ է հայտնվում բանաստեղծության տա-

րածքում և իրեն լավ է զգում: Դժվարը ոչ միայն տեսնելն է, այլև ներաշխարհում շտկում կատարելը:

Ո՞րն է իմ ներշնչանքի աղբյուրը: Նախ և առաջ՝ իմ հուզաշխարհը: Սերը դեռ չծնված՝ վերածվում էր ցավի…

Քո անմեղության ժպիտը լուսե//աչքերիդ շողից//իմ աչքերի մեջ//աստղեր կիյուսի…

Փոթորկված լույսից հանված տողը կյանքի ակունքն է, ուր ծիածանվում է բանաստեղծի երազանքը: Բառը դառնում է հավատի և հաղորդակցության շեմ:

- Իսկ ո՞րն է բանաստեղծի և կյանքի կապը: Գուցե բա՞ռն է: Կամ այն երազը, որ ապրում է հոգու մեջ՝ ժամանակ առ ժամանակ Ձեզ առնչելով կյանքի աներևույթ գաղտնիքներին:

- Գիտեմ միայն մի բան. ստեղծելու համար մաքառել է պետք: Եվ պետք է հասնել… Անհասին: Բառի տարածությունը նվաճվում է խորքից: Եվ բառը դառնում է հոգևոր հայրենիք: Բանաստեղծի և կյանքի կապը՝ սերն է:

- Իսկ նամակն ի՞նչ դերակատարություն ունի Ձեր կյանքում:

- Նամակը հաղորդակցության միջոց է: Հոգու սպեղանի՜: Նամակը պատգա՛մ է նաև: Ջերմ զրուցակից: Մի օր բանաստեղծություններս ուղարկեցի մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազին: Եվ երբ ստացա ու կարդացի Գարունների Արքայի պատասխանը, հասկացա, որ խոսքն այս նամակում պատգա՛մ է. «Անդուլ կարդա՛, անդուլ աշխատի՛ր, անդուլ ստեղծի՛ր: Բարդ ճամփա՛ քեզ»: Հասկացա նաև, որ սկսվել է իմ ստեղծագործական կյանքի նոր շրջանը: Դա երազի և իրականության բախման շրջա՛ն է: Փոխսնուցման և փոխլրացման անխոնջ ու անդադար… Տեսիլաժա՛մը…

Մինչ մենք զրուցում էինք՝ մի բանաստեղծություն ծնվեց.

Սերը դեռ չծնված՝ վերածվում է ցավի՜,
մութը խտանում է՝ դեռ չծագած լույսը,
միտքը չիրողացած՝ ժամանակից դուրս է,
և պահը չայցելած՝ մասնիկն է անցյալի:

Հարցազրույցը՝ Վարդուհի Առուշանյանի
26.03.2019թ.

«ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԻ»

Ի՞նչ արժե բանաստեղծի մեծությունը, որ կտրված է իր հոգու հարազատ դաշտից և գեղարվեստ է ծնում բարոյահոգեբանորեն մերժելի ու անհարիր միջավայրում: Արդյոք, այդ գեղարվեստը ունա՞կ է կրելու ազնիվ ու վսեմ գեղագիտության ողջ ծանրությունը: Ես կտրական «ոչ» եմ ասում, անգամ խիստ կասկածում բացառությանը, իսկ «բանաստեղծ» հասկացության կողքին «մեծություն» բնութագրականը կարելի է գործածել սոսկ ցինիկաբար:

Թանկ ու հրաշալի է հակառակ պարագան: Բանաստեղծի տողը պարզապես ծագում է իրեն վերապահած ոգեղեն ու տարածական ոլորտում, և տողը ճառագայթի պես է լինում, գավազանի ու կողմնացույցի: Այդ տողով հրապուրվում ես, ոգևորվում նրա իսկական ուժով ու գեղեցկությամբ: Քո հոգևոր ստնտուն ես համարում այդ տողի տիրոջը, որ փայլեցնում է բանաստեղծի կերպարը իրենով ու իր զտարյուն տառապանքով:

Բանաստեղծի կերպարը հենց այդպես է կրում Ռոբերտ Եսայանը: Նա իր ոգու դաշտում ազնիվ ու տաղանդավոր սերմնացան է, և ոչինչ չի ոչնչացնում նրա բերքը՝ լինի հոգևոր-սոցիալական ճգնաժամ, լինի պատերազմ, թե մի այլ վերահաս կամ հնարովի պատիժ:

Վերջերս «Արցախ» հրատարակչության կողմից լույս ընծայված նոր՝ «Տարածություն և հոգի» գրքով Ռոբերտը իր երրորդ խոսքն է հղում ընթերցողներին՝ դարձյալ բերված մտքի ու հոգու մաքուր խորություններից, ողողված նուրբ արվեստով ու հուժկու քնարականությամբ: Այլ կերպ չի էլ պատկերվի ու իմաստավորի նրա մատնանշած տարածությունն ու հոգին, ուր գրեթե ամեն ինչի պտտահողմ կա: Բանաստեղծի զգացած երկինքը հարություն է առնում իր սիրելիի ծնկների սրսփանքի մեջ, նրան դյութում է մի մսե պատրանք, տեսնում է՝ ինչպես է հաճույքի դժոխքը իշխում անորոշության անդունդի վրա, որ թարթիչից կաթած գիշերը տաք ու թանձր է մեղքի նման, որ լույսի բնի մեջ խաղաղ երկնքի ծվեները շարժվում են մերկ ձագերի պես, որ բանաստեղծը հոգեդարձման լուսե ակնթարթ է, և այլ պեղված իրողություններ:

Դյուրամարս ու թեթև չէ Ռոբերտ Եսայանի բանաստեղծությունը: Այն փոքրիկ մի շրջանից հանկարծ ոստյուն է կատարում դեպի անպարփակ տարածքներ, և յուրաքանչյուր կետում բանաստեղծի հոգին փորձում է գտնել իր ցավը և ուրախության անդրադարձները: Ռոբերտը գրում է մեծավ մասամբ խիտ պատկերներով, մտքի լարումով, ու եթե անգամ ակամա հեռանում է անզգայելի վերացականության ոլորտները, էլի չի կորցնում իր կերպն ու ձայնը: Եվ չափազանց էական է, որ կարևոր բացահայտումների հետ նա միաժամանակ բաց կամ ենթատեքստով մեր աչքը ուղղում է նոր կետերի վրա՝ մարդկային, ժամանակային ու հոգևոր, գեղագիտական:

Մենք «դիտմամբ» մոռանում ենք մնացյալը և քննում միայն գեղարվեստական հարցեր:

- Քո առաջին իսկ գրքից սկսած դու հարազատ ես մնում խորհրդանշանների մի խմբի, որով հաճախակի ես կառուցում բանաստեղծական տներդ: Այդ խորհրդանշանները ես կբաժանեի երկու ենթախմբերի:

Առաջին. տենդ, ունայնություն, կարմիր, հոգեվարք, մեղք, մոխիր…

Երկրորդ. անհուն, սեր, վայրկյաններ, շուրթեր, թևեր, ոգի…

Նկատել եմ, որ հենց դրանք են իրենցով մարմնավորում քո բանաստեղծական սուզումները, և միմյանց հակադիր կոչում ունենալով, ներդաշնակորեն ու համերաշխաբար կրում են քո մատուցած բեռը: Իսկապե՞ս հիշյալ խորհրդանշաններին այնքան էական տեղ ես հատկացնում, թե՞ նկատածս ընդամենը մակերեսային տպավորություն է:

- Խորհրդանշանները «Տարածություն և հոգի» գրքի բանաստեղծություններում ուղեկցող ջահերի դեր են կատարում և լուսավորում են այն ճանապարհը, որով թևում է մարդկային հոգին՝որոնելու իր սփոփանքի տարածքները, ինքնաճանաչման լույսով բուժելու այն ցավը, որ ժամանակի ու կյանքի հարուցած ցավերն են: Գուցե դրանք խորհրդանշաններ էլ չեն, դրանք բառեր են, որոնք իրենց մեջ կրում են պատկերային ավելի մեծ էներգիա ու լույս, քան մյուս բառերը: Ցավը, որից ծնվել են գրքի բանաստեղծությունները, հին է, մեր ժողովրդի դարավոր ցավն է, հին են և

խորհրդանշաններն այն, որոնց միջոցով հոգին լինելության հանգրվան է որոնում, սակայն ինքնարտահայտումը (որ բանաստեղծի համար ամենագլխավոր խնդիրն է), կատարվել է հենց դրանց միջոցով: Ես վախենում էի, որ մեր տխրության ու ցավի պոեզիային նորից ցավ ու տխրություն են գումարվելու, բայց ինչ արած, կյանքի էությունը այդպիսին է, ներշնչանքը ինձ տանում էր այդ ճանապարհով և չէի կարող չհետևել նրան:

- Տարածության և հոգու հոլովույթը դու տեղավորել ես դասական չափի՝ սոնետի մեջ: Ինչո՞ւ նախապատվությունը տվել ես բանաստեղծական այդ ձևին, երբ կարծես ընդգրկածդ նյութը թելադրում է ազատ, նույնիսկ հախուռն չափեր:

- Ընտրելով սոնետը, որպես չափ, ես ընտրեցի նախ և առաջ ինքնարտահայտման իմ ճանապարհը: Դա անկեղծ ու անմիջական խոսքն է՝ ոգու և ռիթմի շնչառության մեջ: Ներսից ճանաչելով բանաստեղծական այդ չափը, ես կարողացա հասնել ներդաշնակության ոգուն՝ նաև դրսի՛ց: Ներսը և դուրսը բաբախուն հոգի՛ն են բանաստեղծության: Սա՛ է ճշմարտության դիմագիծը: Սոնետը անոթ չէ, այլ՝ շնչառությո՛ւն:

- Գրքիդ մեջ տեղ է գտել «Տարածություն և հոգի» շարքի մի մասը միայն: Ի՞նչ ճակատագիր ես նախատեսում մնացյալի համար:

- Այն զգացողությունն ունեմ, որ այդ շարքը չի ավարտվել և երբեք էլ չի ավարտվելու: Հենց «Տարածություն և հոգի» վերնագիրը դա է հուշում: Գրելն ընդհատել եմ այն ժամանակ, երբ զգացել եմ, որ ներշնչանքի ալիքը թուլացել է, ծնվում են թույլ ու հաշմանդամ երգեր:

- Ժողովածուիդ գործերը գրված են մինչև մարտադաշտ մեկնելդ: Այն հիմա ևս նույն կերպ ես ընկալում ու արժեքավորում:

- Ինձ համար դժվար է արժեքավորել այդ շարքը, քանի որ այն չի ավարտված, ես դեռևս իմ էությամբ չեմ կտրվել նրա ակունքներից: Բայց և չեմ կարող սկսել նոր շարք: Գրքի բանաստեղծությունների թեմաները բազմազան են, որևէ կոնկրետ ժամանակի արտացոլում չեն, բայց իրենց մեջ կրում են կյանքի որևէ հատվածի տարրեր, որոնք խարսխված են իմ վերացական զգացողություններն արտահայտող տողերի մեջ…

«Տարածություն և հոգի» գրքի շապիկը:Նկ.՝ Ա.Ս.Ղուկասյանի

*

Ռոբերտ Եսայանի բացած բանաստեղծական նոր տարածության մեջ հայոց բառը խորն է մերված իրեն ու իրեն վայել ճակատագիր որոնող անհատին: Վերջինս որքան էլ կրում է բանաստեղծի էության կնիքը, այն մեր ժամանակի մարդու տիպական կերպարին է միտված: Նա ուժգին է զգում հատկապես «մենքի» շնչառությունը:

Կարծես ինչ-որ մեկի սքողված
դիմակն է
Այս աշխարհը: Իսկ մենք նրա
դիմախաղում
Եռացող քաոս ենք - չաստվածացող
մի երգ:

Ահա և մտազգացմունքային մի հրաշալի թռիչք՝ «մենքից» դեպի «չաստվածացող երգ»: Ի վերջո, այդ ցավն է դեռ ծխածածկում բանաստեղծի հոգին, ու երբ ազատվեց - կլինի խրախճանքը մեր կյանքի, սիրո ոլորտներում:

«Տարածություն և հոգի» չափազանց գեղեցիկ վերնագրով մի գիրք՝ դժնդակության մեջ ծնված, պինդ ու նրբակերտ տողերով ծանրաբեռ: Այսինքն՝ բանաստեղծությունն ուժեղ է չարիքից, վերջինիս ախոյանն է և մեր թիկնապահը:

Հրանտ Ալեքսանյան
«Հայաստանի հանրապետություն» օրաթերթ
1993թ., 8 հուլիսի, Երևան

ՄԵՐ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ

«ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՄ ՀԱՍՏԱՏԵԼ ԻՆՁ ՀՈԳԵՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ»

- Սիրելի բանաստեղծ, նախ շնորհավորում եմ «Նժար» ժողովածուի համար Եղիշեի անվան ամենամյա մրցանակի արժանանալու առթիվ: Ձեր մնացած բանաստեղծական ժողովածուները («Հենակետեր», «Ծարաված հետքեր», «Տարածություն և հոգի») նույնպես արժանացել են մրցանակների: Այդ մրցանակները որևէ դեր կատարո՞ւմ են ձեր ստեղծագործական կյանքում:

- Շնորհակալ եմ: Ճիշտ է, այդ մրցանակները իմ ստեղծագործական կյանքում չեն կարող ներքին խթաններ հանդիսանալ, բայց դրանք, բարեբախտաբար, ունեն բանաստեղծի աճն արագացնող հատկություն: «Հենակետեր» և «Ծարաված հետքեր» ժողովածուները արժանացել են Լեռնային Ղարաբաղի գրողների միության Հովհաննես Շիրազի և Ղազարոս Աղայանի անվան ամենամյա մրցանակների, իսկ վերջին երկու գրքերս՝ «Տարածություն և հոգի»-ն և «Նժար»-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Եղիշեի անվան ամենամյա մրցանակների: Իմ գրական ինքնահաստատման ճանապարհին դրանք լուսավոր կետեր են, որոնք իրենց սփոփող արձագանքներն են տարածում հոգուս մեջ՝ ընդլայնելով իմ հայացքներն ու ինքնաբացահայտման հնարավորությունների շրջանակը:

Գևորգ Էմինի նամակը.

«Սիրելիդ իմ Ռոբերտ Եսայան

Ինչ-որ կարևոր բան էի փնտրում և քրքրում էի խառնիխուռն գրքերս ու թղթերս և նրանց մեջ գտա քո բանաստեղծությունների գիրքը՝ «Նժարը»: Գտա, բացեցի մի էջ կարդացի և…իսկույն գրում եմ: Հավանաբար քո նվիրած գիրքը բերել եմ տուն, դրել գրասեղանի գրքերի ու թղթերի վրա,- հետո նրա վրա ուրիշ գրքեր ու թղթեր

են դարսվել և գիրքդ (առանց կարդալու), անհետացել-կորել է նրանց մեջ: Գրում եմ «առանց կարդալու», որովհետև եթե ես գոնե թերթած լինեի, ապա իսկույն կկարդայի սկզբից մինչև վերջ, որովհետև բանաստեղծը երևում է նույնիսկ մի տողից և պատկերից: Հիմա, երևի մեծ ուշացումով, գիրքդ կարդացի անկեղծ հիացումով և պիտի ասեմ, որ քո «Նժարը» թերևս ամենից ծանր է կշռում իմ ընթերցած շատ բանաստեղծական գրքերի համեմատ…

Դու իսկական բանաստեղծ ես - ոչ միայն տաղանդավոր, այլև շատ ու շատ կողմերով ավելի ուժեղ, քան մեր բազմաթիվ «մոդեռն» համարվող բանաստեղծները, քանզի քոնը անգլերենից կամ ֆրանսերենից արտագրված մոդեռն չէ, այլ իսկական, միայն քեզ պատկանող մոդեռն…

Եվ եթե այսօր մեկն ուզենա թվարկել մեր այսօրվա տաղանդավոր բանաստեղծներին, ապա դու անկասկած պիտի լինես նրանց շարքում:

Ի սրտե շնորհավորում եմ քեզ և սպասում քո նոր գրքերին»:

Գևորգ Էմին
1996թ., սեպտեմբեր, ք.Երևան

- Ստանալով Գևորգ Էմինի նամակը և կարդալով ձեր պոեզիան արժեքավորող անվանի բանաստեղծի ջերմ խոսքը, ինչպիսի՞ ապրումներ եք ունեցել:

- Անվանի բանաստեղծի նամակն ինձ համար անակնկալ ուրախություն էր: Կարդալով նամակը, ես հասկացա, որ իմ ստեղծագործական որոնումները ապարդյուն չեն անցել, որ դրանք մեր քնարերգության ուղեծրի մեջ իրենց շառավիղներով առնչվում են ոչ թե օրվա փրփուրներին, այլ մեր ազգային գոյատևման ակունքներին: Գևորգ Էմինի նամակ-արձագանքին միշտ սպասել եմ, սկսած այն պահից, երբ ես կանգնեցի պոեզիայի խորհրդավոր ու գերիչ շեմին, որով ամեն օր ու ամեն վայրկյան, թվում է, թե մտնում եմ (գրքերից գիրք), բայց միշտ մնում եմ կանգնած այդ խորհրդա-


ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

ՀԱՎԵՐԺԻ ԾԱՄՓՈՐԴԸ

Բանաստեղծություններ և պոեմներ

«Լույս» հրատարակչություն Երևան 1985

Գևորգ Էմինի մակագրությունը Ռ.Եսայանին նվիրած՝ «Հավերժի ծամփորդը» գրքի վրա

վոր ու աննվաճ շեմին: Գևորգ Էմինի խոսքը, իհարկե, շոյեց իմ տառապած ինքնասիրությունը, որին միշտ պահել եմ վանդակում, որպեսզի չկորչի մեծամտության հովերի մեջ, ու դրանից, կարծում եմ, շահել են ոչ միայն իմ տողերը, այլև հնարավորություն եմ ստացել հարստացնելու հոգեպահուստս՝ մեծ ճանապարհի համար:

- *Դուք մեր իրականությունը նպաստավոր եք համարում պոեզիայի զարգացման համար:*

- Իհարկե, նպաստավոր եմ համարում: Մենք երկիր ենք կառուցում նաև բանաստեղծությամբ: Մարդկային հոգու այն տարածքը, որտեղ բանաստեղծությունն է ապրում, և միաժամանակ ապրեցնում իր հետ առնչվող գոյություններին, մի այլ բանով լցնել հնարավոր չէ: Երկար ժամանակ ես այն կարծիքն ունեի, որ մեր քերթության մեծերը, հայրենիքի կորստի աղաղակող վտանգից մղված, իրենց ստեղծագործություններում ստեղծել են հոգևոր հայրենիքի անմահ կերպարը, որպեսզի այդ ճանապարհով գոնե հարատևի հայ ժողովուրդը: Մեր իրականությունն ինձ հուշում է, որ առանց հոգևոր հայրենիքի գոյության, մեր ժողովուրդը չի կարող հասնել կատարելության, ինչքան էլ ունենա մեծ ու լայնարձակ երկիր:

- *Օրվա ո՞ր պահերին եք ավելի շատ ստեղծագործում:*

- Կարելի է ասել, որ ստեղծագործում եմ օրվա բոլոր պահերին: Այն ստեղծագործական խմորումները, որ կատարվում են մտքիս մեջ՝ կյանքի երևույթները դիտելիս կամ իրերի հայացքը որսալիս,

համարում եմ ստեղծագործական ընթացքի գերակշռող մասը: Իսկ բանաստեղծություն գրելու պահերը, որոնցով շատերը սահմանափակում են ստեղծագործական ընթացքը, ավելի կարծատև և բանաստեղծի համար հեշտ պահեր են:

- Գիրք տպագրելն այսօր մեծ դժվարությունների հետ է կապված: Ինչպե՞ս եք հաղթահարում դրանք:

- Ենթադրվում էր, թե տպագրական դժվարությունները դրականորեն պիտի ազդեին գրական ստեղծագործության որակի վրա: Սակայն մեր օրերում հաճախ հանդիպում ենք հակառակ բնույթի օրինակների:

Այդ դժվարությունները մեզ խուճապի մատնել չեն կարող, որովհետև երևույթը նոր չէ մեզ համար: Տպագրական նույն դժվարին վիճակը եղել է նաև դարասկզբին: Հովի. Թումանյանի, Վ. Տերյանի, Սիամանթոյի ժողովածուները նույնպես տագրվում էին հարուստ հովանավորների կամ մերձավորների միջոցով:

Տպագրական դժվարությունների ես առայժմ չեմ հանդիպել:

Իմ վերջին երկու գրքերը տպագրել էր ԼՂՀ գրողների միության «Արցախ» հրատարակչությունը:

- Ստեղծագործական ինչպիսի՞ ծրագրեր ու մտահղացումներ ունեք, որ պիտի մարմնավորվեն 1997 թվականին:

- 1997թ. ես մտադիր եմ տպագրել բանաստեղծությունների նոր ժողովածու, որը կկրի «Քաոս և լույս» վերնագիրը: Այդ գիրքը «Նժարից» կտարբերվի և թեմաներով, և բանաստեղծական մտածողությամբ: Նպատակ ունեմ հաստատել ինձ հոգևոր նոր տարածքներում:

Հարցազրույցը՝ Վարդուհի Բաղդասարյանի
«Եղիցի լույս», 1996թ.

ՊՈԵԶԻԱ. ԵՐԿՐԱՅԻՆ, ԹԵ ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԱՇՔ

Խմբագրությունը, հրավիրելով երկխոսության, ձեր ուշադրությանն է ներկայացնում մի հարցարան, հույս ունենալով, որ ձեր մասնակցությունը հնարավորություն կտա բացահայտելու այն իրողությունները, որոնք (առանց մեզ կամ մեր մասնակցությամբ) կատարվում են բանաստեղծության բարդ ու առեղծվածային աշխարհում:

Հարցին պատասխանում է Ռոբերտ Եսայանը:

- Արդյո՞ք, ճիշտ է, որ այսօր բանաստեղծություն ընթերցողների թիվը պակասել է:

- Պակասել է այն ընթերցողների թիվը, որոնց համար գիրքը տան զարդարանքն է եղել միայն: Եվ հիմա, երբ այդ «զարդարանքը» կորցրել է իր արդիականությունը, նրանք ճարահատյալ ասում են, թե բանաստեղծություն ընթերցողների թիվը պակասել է, թե մարդ մտահոգված է միայն տան սնունդն ապահովելու հոգսով…

Եթե բանաստեղծություն գրողը ընտրյալ է, ինչո՞ւ ընտրյալ չլինի նաև… ընթերցողը: Ընթերցող բառը ավելի խոր ու լայն հասկացողություն է: Ինչպես մարդն է ընդունում լուսաբացը, այնպես էլ ընթերցողն է ընդունում բանաստեղծի հոգու լույսը: Գրական ստեղծագործությունը, շարունակելով արարվել նաև ընթերցողի մեջ (որի էությունը երբեք չեզոք տարածություն չէ, այլ կլանող, զտող, մաքրող, հարություն տվող մի տիեզերք է՝ բանաստեղծ-տիեզերքի դիմաց), կարող է մոռացության շղարշների միջից դուրս գալ ու հարատևել թեկո՞ւզ մեկ ընթերցողի սրտի տիեզերական թրթիռով:

- Ժամանակակից հայ պոեզայի ի՞նչ առանձնահատկությունների մասին կցանկանայիք խոսել:

- Իմ կարծիքով, ժամանակակից հայ պոեզիայի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ նա հաղթահարեց սովորույթի ուժը և ընթացավ ո՛չ ծանոթ և ո՛չ էլ մաշված ճանապարհով: Հաս-

կանալի է, որ այդ հաղթահարումը միայն մի սերնդի համար չէր, ոչ էլ թեթև արվեստ ստեղծելու նպատակով էր արված: Այդ հաղթահարումը գրական մեծ ձիրքի ու կարողության, ստեղծագործական հարուստ ու բազմաբնույթ եղանակների առկայության արտահայտություն է: Այսօր մենք ունենք ինքնատիպ բանաստեղծների մի համաստեղություն. Ռազմիկ Դավոյան, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան, Հովհաննես Գրիգորյան, Վարդան Հակոբյան, Արմեն Մարտիրոսյան, Դավիթ Հովհաննես, Հրաչյա Սարուխան, Հակոբ Մովսես, Հրաչյա Բեյլերյան, Հրանտ Ալեքսանյան և ուրիշներ, որոնք տարբերվելով իրարից պատկերավոր մտածողությամբ ու ոճով, հարստացնում են արդի հայ գրականությունը իրենց գրչի նվաճած ոգու նոր տարածքներով:

Ձևի առումով ժամանակակից հայ բանաստեղծները կարծես թե նորություն չեն բերում: Լուսնի տակ ոչինչ նոր չէ: Բայց ճշմարիտ է նաև այն, որ գետը նույն տեղով երկու անգամ չի անցնում՝ նույն ձևով: Ժամանակակից հայ բանաստեղծների ստեղծագործություններում նկատվում են նոր թեմաների տեղաշարժեր, պատկերավոր մտածողության նոր աստիճանների նվաճում, որոնք պոեզիա են բերում նոր հոգեբանություն: Իմ կարծիքով, ժամանակակից հայ բանաստեղծների բերած նորույթը ինքնատիպ ոճն է, էությունը, հոգին, այն համադրությունը, որի միջոցով ստեղծվել են արդի հայ քնարերգության մարգարիտները:

- *Պոեզիան կյանքից վեր երևույթ է:*

- Պոզիան թեև «երկրից է աճում և ոչ թե ձայներից ու բառերից», բայց ունի նաև վերերկրային կյանք: Պոեզիան երկրայինի և երկնայինի հաղորդակցություն է, որը ստեղծվում է բանաստեղծի միջոցով և երբեք չի ընդհատվում:

Բանաստեղծը հազարամյակների մեծ լռության կրողն է, նրա սիրտը ծակծկված է բազում հարցերով, մտքի մեջ անսահմանությունն ու հողն են համբուրվում, շրթունքին բոլոր իրերը փնտրում են իրենց անունները:

Պոեզիան ապրում է մեր կողքին, որպես ոգի, թևածում երկինքների միջով, իջնում է ծառերի ճյուղերին՝ փաթիլների պես, ծիծաղում բողբոջների միջից… Բանաստեղծը բառերով վերամարմնավորում է նրան, թևավորում իր ոգու ռիթմով, իր շունչն ու դեմքն է տալիս նրան, որպեսզի նրա գեղեցկությունը մատչելի լինի մարդու համար: Այն համոզմունքն ունեմ, որ պոեզիայի համար (ինչպես մարդու համար) ամենաթանկ բանը ազատությունն է: Լավ է պոեզիան զուրկ լինի անգամ գաղափարից, քան ազատությունից: Բառը միշտ ձգտում է ազատվել իր իմաստի կաղապարից, իսկ իմաստը՝ բառի կաղապարից: Նույն հարաբերության մեջ են գրական ստեղծագործության բովանդակությունն ու ձևը, մարդու մարմինն ու հոգին: Նրանց միջև շարունակվող պայքարը հենց կյանք պարգևող ուժն է, որը ստեղծում է ներդաշնակություն: Իսկ եթե բառի իմաստն ու բառի կաղապարը, գրական ստեղծագործության բովանդակությունն ու ձևը, մարդու հոգին ու մարմինը համակերպվում են, նշանակում է՝ նրանցից որևէ մեկը մեռած է և ժամանակի տարածքներից այլևս չի ստանում նոր լիցքեր, կյանքի ազդեցության տակ այլևս ի վիճակի չի փոփոխվելու…

Պարտադրված նոտայի վրա նվագված գրական ստեղծագործությունները, որոնք ավելի մեծաթիվ ընթերցողների ուշադրություն են գրավում, հիմնականում նեխում են դարի կոկորդում:

«Շուշի» թերթ»,
դեկտեմբեր, 1996թ.

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՄԻԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարցազրույց բանաստեղծ Ռոբերտ Եսայանի հետ՝ գրական գործունեության 25-ամյակի առթիվ

- 25 տարի է անցել այն օրից, երբ Դուք մտաք գրական ասպարեզ: Ի՞նչ ապրումներ եք ունենում, երբ մի պահ ետ եք նայում:

- Քարերի պես կարծր էին բառերը և ճնշում էին իմ ապրումների եռացող ակունքներին: Ես թփրտում էի որոնումների ցանցի մեջ և կառչելով հոգուս մեջ ծավալվող արվեստի դողից՝ առաջանում էի և ամեն մի նոր քայլ կատարելուց հետո՝ լսում, թե ինչպես էին ճչում ոտքերիս տակ սովորույթի կաղապարները: Ես հողի պես մանրացնում էի սովորույթի կաղապարները և լցնում պատրանքների դիակների վրա, հետո ակոսներ էի քաշում տողերիս շնչառությամբ և բառերի սերմեր ցանում՝ սպասելով լուսաբացի առաջին ճառագայթին: Այդ ճառագայթն ինձ համար դարձավ Ռիլկեի խոսքը՝ «Եվ հաղթանակ չկա: Միայն՝ հաղթահարում»: Ինքնահաղթահարման անվերջ մի ճանապարհ է բառը, որի մեջ թրծվում են իմ ոգին ու հայացքը: Մինչև որ մի օր հասկացա, որ իմ հոգին ավիշի պես հազարամյակի կեղևն ի վեր ելնող հայացք է, իսկ իմ հայացքը՝ բողբոջող ոգի, որ անընդհատ թարմացնում է ժամանակի շնչառությունը:

Իմ արմատը տեսնելու համար ես ետ չեմ նայում: Նայում եմ ճանապարհի լույսին: Այն բանաստեղծությունները, որ ստեղծել եմ, չեն մնում ետևում, այլ միշտ առաջ են շարժվում՝ լուսավորելով երազի ճակատը, որտեղ գրված է՝ «Մահն էլ սեր է»: Կարդում եմ այս լուսատու խոսքը և երբեք չեմ կարողանում ինքս ինձ համոզել, որ «մահն էլ սեր է»: Թեև իմ բանաստեղծությունները ինձ ավելի են մոտեցնում այս խոսքի կեղևին, որը ճեղքելու համար անզոր են իմ ներշնչումն ու ուժը: Գուցե ճեղքելու կարիքն էլ չկա: Գուցե,- ասում է իմ ճանապարհը և բացում բանաստեղծության կոպերը:

- Բանաստեղծի ապրած ժամանակը ինչպիսի՞ թելերով է առնչվում նրա ստեղծագործությունների ոգուն:

- Ամեն բանաստեղծ իր ուժի չափով է ժամանակի ակունքներից երազներ ըմպում, հետո ստեղծագործաբար վերարտադրելով՝ հասնում է անկանխատեսելի շիկացումների:

Իմ ստեղծագործությունը ես համարում եմ Արցախյան շարժման ծնունդ: Արցախյան շարժման ծնունդ են և իմ սերնդակից բանաստեղծների ստեղծագործությունները: Մտածողությունների տարբերությունից ելնելով՝ կարող ենք հավաստել, որ նույն սերնդի ամեն մի բանաստեղծ ստեղծել է իր գրական ժամանակը, որը նման չէ որևէ ժամանակի, թեև իր հիմքում ունի ժողովրդի նույն հուզումը, որ կոչվում է «Արցախյան շարժում»: Մեծ է այն բանաստեղծը, որը իր ապրած ներկայի ոգին բացահայտում է հավերժի շնչառության ալիքներում՝ դրանով իսկ խթանելով երազների և գաղտնիքների լուսավորման ընթացքը:

- Երբևէ հիացել եք Ձեր ստեղծած բանաստեղծություններով:

- Եթե ես մշտապես դժգոհ եմ ինքնարտահայտման գործընթացից, դա չի նշանակում, թե ես չեմ կարող հիանալ իմ տողով, պատկերով, բանաստեղծություններով: Բայց ես ավելի շատ հիանում եմ այն տողերով ու պատկերներով, որոնք աշխարհ են գալիս ենթագիտակցության խորքերից, ինքնաբերաբար, կարծես հողեղեն չեն, եթերային են ու անէ:

- 25 տարիների ընթացքում երբևէ ափսոսացել եք պոեզիային նվիրած ժամանակի համար և Ձեր ընտրած ճանապարհը համարել սխալ ու անարդյունք:

- Իմ նշանաբանն է՝ խփել միշտ նույն կետին: Համբերությունը բանաստեղծի համար, իրոք, ոսկի է: Համառ աշխատանքը ընդլայնում է բանաստեղծի շնչառությունը, բացում այնպիսի շերտեր, որոնք անհասության թևերի տակ են: Ոչ միայն չեմ ափսոսացել, այլև չեմ էլ երկմտել, թե գուցե կա ավելի օրինյալ ճանապարհ: Ավելին, բանաստեղծությունը իմ կյանքի իմաստավորումն է, շարժումը և ինքնաճանաչման միակ հնարավորությունը:

Հարցազրույցը՝ Նարինե Աբրահամյանի
2001թ.

ՔԱՈՍԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ

- Ասում են՝ բանաստեղծ ծնվում են, ոչ թե դառնում: Ըստ Ձեզ, դա, իրո՞ք, այդպես է:

- Շատ բարդ հարց է և միաժամանակ՝ շատ պարզ: Իմ անցած գրական ճանապարհը հիշելով, չեմ կարող միանշանակ ասել՝ թե բանաստեղծ ծնվում են: Միաժամանակ չեմ կարող պնդել, թե՝ բանաստեղծ դառնո՛ւմ են: Ավելի ճիշտ կլինի, եթե ասեմ՝ ծնվում են, որպեսզի դառնա՛ն բանաստեղծ: Որովհետև բանաստեղծի ծննդից հետո սկսվում է ստեղծագործական աճի շրջանը, որը լինելով բարդ ու հակասություններով լի ժամանակահատված, միաժամանակ ուղենշում է բանաստեղծի հետագա ստեղծագործական կյանքի ընթացքը, բացում կարողությունների և ունակությունների նոր հորիզոններ: Բանաստեղծը դիմում է ռիսկի՝ անմնացորդ նվիրվելով սրբազան գործին: Ինքնազոհության հավասար նվիրում է սա, որն արդարացվում է միայն այն ժամանակ, երբ բանաստեղծին հաջողվում է իրականացնել ինքնահաղթահարման բարդ ու հակասական գործընթացը, երբ ստեղծագործական արդյունքը գերազանցում է սպասված չափանիշը:

- Արդեն բանաստեղծական մի շարք գրքերի հեղինակ եք: Ստեղծագործական ի՞նչ նոր ծրագրեր ունե՞ք…

-Հրատարակության եմ պատրաստել «Ոգու ճանապարհ», «Կամքի հորիզոններ» արձակ ստեղծագործությունների և «Սոնետներ», «Առասպելյալ գարուն» բանաստեղծությունների ժողովածուները: «Ոգու ճանապարհ» և «Կամքի հորիզոններ» ժողովածուներն ընդգրկում են Արցախյան գոյամարտի մասին գրած ակնարկներս, որոնք տպագրվել են «Հայ զինվոր», «Մարտիկ», «Ազատ Արցախ», «Եղիցի լույս», «Ազդակ» և «Շուշի» թերթերում: «Սոնետներ» ժողովածուում ընդգրկված է 100 բանաստեղծություն, որոնց վրա կատարած ստեղծագործական աշխատանքը 10

տարուց ավելի տևողություն ունի: «Սոնետներ» գիրքը ես համարում եմ իմ ստեղծած լավագույն ստեղծագործությունը: «Առասպելյալ գարուն» ժողովածուն ընդգրկում է վերջին տարիներին գրած բանաստեղծություններս, որտեղ փորձել եմ միաձուլել զինվորի կյանքն ու գարնան տարերքը, մարտական կյանքի բարոյական մաքրությունն ու ազգային իղձերի նպատակասլացությունը:

- Ի՞նչ նպատակներ ունեք, որոնց դեռ չեք հասել:

- Ես չեմ հասել ինքնարտահայտման հրաշքին:

- Ճանաչո՞ւմ եք Ձեր ընթերցողին, եթե այո՝ ո՞վ է նա:

- Իմ ընթերցողը նախ և առաջ իմ խոհակիցն է, մի մարդ, որի մեջ արձագանքում են իմ ձայնը, խիղճը, միտքը… Մեր միջև կա մի տարածություն, որը ոչ թե բաժանող, այլ միացնող՝ պրպտո՛ղ, ներշնչո՛ղ, թևավորո՛ղ ոգի է: Ես միայն մի մարդ չեմ, իմ մեջ միաժամանակ ապրում են և՛ բանաստեղծը, և՛ ընթերցողը: Ես իմ ընթերցողի գոյատևման հո՛ղն եմ: Եվ ձգտո՛ւմ եմ ավելի մեծ շրջանակների հաղորդակցության:

- Ինչպե՞ս է հղանում Ձեր մեջ բանաստեղծությունը:

- Ամեն բանաստեղծություն իր յուրօրինակ ծնունդն ունի: Կան բանաստեղծություններ, որոնք գրվում են միանգամից, և ժամանակի ընթացքում նրանց այլևս չեմ անդրադառնում: Կան բանաստեղծություններ էլ, որոնք գրվում են մի քանի օրերի, ամիսների կամ էլ տարիների ընթացքում, տողերի, երբեմն էլ տների նպատակային տեղաշարժերի միջոցով կենտրոնացվում է զգացմունքների ուժը, բայց չի սահմանափակվում որևէ պատկերով, մղվում է դեպի ինքնաճանաչման շարունակական ընթացքը: Հետագայում այդ բանաստեղծությունները ձեռք են բերում կյանքի հետ նորանոր առնչություններ, միաժամանակ իրենց թռիչքի մեջ արտացոլելով վայրկյանն ու դարը, կոնկրետն ու ընդհանուրը, վերացականն ու առարկայականը…Վերջնական չափանիշը գեղեցիկի հայտնագործումն է:

Սևագրությունների տետրը, որտեղ ես գրի եմ առնում յուրաքանչյուր պատկեր, տող, ասելիքի խայտանք, ինձ համար հանդիսանում է ստեղծագործական հումք, և իմ միտքը, անընդհատ փորփրելով այդ մշտական կրակարանը, հանում է այնտեղից անսպասելի և անհավանական թվացող բռնկումներ: Ժամանակն է կարծես թե նախապատրաստում բանաստեղծություններիս ծնունդը: Զգացվում է նաև Մեծն ներշնչող Աստծո ներկայությունը: Շատ կարևոր է, որ ստեղծագործական գործընթացի ժամանակ հեղինակը չբռնանա պատկերների ինքնադրսևորման եղանակների վրա, իր «չեզոքությամբ» պայմաններ ստեղծի, որպեսզի չխաթարվի բանաստեղծության ինքնահայտնաբերման սուրբ պահը:

- Բառերն ավելի շատ օգնո՞ւմ են Ձեզ, թե խանգարում:

- Բանաստեղծի համար անծանոթ են բոլոր բառերը և անհայտության լավայով ծածկված: Տողի սլացքի մեջ է բանաստեղծը ճանաչում բառը:

Եթե բառերն արդեն ոգեղեն են, նրանք թևեր ունեն և թռչում են ժամանակի միջով, բանաստեղծին միշտ փրկում են անորոշության խոչընդոտներից: Այդպիսի բառերը աղբյուրի ակունք են դառնում և իրենց ջուրը հանում դարերի խորքից:

Բառերը նաև իրենց մեջ մեծ լռություն են կրում, որը բացվում է բանաստեղծության ճիչով:

Եթե բանաստեղծը զգում է, որ իրեն բառերը խանգարում են, նշանակում է՝ ներշնչանքի ժամանակ շրջապատվել է օտար, պարապ ու «անհոգի» բառերով, որոնց համար հետաքրքիր չեն քերթողի ապրումներն ու հույզերը: Այդ դեպքում նա պիտի շարունակի ստեղծագործել… առանց բառերի…

Բառերը բանաստեղծի համար խթանիչ ուժ են:

- Ե՞րբ եք բանաստեղծությունը համարում լիովին ավարտված:

- Այն բանաստեղծությունները, որոնք բավականին հեռանում են իմ հոգեաշխարհի խլրտումներից և կորցնում են ժամանակի

կեռերից բռնելու ունակությունը, ես համարում եմ լիովին ավարտված և… ինչ-որ տեղ խղճում եմ նրանց, ինչպես ծնողն է խղճում… իր հաշմանդամ, հիվանդ զավակներին:

Բանաստեղծությունը մշտապես շարժման մեջ է և երբեք չի ավարտվում: Նա ընթացք է, թռիչք և լուսավորում:

- Գրական մթնոլորտը, որ գոյություն ունի այսօր Արցախում, ինչպիսի՞ դեր է կատարում երիտասարդ բանաստեղծների աճի և զարգացման գործում:

- Ժամանակի գրական մթնոլորտը երիտասարդ հեղինակներին հնարավորություն է տալիս ոչ միայն արագ կողմնորոշվել բանաստեղծական ժամանակահունչ ձևերի և միջոցների ընտրության հարցում, այլև մեկից երկու տարվա ընթացքում ի զորու է նրանց դուրս բերել որոնումների բարդ շրջապտույտից և հասցնել ինքնահայտնաբերման ոգու դարպասներին:

Իմ սերնդի բանաստեղծները այդ շրջանն անցել են 10-15 տարվա ընթացքում:

- Հեշտ է, արդյոք, կյանքը մտավորականի համար, հատկապես՝ մեր օրերում:

- Հերոսություն է մտավորականի կյանքը քաոսային մթնոլորտում:

- Դուք ինչպիսի՞ն եք տեսնում Արցախի ապագան:

- Ես լավատես եմ, որովհետև տեսնում եմ հայոց լինելության արմատների աչքերով: Մեր կյանքը առողջացման ընթացքի մեջ է: Պետք է ավելի շատ գործել նոր սերնդի հոգեաշխարհի ձևավորման ու կայացման սուրբ գործի համար: Որպեսզի կյանքի ընթացքը չկտրվի արմատներից:Այն գաղափարները, որոնց համար պայքարել ու մարտնչել ենք, զոհեր ենք տվել մարտադաշտերում, չպիտի դառնան…կյանքի հավելվածներ: Ազգային արժեքները պիտի պահպանվեն օրենքով: Ա՛յս է քաոսը հաղթահարելու միակ ճանապարհը:

Հարցազրույցը՝ Նարինե Աբրահամյանի
19 հուլիսի, 2001թ.

ԵՍ ՈՐՈՆՈՒՄ ԵՄ ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՌԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՎ

- Ինչո՞ւ Ձեր բանաստեղծությունների գիրքը վերնագրել եք «Աներևույթ տեղանքը եսի»:

- Ես շարունակում եմ գնալ Ոգու արահետով, որն անդրադարձն է աներևույթ եսի: Մարդն անտեսանելի խորքեր ունի, որոնք բացահայտվելով՝ դառնում են ժամանակակից ոգու անդրադարձներ և հուզում ընթերողին: Պատկերը պետք է վերցնել խորքից և ոչ թե մակերեսից: Բառերը մղում են ինձ դեպի Ոգու խորքերը, ես որոնում եմ իմ ճանապարհը բառերի ներքին ուղեցույցով: «Անդունդ է տողը» պատկերը երևի պատկերացում է տալիս, թե ես ինչ դժվարություններ եմ հաղթահարում, մինչև հասնում եմ «ներքին պատկերի» ծնունդին:

Իմ տողերում դեռ
մեկը փնտրում է հայացքը Անհայտի,
մյուսը՝ մանկության ապավենը միա՛կ՝
փայտե ձին…

«Որոնման տենդի շրջապտույտում// գտնում եմ աչքերս, // որ իմ հավատի կափարիչներն են»: Ինքս ինձ բացահայտելու և իմաստավորելու ճանապարհին եմ ես: Անընդհատ գնում եմ: Չկա կանգառ: Կա միայն «որոնման տենդ» և առաջմղում Ոգու: Ճանապարհը մտածողություն է: Աներևույթ տեղանքը եսի:

Պատանդ է այստեղ լույսի ժամանակը:

Այս տողերն ինքնին բնութագրում են իրականության դրամատիզմը և իմ ոգու դինամիկան:

Հայացքիս մոմերով
լուսավորում եմ
հորիզոնները տառապանքների:

- Ի՞նչ կասեիք ժամանակակից բանաստեղծության լեզվամտածողության մասին:

- Ժամանակակից բանաստեղծությունը հաղթահարել է սովորույթի պատնեշները, հանգերի և պարտադրված ռիթմերի միապաղաղ երթը, որը պայմանավորված էր նախկին հասարակարգի բետոնե վարագույրներով: Այսօր Ոգու ազատությունն է թելադրում իր լեզվամտածողությունը: Բանաստեղծն այլևս չի խարխափում պարտադրված թեմաների մղձավանջների մեջ: Եվ պատահական չէ, որ ժամանակակից պոեզիան արտահայտում է մարդու հոգեվիճակը, զգացումների ներքին դինամիկան, մտքի թռիչքները, ապրուների դրամատիզմը: «Փողոցի բաժանվող մասում» գրքում Հենրիկ Էդոյանը ունի այսպիսի տողեր.

Բառերի
անարձագանք ճշմարտության մեջ
ես մի տաճար եմ կառուցում քո անվան
վերջին բեկորներից: Մի ձայն
ինձ է փնտրում: Ականջիս մեջ չի լռում մի ճակատագիր:

Սա բանաստեղծի ստեղծագործական ոգու նկարագիրն է: «Արդի պոեզիայի պատմությունը,- գրում է Գ.Պիկոնը,- հանգում է արտահայտչական լեզվի փոխարինմանը արարչական լեզվով... այժմ լեզուն պետք է արարի աշխարհը, որն այևս ի զորու չէ արտահայտել»: Իսկ Վարդան Հակոբյանի պոեզիան սնուցում է Անհայտի ավիշով ու լույսով: Հոգու կոլաժների անհանգիստ աշխարհ է նրա բանաստեղծական պատկերը:

Հավքը բույն է հյուսել հորիզոնի վրա, ուր
բարձրացել է ոսկե
եղեգը՝ սրինգ դառնալուց առաջ:

Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը Վ.Հակոբյանի պոեզիայի մասին գրել է. «Այստեղ ձևը իշխում է բովանդակությանը, բովանդակությունը հանդես է գալիս որպես ձևի հատկանիշ: Ժամանակն ու տա-

րածությունն այստեղ այլ չափում ունեն և գործում են տրամաբանությունից դուրս, ավելի ճշգրիտ՝ ներհյուսվում են միացնող օղակներից զատված տրամադրությամբ, «սյուժեն» պատմություն չի ստեղծում, այլ միայն տեսիլք, օտարվում է գաղափարը պատրանքի ստվերում»:

- Պատերազմի ժամանակ Դուք տիրապետում էիք և՛ զենքին, և՛ գրչին: Ինչպե՞ս էիք համատեղում իրարամերժ պատկերների եզրերը, որ երբեք չի խաթարվում Ձեր ոգու պատկերը:

- Հայրենի հողը պաշտպանող բանաստեղծը, որ զենք է վերցրել ժամանակի պահանջով, պաշտպանում է միաժամանակ և հայրենյաց հարուստ մշակույթը, հայոց լեզուն ու պատմությունը՝ որ գրված է սրբատաշ քարերին: Այդ իսկ պատճառով զենքը նույնն է անում, ինչ գրիչը, ստեղծում է ազատության մթնոլորտ, որպեսզի սերունդները չխարխափեն ստրկության մառախուղում:

- Ի՞նչ չափով է անդրադառնում քննադատական խոսքը բանաստեղծի և նրա ստեղծագործության վրա:

- Ես այն կարծիքին եմ, որ առողջ քննադատությունը կարող է օգտակար լինել բանաստեղծի ստեղծագործական գործընթացի համար: Օգտակար՝ ազատվելու ավելորդ բաղադրամասերից, որոնք ներշնչանքի տարածությունը մուտք են գործում պատահաբար…Վերահսկողություն չեմ ընդունում (բանաստեղծն ազատ է տեղծագործելիս, ինքն է և Աստված), բայց առանձին միջամտություններն օգտակար լինելուց բացի, կարող են հուշել նոր մտքեր, հղացումներ:

- Ձեր կարծիքով, մեր ազգային գրականության ոգին ի՞նչ յուրահատկություններ ունի:

- Մեր ազգային գրականության ոգին վերածնվում է հայոց լեզվի նոր համապատկերում: Ամեն բանաստեղծ ստեղծում է իր լեզուն, իր ժամանակը, իր մտածողությամբ պայմանավորված հոգևոր մթնոլորտը:

Հոգեդարձության ակնթարթներ են
ճանապարհները…

Տիեզերական շարժում է
բառը,
որ մղում է ինձ զոհաբերության…
«Աներևույթ տեղանքը եսի»
Բանաստեղծն իր ճանապարհի ոգով սնուցում է Ապագայի հունդերը:

Գրականության ազգային ոգին վերածնվում ու վերահառնում է նոր խոսքի ակունքներում:

- Այսօր ստեղծվող գրականությունը հոգևոր սնունդ է դառնում ժողովրդի համար:

- Որևէ ժամանակի գրականություն չի կարող լցնել ժամանակակից ընթերցողի հոգու տարածությունը այնպիսի կենարար լույսով, որ բերում է ժամանակակից գրականությունը: Ինչքան էլ «անցումային» լինի այդ գրականությունը, նրա դերը բացառիկ է և անփոխարինելի:

- Ստեղծագործական ինչ նոր ծրագիր ունեք, որ կուզենայիք իրագործել:

- Կարելի է ասել՝ ստեղծագործական եռուն շրջան եմ ապրում: Պատրաստում եմ բանաստեղծությունների և պոեմների նոր գիրք («Ասուպների եզերք»): Գրված են 50-ից ավել բանաստեղծություններ: Ուզում եմ խոսքս ավարտել՝ մեջբերելով հենց այդ անտիպ ժողովածուից մի բանաստեղծություն.

Նպատակ, ուղղություն և հենարան ոգու:
Լռության վիհերը ցնցում են ինձ:
Ես հասնում եմ շերտին հորիզոնի: Եռում է
երկինքը հայացքում ճանապարհի:
Հաղթահարելով ինձ,
ես բացահայտում եմ Ոգին տիեզերքի:

Հարցազրույցը՝ Անուշ Հարությունյանի
30.10.2007թ.

«ՄԻՇՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ՀՈՒՅՍՈՎ»

Կարինե Խալաթովա

- Ռոբերտ «Հենակետեր» գրքից հետո (1989) մինչև այս նոր ժողովածուն ի՞նչ ստեղծագործական տարակուսանքների, մտորումների մեջ էիր:

- «Հենակետեր» գիրքս հանեց ինձ պատրանքներից ու իմ չունեցած «ձեռքբերումներից» և վերադարձրեց իրական հողին: Պետք է ամեն ինչ սկսել նորից: Եվ այս զգացմունքն է միայն ստեղծագործողին առաջ մղում: Ամեն ինքնահիասթափություն հող է նախապատրաստում վերելքի համար…

- Ղարաբաղում էլ, ինչ խոսք, հիասթափության առիթները անպակաս էին, բայց այնուամենայնիվ Ղարաբաղում և ղարաբաղցիների հոգում պոեզիան շարունակվում է՝ այդ ի՞նչ է. ցնորք, հրաշք, պարադոքս…

-Իհարկե, ընդհանուր լարվածությունը ազդում է ստեղծագործական կյանքին: Բայց առաջ ես կարողանում էի այն ինչ-որ կերպ հաղթահարել, իսկ հիմա չի հաջողվում: Մի բան լավ հասկացա. պետք է ուժեղ լինել, չէ՞ որ տարբեր ձևի շրջափակումները տարածվում են նամակների, բայց ոչ պոեզիայի վրա…

- Կարծում եմ դեմ չե՞ս լինի, եթե ընթերցողին ներկայացնեմ ինձ դուր եկած բանաստեղծություններից մեկը՝ «Վայրն այս».

Վայրն այս,
ուր հիմա
համբուրվում ենք մենք,
գուցե եղել է երբևէ հատակ

մոռացված ծովի կամ գաղտնի
անկյուն, ուր մերկացել է
ճակատագիրը,
մարդկանցից հոգնած,
հոգսից, ցավերից մի կերպ ազատված՝
հանգստացել է այս կույս անկյունում,
այդ պահից սկսած շնչավորելով
իր շուրջն ամեն բան
անիմանալի խորքի արթնությամբ…
Վայրն այս,
ուր հիմա
համբուրվում ենք մենք,
կդառնա մի օր հոգու թանգարան…
Վայրն այս,
որից իմ հայացքը պոկում
և ցավ եմ զգում
ես հրաժեշտի պահերին բոլոր.
կարծես հուշերիս կարմիր կեղևն եմ
պոկում,
սիրելի՛ս…

Զրույցը վարեց Կարինե Խալաթովան
1991թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳՈՒ ԿԵՆԱՐԱՐ ԼՈՒՅՍ Է

Հարցազրույց բանաստեղծ Ռոբերտ Եսայանի հետ՝ գրական գործունեության 25-ամյակի առթիվ

- Ռոբերտ, ո՞րն է քո ստեղծագործական 25-ամյա ճանապարհի խորհուրդը:

- 25-ամյա այս շրջանը ես համարում եմ փորձարարական՝ այսուհետև նոր շնչով ու նոր ոգով ստեղծագործելու համար:

- Ովքե՞ր են եղել քո գրական ուսուցիչները:

- Սիամանթոն, Չարենցը և Վարուժանը: Բայց նրանք իմ գրական ուսուցիչները դարձան Պարույր Սևակի բանաստեղծական աշխարհի միջոցով և գրական ժամանակի միջնորդությամբ: Այս ամենին զուգահեռ, կան համաշխարհային արվեստի մեծություններ (ասենք՝ Նարեկացի, Հյուգո, Բոլդեր, Պաստեռնակ, Բլոկ, Ռիլկե, Չարենց և էլի ուրիշներ), որոնց հետ մշտական հաղորդակցության մեջ եմ:

- Ի վերջո, ի՞նչ է բանաստեղծությունը:

- Այն ունայնության պատը փլուզող հոգու կենարար լույս է:

- Դու մասնակցել ես Արցախյան գոյամարտին թե՛ գրչով, թե՛ զենքով: Ո՞րն է դրանցից զորեղը:

- Լինելով Արցախյան շարժման ծնունդ, իմ ստեղծագործությունները ձգտում են մարդկային հոգեբանությունը ազատագրել սովորույթի պատնեշներից՝ դրանով իսկ ազատագրված Հայրենիքին տալով հոգևոր զարթոնքի դինամիկ լիցքեր:

- Իմ կարծիքով, վերջին 20 տարում հայ պոեզիայի արցախյան թևը նկատելի առաջընթաց է ապրել: Ինչո՞վ դա բացատրել:

- Ճիշտ է նկատել արձակագիր Վրեժ Իսրայելյանը՝ ասելով, որ Արցախի բանաստեղծները պատերազմից դեռ տարիներ առաջ երկիրն ազատագրում էին բանաստեղծությամբ: Բանաստեղծությունը մեզ համար դարձել էր ազատության ոգեշնչող ուժն ու դի-

մագիծը: Միաժամանակ, պետք է ավելացնեմ, որ իմ սերնդի բանաստեղծները, աճելով Ադրբեջանի իշխանավորների ուշադրությունից դուրս, այսպես ասած՝ազատ գոտում, իրենց հոգևոր ավիշն էին ըմպում Մայր Հայաստանի հոգևոր ակունքներից, հատկապես «Գարունի» արդիաշունչ ու ըմբոստ էջերից: Արցախյան շարժումն ու գոյամարտի հաղթական ընթացքը բացեցին Արցախի բանաստեղծների ստեղծագործական կափարիչները, որպեսզի, ի վերջո, դուրս հորդեն դարերի զսպանակված ասելիքն ու հոգևոր կրակը:

- Քո արձակը, պոեզիան, հոդվածները մի տեսակ շատ են պատկերավոր, բանաստեղծական: Ժանրի մեջ խտրություն չդնելու քո մոտեցումները չե՞ն երկրորդում ասելիքը, բովանդակությունը, թե՝ քեզ համար կարևոր չէ ձևը:

- Ինձ համար վեպը, նովելը, պատմվածքը բանաստեղծություն են, ես երազում եմ մի վեպ-բանաստեղծություն գրել, մի նովել-բանաստեղծություն երկնել, մի պատմվածք-բանաստեղծություն պատմել… Եվ երբեք արձակագիր չլինել…

- Այսօր ի՞նչ են ասում քեզ Չարենցի՝ «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր» հայտնի տողերը:

- Ամեն բանաստեղծ յուրովի է ընկալում այս հեռահար խոսքը: «Ժամանակիդ շունչը դարձիր» արտահայտությունը ինձ հուշում է, որ երգի կյանքը չափվում է ժամանակի և ներշնչանքի թևերով, և որպեսզի թռիչքն այդ անկանգ լինի, պիտի երգն ազատել ժամանակի կապանքներից, բեռից ու փրփուրից՝ վերցնելով միջավայրի և ապրումի տարերքը: Իսկ ինչ վերաբերում է «Թե ուզում ես երգդ լսեն» արտահայտությանը, պիտի նշեմ, որ մեկ ընթերցողն իսկ հերիք է, որպեսզի երգը հաղորդակցվի… տիեզերքի հետ:

- Կան ստեղծագործական աղերսներ Հայաստանում և Ղարաբաղում գործող բանաստեղծների միջև՝ լինի դա թեմատիկայի կամ արտահայտչական միջոցների առումով: Ժամանակակից բանաստեղծներից ո՞ւմ ես կարդում և ինչո՞ւ:

- Հայաստանում և Ղարաբաղում գործող ժամանակակից բանաստեղծների ստեղծագործական և հոգևոր դաշտը միասնական և հոգեհարազատ է, որովհետև գրված է (արարված է) նույն հրաշաշունչ լեզվով: Կարդում եմ ձեռքս ընկած բոլոր բանաստեղծական ժողովածուները, այն տարբերությամբ, որ մեկից մի էջ եմ կարդում (եթե այն նորաշունչ չէ), մյուսը, որ անակնկալ է, կարդում եմ նույնիսկ մի քանի անգամ: Վերջերս ընթերցած գրքերից ինձ համար հայտնություն եղավ Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները» վիպերգը, որի մեծագույն ուժը համամարդկային սերն է, որ անսպառ է և անսահման: Ստեղծագործության մեջ բառը ոչ թե արտահայտչամիջոց է, այլ՝ սեր, որ լույսի շնչառությամբ է տեղաշարժվում… Բավականություն ստացա՝ ընթերցելով Հրաչյա Բեյլերյանի, Հրաչյա Թամրազյանի, Դավիթ Հովհաննեսի բանաստեղծությունները, Ժաննա Հակոբյանի «Դարի մերկ ոգին» գիրքը: Սրտի թրթիռով եմ ձեռքս առնում Հենրիկ Էդոյանի, Հրաչյա Սարուխանի, Արտեմ Հարությունյանի, Ժաննա Բեգլարյանի նոր գրքերը:

- Լիրիկնե՞ր, թե ֆիզիկներ. երկրորդ հազարամյակում ժամանակավրեպ չէ՞ այս հարցադրումը:

- Այս հարցադրումը, ինձ թվում է, միշտ էլ եղել է ժամանակի կցորդ և ոչ թե շարժիչ ուժ. պատճառն այն է, որ առնչվել է բանաստեղծության մակերեսին և ոչ թե ոգուն: Պարույր Սևակը և Հովհաննես Շիրազը հոգեաշխարհ հայտնագործող բանաստեղծներ են: Հետևապես, երրորդ հազարամյակը Հոգու հազարամյակ է:

- Ստեղծագործական Ձեր նոր աշխատանքը…

- Հրատարակության եմ պատրաստել նոր բանաստեղծություններիս գիրքը՝ «Ելք» խորագրով: Փորձում եմ ընթերցողին տալ գարնանաշունչ և ոգևորիչ զգացողություններ ու ապրումներ, որոնց կարիքը շատ է զգում կյանքի ընթացքը: Հրատարակության եմ պատրաստել «100 սոնետ» ժողովածուն: Ինձ թվում է՝ ընթերցողի հոգու լույսն ու խորհուրդն է այս գիրքը, իմ կյանքի խտացվածքը:

Հարցազրույցը՝ Հենրի Առուշանյանի
«Ազատ Արցախ», 2001թ.

ԲԱՌԸ ՄԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՈՒՄ

- Ասում են՝ բանաստեղծ ծնվում են և ոչ թե դառնում: Համամի՞տ եք:

- Բանաստեղծը ծնվում է ժամանակին՝ «միգամածությունի՛ց»: Աստղի պես նա լուսավորում է մթնոլորտը: Տարեցտարի բանաստեղծի միտքը հասունանում է, դառնում ընդհանրացնող ուժ, զտող ոգի, բացահայտող տարերք: Տողը դառնում է ժամանակի դիմագիծ: Բանաստեղծը տեսնում է այն, ինչ չի տեսնում ոչ ոք: Բանաստեղծի տեսողությունը հուշարձանվում է ոգու հայտնությամբ: Ճանապարհը, որով անցնում է բանաստեղծը, մարդկային երազների վերածննդի հասցեն է, որ մինչ այդ գրված է եղել պատմության մագաղաթե հայացքում: «Ապրել,- գրում է Քամյուն,- նշանակում է պարզաբանել»:

- Միանգամի՞ց է ծնվում ստեղծագործությունը, թե՞…

- Ստեղծագործությունը ոգու հայտնություն է…Մուսան կամ ներշնչանքը թեև ոգեղեն ներկայություն է, բայց սարերից այն կողմ չէ… Ներշնչանքը կարող է գալ ու մնալ տևական ժամանակ… Ներշնչանքի գալուստն ու ներգործուն ընթացքն արդյունավետ է, երբ հպանցիկ չէ նրա ոգին, այլ ընդգրկուն է և տևական: «Ներշնչանքը,- գրել է Գյոթեն, տառեխ չէ, որ կարելի է աղ դնել գալիք շատ տարիների համար»: Սակայն ներշնչանքին կամ մուսային բանաստեղծը կարողանում է հրապուրել և իր մոտ (այսինքն՝ իր մեջ) պահել համեմատաբար ավելի երկար ժամանակ: Դրան նա հասնում է տարբեր միջոցներով: Նախ՝ աշխատասիրությամբ, նվիրվածությամբ և նպատակասլացությամբ: Կարևոր դեր են կատարում նաև սենյակը, գրասեղանը, ստեղծագործական մթնոլորտը, սևագրությունները, որոնք մոգական ուժ ունեն: Ստեղծագործելու համար շատ գրողներ առանձնանում են, մեկուսանում միջավայրից: Ես իմ ընտանիքի անդամների ներկայությամբ կարդում եմ,

գրում և ստեղծագործում: Նրանք ինձ չեն խանգարում: Լրացնում են: Հարստացնում իմ հոգին: Բանաստեղծի հայացքը թափանցում է բառի խորքերը՝ չզգալով, որ բառն էլ իր հերթին յուրահատուկ ճանապարհորդություն է կատարում նրա հոգեաշխարհում, և երբ սուզվող ճանապարհները հանդիպում են մի տեղ ու միաձուլվում, ծնվում է… բանաստեղծությունը: «Թափանցումն այն բանի մեջ,-գրել է Միցկևիչը,- ինչ կատարվում է մտաճառագման պոռթկման պահին, կազմում է արվեստի հիմքը»: Ներշնչանքի ամենաշիկացած պահն այն է, երբ բանաստեղծն ընտրում է մի բառ, օրինակ՝ զոհասեղան, և այդ բառն իր խորքից բացում է տեսարան, բացում է պատկեր:

Լքված
զոհասեղան է իմ սերը՝ պատված աղոթքների
և արցունքների կաթիլներո՛վ: Դռները
բացվող վերքե՛ր են՝ ցավահարույց եզրերով:
Ո՞վ է ծեծում մուտքն իմ մենակության: Ո՞վ է
սփոփում ինձ՝ առանց փոփոխելու տեսարանը հոգուս:

Ապրումի անկեղծությունն այստեղ գծում է մի պատկեր, որ շնչավորվում է հոգուս մերկությա՛մբ:

- Ռ. Եսայանը մինչև այսօր քանի՞ գրքի հեղինակ է:

- Տպագրել եմ բանաստեղծությունների և արձակ ստեղծագործությունների 19 ժողովածու: «Հենակետեր»-ից (1989թ.) մինչև «Աներևույթ տեղանքը եսի» (2007թ.) ձգվում է ստեղծագործական մի ճանապարհ, որն այսօր բաբախում է նոր գրքի («Ասուպների եզերք») դեռևս անհայտ թրթիռներով: Գրված է արդեն գրքի 160 էջը, դեռևս շարունակվում է ստեղծագործական ընթացքը, չկա ներքին արգելակ, բռնացում: Ազատ եմ մտքերիս և զգացողություններիս մեջ և ձգտում եմ խտացնել ապրումի խորհուրդը՝ ազատվելով ավելորդ տողերից, նշմարելի դարձնելով աներևույթ ներկայությունը հոգու:

- Ստեղծագործողի գրիչը հնարավորությո՞ւն է ընձեռում հեղինակին նյութապես ապահով կյանք վարել:

- Արձակագրի և բանաստեղծի բնույթների տարբերությամբ է որոշվում նրանց կատարած «այլ աշխատանքների» վնասակարության չափը ստեղծագործական գործընթացին: Նյութական ապահովության հասնելն ինձ համար նպատակ չի եղել, եթե անգամ իրագործվեր: Որովհետև այդ դեպքում ես ուրիշ մարդ պիտի դառնայի: Իսկ ես չեմ ուզում փոխվել, ուզում եմ շարունակել այն ճանապարհը, որ սկսել եմ մանկության տարիներին: Դա է իմ հարստությունը, դա է ինքնաճանաչման հնարավորությունը: Իսկ իմ ինքնաճանաչումը կայանում է միայն պոեզիայի միջոցով: Համենայնդեպս, ինձ այդպես է թվում: «Արվեստի ստեղծագործության արժանիքը,- գրել է Ապոլիները,- մենք գնահատում ենք ըստ աշխատանքի քանակի, որպիսին արվեստագետը ներդրել է նրա մեջ»: Եթե բանաստեղծն անմնացորդ չնվիրվի ստեղծագործական աշխատանքին, չի՛ հասնի նաև այն կետին, որից լո՛ւյս է բխում…

- Հաճախ են ասում, որ երիտասարդ սերունդը հեռու է գրքից… Ի՞նչ խորհուրդ ունի այս առնչությամբ Ռ. Եսայանը:

- Երիտասարդ սերունդը մեր ժամանակի ծնունդն է: Եթե նա գիտի, թե ինչ գիրք չպիտի կարդա, դա ևս ձեռքբերում է: Գիրքը պիտի գտնի ընթերցողին: Ինչպես… «Գիրք ճանապարհի»-ն, «Մարդը ափի մեջ»-ը, «Կեղևդ բաց արա»-ն: Ընթերցողը ևս ասպարեզ է. նա պիտի նվաճվի խորքից: Երիտասարդ սերունդը չի ուզում նվաճվել «ավելորդաբանությունների» կողմից: Նա ուզում է զորեղանալ իր ընթերցած գրքերի ներաշխարհո՛վ: Պետք է տալ այդ հնարավորությո՛ւնը նրան: Երիտասարդ սերունդը հեռացել է, որպեսի ավելի՛ մոտենա գրքին:

Մարդը Աստծո ստորագրությո՞ւնն է,
Խաչ, որ ցույց է տալիս սիրո ճանապարհը,
որը թերևս այս աշխարհից դուրս է:
Զանգ, որ ղողանջում է ընդերքներից ցավի:
Երկինք, որ զսպաշապիկ է:
Բանալի, որ հավերժության դուռն է բացում:

Հարցազրույցը՝ Սյուզաննա Գրիգորյանի

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼԻՍ ԻՆՁ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ՈԳՈՒ ԵՎ ԵՐԱԶԻ ՁԱՅՆԸ

- Ձեր ստեղծագործություններում նոր արտահայտություն ու ոգի է ձեռք բերում պատերազմական իրականությունը: Խրամատում ծնված բանաստեղծությունները ոգևորում են: Այսօր էլ Ձեր բանաստեղծություններում և պոեմներում կերպավորվում է Արցախյան պատերազմից շատրվանող ցավը: Ի՞նչ ակունքից է բխում Ձեր ասելիքը:

- Իհարկե, շատ դժվար է անմիջապես արձագանքել ժամանակի իրադարձությանը: Բայց ստեղծագործական ոգին, որ առաջնորդում և մղում է ինձ նորանոր որոնումների, անսովոր արտահայտություն է ձեռք բերում՝ պատռելով ժամանակի կեղևը: Հրասայլը, ինքնաթիռը, հրանոթը, խրամատը ժամանակի հոգեբանություն չեն բերում… Միայն մարդը կարող է առանձնահատուկ ներաշխարհով հարստացնել և իմաստավորել գրական նյութի մթնոլորտը:

Ոսոխն ետ քաշվեց: Ճանապարհն ասես
Օձի շապիկ է՝ գետափին ընկած:
Հողի արցունքն է մրգի պես հասել:
Շուրթերիս Աստծո պատկերն է խոցված:
Խոցված է լույսը, մութը՝ խոշտանգվա՛ծ,
Կոպիս տակ հուշի կածանն է բարակ,
Իսկ իմ քրտինքի կաթիլը ընկած
Կայծքար է դառնում, բուրվառ ու կրակ:

Սա առաջին բանաստեղծությունն է, առաջին փորձը, որով ձգտել եմ արտահայտել պատերազմական իրականությունը: Հետագայում փոփոխվեց ոչ միայն նյութը, այլև արտահայտչաձևը… Ես ձգտում էի գրականություն բերել ոգու սլացքներ…

Կայծքար է շունչս՝ քարերիդ դիպչում, բո՛ց է արձակում,
Երազ է բառս՝ դրոշ է տնկում… անհա՛ս գագաթին:

Ընկնում են վարագույրները, ծավալվում է նոր մտածողության լուսաբացը: Պատերազմական թեմայով գրված բանաստեղծու-

թյունը բխում է այս անգամ վերհուշի քուրայից: Ես նկատում եմ, որ «Բառերի հոգուց ելնում է կարմիր տարերքը երկնի»:

Իրականության արտաքին «կահավորանքը» նոր իմաստ է ձեռք բերում և դառնում խորքի արտահայտություն: Խորքն էլ իր հերթին դառնում է արտաքին աշխարհի շնչառությունը:

Աշխարհի ամեն կետի վրա ազդող հայացքս
ծակծկվել է զինվորի վերնաշապիկի պես,
և վառոդախանձ անցքերից ելնում են վարդերը
խաղաղության:

«Պատերազմը մեր նպատակը չէ,- 1994թ. օգոստոսի 9-ին ինձ հղած պատասխան նամակում գրել է «Հայ զինվոր» թերթի գլխավոր խմբագիր, արձակագիր Վրեժ Իսրայելյանը,- մեր դեմքը արդար խաղաղությունն է: Անարդար խաղաղությունը պատերազմից էլ զզվելի է և կործանարար»:

«Ռազմակոչի» մոտիվը այսօր իր տեղը զիջում է հոգեվիճակ արտահայտող խոսքին, որը կենարար լույս է հաղորդում կյանքի երթին: Պատերազմի թեմային այսօր մենք նայում ենք ներկայի բարձունքներից: Ներկան անմասն չէ ցավից: Բայց ոգին ելք է ցույց տալիս: Եվ կյանքի ընթացքը դառնում է սփոփող մոր ձեռք… Ողբերգության տարրեր կան անգամ ծիածանի գույներում, օդի ալիքներում.

Զինվորական կոշիկներից բուսել են ոսկորները.
ասես պիտի ծաղկեն՝ պատերազմական այս ծանր
լռությունը լցնելով բացակայությամբ
գարնան,
որից մերթ ընդ մերթ ժայթքում է
սև արյունը մահի:
Գրոհող զինվորների
ոտքերի տակ փշրվող գանգատուփերը
սերմերի պես խառնվում են շերտերին հողի…

Ցավը ներծծված է կյանքի մեջ և այն չի կարող չանդրադառնալ պոեզիայի հայացքի վրա: Ինչքան էլ տարեթվերը փոխվեն, մեկ է, ցավի քարտեզը գծված է մարդկային արյան մեջ, երբեմն այն

դուրս է լողում ներկայի պատկերի միջից, և ժամանակի դիմագիծը դառնում է ավելի ամբողջական:

- Ի՞նչ է Ձեզ համար բանաստեղծությունը:

- Այս հարցը սպառիչ պատասխան չունի: Սպառիչ պատասխան չունի նաև «Ի՞նչ է սերը» հարցը: Բանաստեղծությունը հենց սեր է, որ հայտնագործում է աշխարհը, բացում մարդուն մի նոր կողմից: Մանկության տարիներից սկսած՝ իմ մեջ «գալարվում է» պոեզիայի տեսիլքը, և ես ապրում եմ նրանով:

Ետ տար տողը, ինչպես կափարիչը
քաոսի, և կտեսնես՝
թե ինչպես է ծնվում ճանապարհը…

Բանաստեղծությունն իմ ճանապարհն է, որը անընդհատ ինձ ավյուն և ուժ է հաղորդում, դարձնում երկնքով շնչող մի իրականություն: Ես անցնում եմ իրականության միջով՝ որպես արթնացում, որպես ճիչ, որը միացնում է եզրերը ժամանակի:

Պոեզիան
անցյալի և ներկայի միջև դուռ է,
որով ներխուժում են հոսանքները
Ապագայի:

- Այսօր ի՞նչն է ամենից շատ հուզում գրողին:

- Այսօր ինձ ամենից շատ հուզում է մարդու ճակատագիրը: Մարդու հոգու փրկության բանաձևն է ալիքվում իմ մտքերից ու խոհերից…«Տարածքը դեռևս հայրենիք չէ» և «Անարձագանք ոգի» բանաստեղծություններում, որ տպագրվել են «Դեմո» երկշաբաթաթերթում, արտահայտել եմ իմ հոգու հուզումնքն ու խռովքը…

«Շրջափակման այս կեղեքարանում» հայ ոգին որոնում է գոյատևության նոր եզր ու չի գտնում, որովհետև սերունդների միջև կապը արյան կանչ չէ այլևս, ոչ էլ հիշողության բողբոջող սարսուռ, այլ՝… մեկուսարան… խաբկանք… մի՛ֆ…

Եթե մեր ոգու ելքը չի բխում սալաքարերից
և խաչքարերից չի տարածվում հիմնը լինելության,
ուրեմն մեր քայլը անորոշության հավելվածն է հենց,
ուրեմն մեր սերը զարդարանք է և բառերի թափոն…

Շատ կարևոր է, որ Արցախյան շարժման և մաքառման ողջ պատմությունը դառնա ուղեցույց և չափանիշ մաքրության ու ազնվության…Չհեռանանք ինքներս մեզանից այնքան, որ մեր ընթացքն ու շարունակական երթը բախվեն մեր իսկ հայացքներին…

- Ինչպե՞ս է ծնվում Ձեր հերթական տողը: Ո՞րն է Ձեր ոգևորության ակունքը:

- Տողը, որ ծնվում է, արդեն հերթական չէ: Կյանքի բացահայտո՛ւմ է: Տողը ձևավորվում է իբրև բնավորություն: Ոգևորության ակունքները հաջորդում են իրար, երբ աշխատանքային պահը դառնում է րոպե ու ժամ: Տողն իր հետ բերում է հոգեվիճակների շիկացած շղթա և շնչավորում բացվող տարածությունը…

Վարդը բխում է թևերից լեռների
և վերափոխո՛ւմ իմաստը կյանքի:
Ջուր են խմում օազիսներից Անհունի…

- Դուք «հարո՞ւստ» եք ընթերցողներով…

- Եթե ես ունեմ թեկուզ մեկ ընթերցող, նշանակում է՝ ընթերցվում է տառը տիեզերական:

- Էլ ի՞նչ կարևոր հարցերի մասին կուզենայիք խոսել:

- Շատ կարևոր եմ համարում հավատարիմ մնալը սեփական համոզմունքներին, ձայնին, ոճին… Ներքին ձայնի խորհուրդը լսելով՝ ես պատկերացնում եմ իմ ճանապարհի վաղը… Ներկան վաղվա շեմն է: Զգացմունքներ և խոհեր արտահայտելը չէ միայն բանաստեղծի խնդիրը: Նա պետք է կարողանա ստեղծել նաև Ոճի համակարգ:

- Մի քանի խոսք՝ երիտասարդ սերնդի մասին:

- Այսօր երիտասարդ սերունդն ունի մտահոգվելու միայն մի հարց: Դա ինքնադրսևորման բացառիկ հնարավորությունների օգտագործումն է: Ստեղծագործական հաջողություններ եմ մաղթում երիտասարդներին: Գնահատելի են նաև Ձեր ստեղծագործական պրպտումները: Ստեղծագործելիս թող Ձեզ առաջնորդի Ոգու և Երազի ձայնը…

Հարցազրույցը՝ Անուշ Հարությունյանի

ԼԻՆԵՆՔ ՈԳՈՎ ԱՄՈՒՐ ԵՎ ԳՈՐԾԵՆՔ ՄԻԱՍՆԱԲԱՐ

- Որպես բանաստեղծ՝ ինչ ձեռքբերումներ եք ունեցել 2013 թվականին և ինչ սպասելիքներ ունեք նոր՝ 2014 թվականից:

- 2013 թվականը իմ Ոգու էջերին արձանագրեց նոր ձեռքբերումներ: Գրականությունը կյանքի դուռ է, սփոփանքի և հույսի բանալի: Միտքը ինքնարտահայտման բացառիկ հնարավորություն է: Գրել, գրել… 2013 թվականին հրատարակել եմ բանաստեղծությունների նոր գիրք՝ «Ոգու թռչունների հայրենիքում» (400 էջ ծավալով): Ես գիրքն ավարտել եմ, գրել վերջին տողը, բայց գիրքը, պարզվում է, ինձ չի՛ ավարտել, ոչ էլ ամբողջացրել ոգուս տարածությունը… Ստիպված էի մշակել որոշ հատվածներ՝ լրացնելով հայտնությունների դաշտը: Ոգու ծիրը բառի շո՛ւնչն է… Լույսը… ծաղիկ է, որ բացվում է համբուրվող շուրթերի միջև… Տարածությունը բաբախում է բանաստեղծությա՛մբ…Կարոտի կիրքը մղում է ինձ դեպի բանաստեղծական չափերի խելահեղ շունչը, որը չի տեղավորվում բառի պատյանում: 2013 թվականին ես գրեցի մի նոր պոեմ՝ «Ծնունդ կամ ինքնառերեսում» (580 տող): Բառը՝ ոգու շրջանակից դուրս է: Ահա իմ որոնումների հասցեն: Պատկերը բացվում է ներսից ու դրսից: Պատկերն իր լայն շնչառության մեջ որոնումների օազի՛ս է պեղում… Հուշը դեմքն է բացում… ասուպ առ ասուպ… Թեման անընդհատ բացվում է և կանգառ չկա…

Մայրս հայացքն իր
տեղաշարժում է
լամպի պես.
ահա և դրեց գոգին
պատուհանի՝
ընդլայնելով սահմանները
երջանկության…



«Ոգու թռչունների հայրենիքում» գրքի շապիկը: Նկարը՝ Սամվել Գաբրիելյանի

Հոր կերպարը խարսխվում է Ոգու և Հիշողության ճանապարհներին. «Երբ հենվում է հայրս մտքին, ինչպես բահին»:

Եվ այն երեխայի կերպարն եմ ստեղծել, որ մեծանում է հոր և մոր, պապի և տատի գուրգուրանքների ծիածանի մեջ:

Ամեն մանկան հետ
վերածնվում է դեմքը
ժամանակի:

2014 թվականի սպասելիքները շատ են: Մտադիր եմ հրատարակել իմ երկերի առաջին հատորը՝ («Քաոս և լույս»): Նպատակ ունեմ հրատարակել իմ բանաստեղծությունների թարգմանություններն առանձին գրքով, քառալեզու մի ժողովածու (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն):

- *Հայրենիքի ճակատագիրը… այսօր ինչ արտահայտություն ունի քո մտքի և ոգու հորիզոնում:*

- Ամենից բաբախուն ոլորտը հայրենիքի թեման է, որ անսպառ է, ինչպես սերը:

Հայրենիքը հիշողության դուռ է, որով ներս ենք մտնում և հայտնվում ապագայի աստիճաններին: Ծեծում ենք դուռը… Հեռվում և ներկայի մեջ ծարավի անկյուններ են բացվում… Ոգու գրատախտակը մի տեսադաշտ է, որի վրա գրում ենք կավիճով հույսի: Հայրենիքի ճակատագիրը մի ճանապարհ է, որ հունցվում է մորս ձեռքերով և լավաշի պես մատուցվում… սերունդներին: Հորս ձեռքի

ափում հասունացած օրը անո՛ւշ է, ինչպես խնձորը: Բայց և այնպես զինվորի քայլերով է սրբագործվում մեր ազատության դաշտը: «Լավագույն թիկունքն երկիրն է ազատ»,- տողը գրելիս արյանս կաթիլներում բաբախել է պատկերը՝ որպես ոգի: Մեր հաղթանակները մեր ներսից են աճում: Այսօր ազգովի «զբաղվում ենք» քաղաքականությամբ՝ միայն ու միայն խանգարելո՛վ այդ բնագավառի անհատականություններին: Դրա համար էլ քաղաքական դաշտի տատանումները շա՛տ են ու թմրեցնող: Հնից դուրս գանք, ինչպես վերարկուից տաք օրերին և կերտենք մեր ներկան: Եթե մենք այսօր չենք ապրում Հայրենիքի ներկայով, ապա չենք կարող այն կերտել՝ մեր ոգու ուժին ու պատկերին համապատասխան:

- Տոնական ինչպիսի՞ բարեմաղթանքներ կհղեք ընթերցողներին:

- Անկախության անցած տարիները հաստատում են, որ միայն սեփական ուժերով և միասնաբար կարելի է կերտել հզոր պետություն: Լինենք ոգով ամուր ու գործենք միասնաբա՛ր… Ահա՛ մեր երջանկության ակունքը:

Զի մեր հոգևոր Հայրենիքն Ազատ
առանցքն է Գոյի ու Լինելության:

«Եղիցի լույս»,
դեկտեմբեր, 2013թ.

«ԺԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՆՉԸ ԱԼԻՔՎՈՒՄ Է...
ԱՊԱԳԱՅԻ ԹԵՎԵՐԻՑ»

Նվարդ Սողոմոնյան

Այս տարվա հունվարին ԼՂՀ գրողների միության նախագահությունը գրական ընտանիքի մի խումբ անդամների շնորհեց մրցանակներ: Դրանք հանդիսավոր պայմաններում «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի դահլիճում հանձնեց ԼՂՀ ԳՄ նախագահ, բանաստեղծ Վարդան Հակոբյանը:

Հիշեցնենք, որ մրցանակի է արժանացել նաև Ռոբերտ Եսայանը:

- Մրցանակի արժանացած ստեղծագործությունը՝ «Ոգու թռչունների հայրենիքում»-ը, ի՞նչ տեղ ունի Ձեր պոեզիայի ուղեծրում:

- Բանաստեղծություններիս այս շարքը, որ տպագրվել է «Եղիցի լույս»-ում և «Գրական թերթում», արժանացել է ԼՂՀ գրողների միության ամենամյա մրցանակին:

Գրական այս մրցանակաբաշխությունը միակն է Արցախում (ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակաբաշխությունը պատմական փաստ է այլևս), որ այսօր խթանում է ստեղծագործական ոգու նպատակամետ ընթացքը: Ժամանակի պահանջն է՝ գրական դաշտն առավել մրցունակ և կենսունակ դարձնել, ընդլայնել արտահայտչամիջոցների շրջանակը, պոեզիա բերել նոր շունչ, նոր ոգի և նոր ասելիք: Հասարակության կյանքը ոչ միայն գրական ստեղծագործության նյութ է դառնում, այլև սնուցում է ապա-

գայի հունդը: Ներշնչանքի եռուն ակունք է և անցյալի զգաստացնող շնչառությունը: Հիշատակի հողմը մեր մեջ բացահայտում է լռության օազիսներ: Բառը հանգրվան է, լռության ելքը, Ոգու հայրենիքը:

Իսկ ես որպես ստեղծագործող ինչ եմ գտել «Ոգու թռչունների» հայրենիքում: Գտել եմ ինքս ինձ մոտենալու մի նոր արահետ, ոգու կամուրջ, որով միանում եմ բևեռներին Ասելիքի, որն այդպես էլ չսպառեցի մինչև տողերը լռության… մինչև տարածության թրթռուն եզրերը… Իսկ ինչ որ մնացել է դեռևս չբացահայտված, կբացահայտվի հաջորդ շարքերում: Ես դա զգում եմ ներշնչանքներիս խոր շնչառությամբ: Ժամանակի ձեռքերով դեռևս չշոյված տարածություններ կան, որոնք ճերմակ թղթի պես երազում են նոր բանաստեղծությունների ծննդի մասին:

- «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր»: Ժամանակի շունչը ինչ արտահայտություն է գտել Ձեր ստեղծագործություններում:

- Ամեն բանաստեղծ ժամանակի շնչի մեջ հայտնաբերում է իր դեմքը, որ լիցքեր ու ավյուն է ստանում ոգու տիեզերքից: Ստեղծելով իր լեզուն, բացահայտում է ժամանակը՝ հիշողության և հոգու ելքերից:

Ես իմ ձայնով մաս առ մաս ընդլայնում եմ ճակատագրի ասելիքը:

«Առաջին բառը զսպաշապիկ է, որ ես չեմ հագնում: Մնացած բառերը հրեշտակի թևեր են»: Սա իմ որոնումների բանալին է: Խոսքի լռությունը իմ ներաշխարհի թևերն է: Անհայտության դուռը բացվում է միայն ներշնչանքի ձեռքով: Ժամանակի շունչը ալիքվում է ապագայի թևերից:

Բառը ակունք է,
որից բխում է
լույսը երազի:

Ժամանակի շունչը կերպավորվում է…
թռիչքում Անհասի:
- Ձեր ստեղծագործական կյանքն այսօր ինչով է լցվում…
- Այսօր ես ապրում եմ կյանքի դռներից քաղած հասցեներով… Ինձ ընթերցում է ճանապարհը: Իմ աշխարհը լրացվում է թռչնի թռիչքով: «Ոգու թռչունների հայրենիքում»: Ահա իմ նոր գիրքը, որ կյանքի դուռն է բացում… Ցավի սահմաններն են ընկնում հիշողության մաշկից, և ես մոտենում եմ ոգուն իմ Ձայնի: Հոգևոր մի նոր տարածության միջով անցնում է բառը՝ որպես հասցե: Բանաստեղծի տողը դառնում է հասցե: Տիեզերքի բանալին:

Երբ իմ կապանքներից ազատվեն
իրերը,
ես կծնվեմ վերստին
և կքայլեմ սահմանների բեկորների
միջով…
Բառերը կլիզեն իմ հարությունը
ժամանակի գագաթներին:

Պոեզիան մասն է կյանքի, բաբախուն ու եռուն մասը տիեզերքի: Անհայտի դռները ծեծում են հասցեները: Ընթերցողի հայացքում միանում են անսահմանությունն ու հողը: Հոգու ձեռագրերում տեղավորվում են մարդիկ, որպես կետադրական նշաններ:

Ես գտնում եմ աչքերս, շուրթերս, դեմքս…
քանդակող ձեռքերում այս ճանապարհի…

Հարցազրույցը՝ Նվարդ Սողոմոնյանի
14 փետրվարի, 2013թ.

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ՄԵՋ Է

- Ե՞րբ եք սկսել Ձեր գրական գործունեությունը:

- Գրել սկսել եմ դպրոցական տարիքից: Ճիշտ է դեռևս չէի կարողանում զգացածս արտահայտել, բայց մի ուժ ինձ մղում էր դեպի բանաստեղծական արվեստը: Դա, երևի, Անհայտի հրապուրիչ ուժն էր: Սկսեցի ոտանավորներ գրել՝ տաղաչափական ձևերը ճանաչելու և կիրառելու նպատակով: Կիրառեցի յամբը և անապեստը, հետո՝ յամբանապեստյան խառը չափածևը: Մի խոսքով, ծանոթացա բանաստեղծական արվեստի գաղտնիքներին: Իսկ երբ սկսեցի զգացածս արտահայտել, մոռացա, որ գոյություն ունեն բանաստեղծական չափ ու տեխնիկա: Հասկացա, որ պոեզիայում կարևորը պատկերավոր մտածողությունն է:

- Որո՞նք են այն խթանիչ ուժերը, որ Ձեզ օգնեցին ինքնաորոնման և ինքնաճանաչման ճանապարհին:

- 9-10-րդ դասարաններում մեզ գրականություն սկսեց դասավանդել հայտնի մտավորական, բանասիրական գիտությունների թեկնածու Ժան Անդրյանը: Այդ տարիներին պոեզիան իմ մեջ բացեց ճանաչողության նոր շառավիղներ: Կլանված ընթերցում էի Պարույր Սևակի, Գևորգ Էմինի, Վահագն Դավթյանի, Համո Սահյանի, Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական ժողովածուները: Ավելի շատ գրում էի սիրո մասին: Բանաստեղծությունն ինձ համար դարձավ սիրո խոստովանություն: Ճանաչեցի նաև ցավը, մերժման հարվածը խորացրեց իմ մեջ ապրումներս: Պոեզիան ինձ համար դարձավ հենակետ: Ցավն ինձ ցույց տվեց արվեստի ճշմարիտ ճանապարհը: Գրական կյանքում շատ կարևոր են ստեղծագործական անձնվեր աշխատանքն ու անհագուրդ ընթացքը: 1976թ. «Սովետական Ղարաբաղ» թերթում տպագրվեց բանաստեղծություններիս առաջին շարքը: «Նոր անուն» խորագրի

տակ զետեղվում է նաև այն ժամանակ արդեն ճանաչված բանաստեղծ Վարդան Հակոբյանի խոսքը: Այդ շարքում ես արդեն ունեի իմ ճանապարհի ընթացքը խորհրդանշող տողեր. «Հասունությունս երգով է հղի»:

- «Լավ է պոեզիան զուրկ լինի անգամ գաղափարից, քան ազատությունից»: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս տողը: Կարո՞ղ ենք ասել, որ այս տողն ուղեցույց է Ձեր ստեղծագործական ճանապարհին:

- Իհարկե, այս տողով ես չեմ քարոզում գաղափարազուրկ գրականություն: Ես պարզապես փորձում եմ պոեզիան ազատել գաղափարական անկենդան կաղապարներից, որոնք համառորեն խեղդում են ազատ մտածողության ալիքը:

Պոեզիան
անցյալի և ներկայի միջև դուռ է,
որով ներխուժում են հոսանքները
Ապագայի:

- Դուք բանաստեղծ եք և «Հայրենյաց պաշտպան» թերթի խմբագիրը: Ինչպե՞ս եք համատեղում ստեղծագործական հետաքրքրությունները:

- «Հայրենյաց պաշտպան» թերթի հիմնադիրն է Արցախի ազատամարտիկների միությունը: Այն լուսաբանում է ԱԱՄ գործունեությունը, Արցախյան պատերազմի մասնակիցների կյանքը: Քարոզում է հայրենասիություն, ընթերցողին ներկայացնում դրվագներ Արցախյան հերոսամարտից: Թերթի աշխատանքը հոգևոր առնչությունների մի նոր դաշտ է ստեղծում, որն առնական ու կենսունակ է դարձնում բանաստեղծի խոսքը: Դրա վկայությունն են «Հայոց բանակ», «Ստեփանակերտ», «Մայիսյան եռատոն», «Վազգեն Սարգսյանին», «Աշոտ Ղուլյանին», «Քրիստափոր Իվանյանին» և այլ ստեղծագործություններ:

- Այսօր երիտասարդ ստեղծագործողները կարողանո՞ւմ են գտնել իրենց դիմագիծը, ձայնը, սեփական նկարագիրը:

- Երիտասարդներն այսօր ավելի մոտ են կանգնած ստեղծագործական մաքուր ու անաղարտ ակունքներին: Նրանք ազատվել են արտաքին պաճուճանքներից և գալիս են ընդերքի խորքերից: Վերջերս ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչությունը լույս ընծայեց երիտասարդ հեղինակների բանաստեղծություններ-ի «Առաջին հանդիպում» ժողովածուն, որը լիովին պատկերացում է տալիս այն նոր խմորումների և տեղաշարժերի մասին, որ գրական դաշտ են բերում երիտասարդ ստեղծագործողները:

-2009թ. ստեղծագործական ինչ ծրագրեր եք իրականացրել: Ընթերցողի սեղանին ինչ նոր գիրք դրվեց:

- Գիրքը, որը դրվեց ընթերցողի սեղանին, կոչվում է «Իմ արյունն իմ հասցեն է և իմ ճանապարհը» (կամ՝ այլ խոսքով՝ «Արյան համաստեղությունը»): Դա վերջին տարիներին գրած ծավալուն մի պոեմ է՝ 1100 տող, որը բաղկացած է երեք մասից՝ «Ինքնության անդրադարձներ», «Կյանքը շրջանակից դուրս», «Երազը դուռն է ժամանակի»:

- Ինչի՞ մեջ է կյանքի իմաստը:

- Կյանքի իմաստը ես տեսնում եմ ստեղծագործելու հնարավորության մեջ: Կյանքի իմաստը ներշնչանքի մեջ է:

Հարցազրույցը՝
Անետա Համբարձումյանի
2009թ.

50-Ը՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ

Օրերս Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ բանաստեղծ Ռոբերտ Եսայանի ծննդյան 50-ամյակին նվիրված երեկո, որը կազմակերպել էր ԼՂՀ ՄԵ նախարարությունը: Երեկոյին ներկա էին նախարարներ, գրողներ, ուսանողներ, զինվորներ, հոբելյարի հարազատները, այլոք: Այն վարում էր դերասանուհի Նարինե Աղաջանյանը: Հոբելյարին շնորհավորեց ԼՂՀ ՄԵ նախարար Լեռնիկ Հակոբյանը, որը ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրված Ոսկե մեդալը հանձնեց նրան:

ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանն իր զինվորի 50-ամյակը շնորհավորեց՝ պատմելով զինվորական տարիներից պատառիկներ: Նա նշեց, որ 1992թ. օգոստոսի կեսերից է ծանոթացել հոբելյարի հետ:

- Ինձ մոտ մեծ զարմանք առաջացավ, որ պոետ-բանաստեղծը գրիչը փոխել է զենքի հետ, որ նման զինվոր ունեմ: Եվ ավելի փառավոր դարձա, երբ մոտիկից ծանոթացա: Տեսա, որ այս մարդը հրամանատարի միակ բանաստեղծ-զինվորն է մարտի դաշտում: Երբ շտաբից գալիս էի, առաջինն ինքն էր մեզ դիմավորում: Ես իմ զինվորների անունները, իմ ձեռագրով գրած, պահում եմ որպես հուշ: Եվ այսօր արդեն իմ ամենաբարեխիղճ զինվորը նշում է իր ծննդյան 50-ամյակը:

Այսօր դուք քաղաքացիական անձ եք: Ես համոզված եմ, որ եթե Աստված չանի, պատերազմ սկսվի, ձեզ նորից տեսնելու եմ մարտի դաշտում,- իր ելույթում նշեց Վլադիկ Խաչատրյանը:

Այնուհետև ելույթ ունեցավ ԼՂՀ ԳՄ նախագահ Վարդան Հակոբյանը:

«Ասուպների եզերք» գրքի շապիկը: Գիրքը նվիրված է Ռ.Եսայանի ծննդյան 50-ամյակին

- Նա նախ հրաշալի մարդ, ապա անկրկնելի բանաստեղծ է: Ճանաչեցի՝ Գուրգեն Գաբրիելյանի և Հրաչյա Բեգլարյանի հետ այցելելով Ստեփանակերտի 2-րդ դպրոց: Այստեղ էլ հարցրի ուսուցչուհուն՝ ստեղծագործող աշակերտ ունեք: Սկսեցի կարդալ և խոսք գրեցի ու առաջին անգամ ներկայացրի ընթերցողներին «Սովետական Ղարաբաղ» թերթում: Այսօր արդեն իր հիմնական տեղն ու ձայնը, ոճն ու թեման ունի բանաստեղծը:

Երևանում, Սփյուռքում Ռ. Եսայան են ընթերցում,- իր խոսքն ավարտվեց Վարդան Հակոբյանը և ընթերցեց ՀՀ և ԼՂՀ գրողների միության ուղերձը:

- Եթե դպրոցական տարիներին Վարդան Հակոբյանն էր ընթերցում Ռոբերտի գործերը, ապա ուսանողական տարիներին էլ ես էի կարդում, և այսօր գրել եմ մի գիրք իմ սիրելի ուսանողի մասին,- ասաց ԱրՊՀ դասախոս, պրոֆեսոր, բանաստեղծ Սոկրատ Խանյանը և կարդաց ԱրՊՀ ուղերձը:

Այսօր 20-ից ավելի գրքերի հեղինակ, Արցախի ճանաչված և սիրված գրողներից է Ռ. Եսայանը, որն ապրում ու ստեղծագործում է Շուշիում:

Հոբելյարին շնորհավորեցին նաև բանաստեղծ Ժաննա Բեգլարյանը, ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը, Շուշիի շրջվարչակազմի մշակույթի բաժնի վարիչ Վարդիթեր Մելքումյանը և ուրիշներ:

Եկեք շնորհակալ լինենք ամենից առաջ գիրք ստեղծողին, ցանկանք նրան նորանոր հաջողություններ ու արցախյան երկարակեցություն: Անվահատալի է, որ այսօր այդ երիտասարդական ավյունով լի բանաստեղծն ու զինվորը նշում է իր ծննդյան 50-ամյակը:

Շնորհավորում եմ իմ խմբագրին, մտերիմին, քնարերգության առաջատար դեմքերից մեկին և ներկայացնում միջոցառման վերջում պատրաստած իմ հարցազրույցը նրա հետ:

- Նախ փորձեցի իմանալ, թե ինչ է հոբելյարի համար բանաստեղծությունը:

- Բանաստեղծությունն իմ ճանապարհի ոգին է, որ անընդհատ բախում է դռներն անհայտության… Իսկ դռների ետևում կանգնած է ոչ թե մահը, այլ սիրո առեղծվածը:

- Եթե հնարավոր լիներ, ինչպես կանցկացնեիք Ձեր ստեղծագործական ճանապարհը երկրորդ անգամ:

- Ես անցնում եմ իմ գրական ճանապարհը և հասնում ոգու անվերջության: Իմ ակունքներն ընթերցում են ինձ և հասնում լռության համանվագին: Ոչ թե երկրորդ, այլ բազմաթիվ անգամ անցնում եմ ճանապարհը և բացում այս երթի առեղծվածային շունչն առաջին անգամ: Ետ եմ ընթանում, թե առաջ շարժվում, որոշում է միայն հոգուս տարածությունը: Ես նույն կետում եմ: Միշտ ելման կետում եմ, որ հաղթահարում եմ առաջին անգամ:

Հառնող ձեռքերից կաթկթում է լուսաբացը, բողբոջում հույսի անհունի վրա:

Սա իմ հավատամքն է: Իմ գոյատևման բանաձևը: Իմ ոգու կերպարը:

- Հիսուն տարվա ճանապարհ անցած բանաստեղծը, հետաքրքիր է՝ ինչ կասի երիտասարդ սերնդի մասին:

- Երիտասարդ սերունդն արդեն ունի անուններ, որ հնչեցնում է բեմերից, արտահայտում թերթերում, ամսագրերում և առանձին

ժողովածուներում: Եվ կա լավ ավանդույթ գրողների միությունում, որ գալիս է նրա ղեկավարից:

Վարդան Հակոբյան-արվեստագետը նաև հիանալի կազմակերպիչ է: Նա գրողի համար անում է այն, ինչ առաջին հայացքից անհնար է թվում… Եվ ստեղծում է երիտասարդ ստեղծագործողների համար ազատ ու անարգել մրցակցության դաշտ, միշտ արթուն է պահում նրանց, որոնում ժամանակի խորհուրդը: Այդ տարիքում իմ սերնդի բանաստեղծները երազել են առաջին գիրք ունենալու մասին: 80-ականներին դա անհնար էր, որովհետև մշակված էր հատուկ քաղաքականություն Ադրբեջանի իշխանությունների կողմից: Չտպագրելով երիտասարդ հեղինակին, նրանք արմատախիլ էին անում սերունդների կապը: Չտպագրվելով՝ մենք հասունանում ու խտանում էինք մեր չունեցած տողերում: Չէինք տպագրվում, բայց մեր ոգու մեջ հասունանում և ավելորդություններից ազատվում էինք, ամբողջանում մեր ունեցածով և մեր լռությամբ: Պարույր Սևակի խոսքով՝ ստիպված արմատ էինք երկարացնում:

Գնահատելի են նաև ձեր ստեղծագործական պրպտումները: Այն հարցազրույցները, որոնք տպագրում եք թերթերում և «Նարեկ» ամսագրում, բացահայտում են ոչ միայն ձեր, այլև ձեր ժամանակակցի հոգեբանության բացառիկ նրբերանգները:

Անուշ Հարությունյան

ՊՈԵԶԻԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոնա Համբարձումյան

- Հետաքրքիր է՝ Ռոբերտ Եսայան բանաստեղծը պահո՞ւմ է իր պատանեկան բանաստեղծությունների սևագրությունները: Ինչո՞ւ:

- Ցավոք, պատանեկան բանաստեղծությունների սևագրությունները չեն պահպանվել: Ինքնադժգոհությունից գազազած՝ ես պատռում շպրտում էի սևագրություններս՝ որոնելով դեմքս զգացողություններիս քաոսի հորձանուտում: Ուզում էի որսալ ինքնատիպության երակը և նրանից քամել Անհայտի հորիզոնը: Ասացի, որ պատռում շպրտում էի… Մինչև որ… լսեցի բանաստեղծ Վարդան Հակոբյանի խորհուրդը. «Սևագրությունը հունդ է, պահպանի՛ր, և մի օր ծիլեր կտա»: Հետագայում գրել եմ «Սևագրությունների ժամանակը» բանաստեղծությունը, որտեղ փորձել եմ իմաստավորել «գրական հերկի» խորունկ ու բարդ գործընթացը:

Սևագրությունների ժամանակը
գրչիս ծայրից հոսող հավերժական
աղբյուր է,
որից բխում ու տարածվում են
ծարավի դաշտերը:
Շարունակության մեջ հասել եմ նոր շիկացման.
Հորիզոնի խարույկ: Ես իմ
դեմքն եմ գտնում
քո բոցերի խավար կակաչներում:

- Ավելի շռայլ եք գրելու, թե ջնջելու մեջ:

- Ջնջելով մի որևէ տող բանաստեղծությունից՝ շնչավորում եմ ազատությունը, լռության խորհուրդը, որ մարմնավորվում է Անհայտի զիգզագներով… Երբեմն բանաստեղծությունը պիտի ազատել բառային որոշակի զանգվածից, որպեսզի կայանա թռիչքը.

Ուր վերջանում է բառը,
ծնվում է… հոգին:

- Ինչպիսին եք համարում Ձեր բանաստեղծությունը՝ «հագուստավորվածծ», թե այնպիսի մերկությամբ, ինչպիսին որ ծնվել է:

- Բանաստեղծությունը հագուստի կարիք չունի: Նա ջերմացնում է ընթերցողին ներքին կրակով: Կոնկրետ իմ բանաստեղծությունը իրականության արտացոլանքը չէ: Իհարկե, նա պարունակում է նաև իրական կյանքի որոշակի շերտեր, բայց միաժամանակ ոգեղեն է, առեղծվածային, այլ ժամանակների հետ առնչվելու եզր ունի, որ շատ կարևոր է: Ես այն կարծիքին եմ, որ բանաստեղծությունը ստեղծում է իրականություն և ժամանակ: Կանչերը բախվում են ապագայի պատին.

Իսկ պոեզիայում (ձայները
բախվում են հայացքների պատին)
ստեղծվում է գրեթե իրականություն:

- Այս տարի նախատեսե՞լ եք նոր գիրք:

- Նոր գիրքը («Հարության ժամանակը») կտպագրվի ԼՂՀ պետպատվերով, 2001 թվականին: Գիրքը 7 տարվա ստեղծագործական աշխատանքի արդյունք է, 15 տպագրական մամուլ ծավալով, ընդգրկում է երեք բանաստեղծական շարք («Այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահմանագծում», «Աներևույթ տեղանքը եսի», «Եվ հորիզոնից քամվում է բառը՝ նուռը երկնքի») և մեկ պոեմ («Իմ արյունն իմ հասցեն է և իմ ճանապարհը» կամ «Արյան

համաստեղությունը»): Նկարչական ձևավորման հեղինակը Ռաֆայել Պետրոսյանն է:

- Ո՞ր ժամանակաշրջանի ստեղծագործություններ կլինեն նոր գրքում:

«Հարության ժամանակը» գիրքն ամբողջությամբ կազմված է նոր բանաստեղծություններից: «Աներևույթ տեղանքը եսի» շարքը գրված է 2004-2007 թվականներին: Շարքի որոշ ստեղծագործություններ մշակվել են վերջերս, հղկվել, ազատվել բառային ավելորդ զանգվածից: «Եվ հորիզոնից քամվում է բառը՝ նուռը երկնքի» շարքը գրված է 2007-2010 թվականներին: Գիրքը բացվում է «Այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահմանագծում» շարքով (2009-10թթ.), որտեղ ընդգրկված բանաստեղծություններն ունեն քաղաքացիական շնչառություն և պաթոս, միտված են դեպի քաղաքական կյանքի տարերքը և ձգտում են մարմնավորել և ռիթմավորել Ապագան: «Իմ արյունն իմ հասցեն է և իմ ճանապարհը» պոեմը (գրված 2006-2009 թթ.), որով եզրափակվում է գիրքը, արտահայտում է բանաստեղծ-անհատի հոգեաշխարհը, կյանքի նպատակն ու ճանապարհի խորհուրդը:

- Ինչքանո՞վ եք կարևորում գրքի դիզայնն ու վերնագիրը, դրանից ելնելով՝ կարելի՞ է ենթադրել գրքի բովանդակության ու որակի մասին:

- Կարելի է ասել, որ սկսված է գրքի նկարչական ձևավորման գործընթացը: Արդեն մի քանի բանաստեղծություններ՝ նկարչական ձևավորումներով (նկարիչ՝ Ռաֆայել Պետրոսյան), տպագրվել են «Հայրենյաց պաշտպան» թերթում: Մինչև տարեվերջ կլրացվի նկարչական մտահղացումների ամբողջական պատկերը: Գրքի վերնագիրը «Հարության ժամանակը», ունի խորհրդանշական իմաստ ու նշանակություն. «Մեռնում է կյանքը և հարություն առնում: Մեռնողը ապրում է ծնվողի մեջ՝ անմահության ելևէջներով: Ծնվողը հզոր է, որովհետև նրա արյան մեջ պղնձա-

նում են նախնյաց ոգու ավյունն ու կանչը: Ոգու ուժը դառնում է կյանքի ճանապարհ»:

Ներշնչանքների միջև
բառերն ըմպում են լույսը դիպվածի:
Կեղևահան դող:
Հայացքների շեմ:
Սերմերի երկինք:
Ես բուռ-բուռ ըմպում եմ
Դեմքը տարերքի:

- Ի՞նչ է Ձեր համար «պոետական ներաշխարհ» ասվածը:

- Առանց ներաշխարհի՝ չկա ժամանակ: Առանց ժամանակի՝ չկա իրականություն: Բանաստեղծն այս երեք իրողությունների պոետական ամբողջությունն է: Բայց նա, որպես բանաստեղծ, կայանում է նախ իր ապրած ժամանակի մեջ, հետո՝ մի այլ ժամանակի շեմին, որտեղ տրոփում է քնարերգության ազնիվ երակը:

- Գրողը նաև ընթերցո՞ղ է:

- Ընթերցանությունը մարզում է միտքը, բացում ներշնչանքի հանքահորեր: Իմ ընթերցած վերջին գրքերը բանաստեղծական ժողովածուներ են: Անհատական կնիք ունեցող բացառիկ ստեղծագործություններ են դրանք. Արտեմ Հարությունյանի «Հեռուստապոեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից», Հովհաննես Գրիգորյանի «Երբեք չմեռնես-ահա թե ինչ կասեմ քեզ»: Այդ գրքերը հոգևոր հարստություն են, որ կփոխանցվեն սերնդեսերունդ:

- Ի՞նչ գրքեր եք ընթերցում:

- Այնպիսի գրքեր (արձակ և չափածո), որոնք ի զորու են բացահայտումներ անելու հոգեաշխարհում: Այդպիսի գիրք է ինձ համար Գաբրիել Գարսիա Մարկեսի «Սերը խոլերայի ժամանակ» վեպը:

- Ինչպե՞ս կգնահատեիք երիտասարդ սերնդի աշխատանքը:

- Կարևորն ազատ և անկաշկանդ մտածելու կարողությունն է: Իրենց ինքնատիպությամբ և պատկերավոր մտածողությամբ ինձ որոշակի չափով հուզում են Վահե Արսենը, Վիտալի Պետրոսյանը, Կամիլան, Տաթև Խուրշուդյանը, Տաթև Սողոմոնյանը, Դավիթ Շիրինյանը, Սոնա Համբարձումյանը, Ալիսա Բաղդասարյանը:

- Ամեն նոր գրքի հրատարակումից հետո սպասո՞ւմ եք ընթերցողի արձագանքին:

- Ամեն գիրք (եթե այն հաջողված է և ինքնատիպ) ինքն է ստեղծում իր ժամանակը և իր ընթերցողին: Ես ծափերից, ընթրեցողի անմիջական արձագանքներից չեմ վերափոխվում: Ես իմ ընթերցո՛ղն եմ: Բայց իմ ստեղծագործությունները (այսօր և վաղը) ստեղծում և շարունակում են ստեղծել իրենց… ընթերցողին:

Չկա… ընթերցող:

Չկա… ժամանակ:

Չկա… հիշողություն:

Այս տողերն իմ գրած վերջին պոեմից են: Նրանք հաստատում են, որ ընթերցողը բանաստեղծության համար նույնն է, ինչ բնակիչը՝ տան համար: Գուցե և… ապագա՛ բնակիչը:

Հարցազրույցը՝ Սոնա Համբարձումյանի
«Եղիցի լույս», 2010թ.

ԱՆՑՅԱԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄԸ

Միայն մեկ հարց

- Անցյալի ու ներկայի ամբողջացումը ապագայի ինչ շեշտադրումներ ունի:

- Ժամանակն ամբողջանում է ստեղծագործության պատկերով: Գրողի ստեղծած կերպարով: Լռությունից ժայթքած տողով:

Ժամանակը թեև կոչվում է ներկա, բայց նրա մեջ բաբախում է անցյալը: Ժամանակը թեև կոչվում է անցյալ, նրա հունդերից ներշնչանքի ուժով ծիլեր է հանում ներկան:

Իսկ ապագայի պատուհանը ծեծում է անակնկալների ժամանակը:

Բայց նա, որ պիտի բացի ապագայի պատուհանը, անէանում է անցյալի ու ներկայի ոտնահետքերում:

Բանաստեղծը վերածնվում է տողի մեջ:

Ապագայի շեշտադրումը ամբողջության տրոհման սկիզբն է:

Զրուցեց՝ Քանաքարա Քոչարյանը
«Եղիցի լույս», 2010թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆԴԻՊԱՏԵՂԻ

Նվարդ Ալեքսանյան

Անվանի բանաստեղծ Ռոբերտ Եսայանը 55 տարեկան է: Եվ չնայած պոետի տարիքը, այսպես ասած, միշտ իր տողի ստվերում է ու այնքան էլ չի սիրում իրեն երևացնել, այնուհանդերձ, Արցախի գրական ընտանիքը նոր տարվա նախաշեմին Ռոբերտ Եսայանի պոեզիային նվիրված միջոցառմամբ շնորհավորեց բանաստեղծին: Նմանատիպ հանդիպում կայացավ նաև Ստեփանակերտի Հովհաննես Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանում, հյուր ունենալով բանաստեղծին ու իր գրչակիցներին, պատանի ընթերցողներին, լրագրողներին:

Ռոբերտ Եսայանը այս հանդիպմանը ներկայացել էր նոր լույս տեսած «Հիշողության ասուպներ» գրքով: Բանաստեղծն այն նվիրել է իր ծնողներին:

Մեր ապրած կյանքն էլ հիշողության ասուպ է և պահի հավերժացումը ոչ միայն բանաստեղծական տողում է, այլև բանաստեղծին իր կենսալիցքը հղող հեռավոր աստղի ցոլանքում: Այլապես անհնար է մարդու հողեղեն շինվածքին ոգու ներկայությունը խառնել, անհնար է, որ բանաստեղծի հայացքը դառնա տիեզերական ծիր ու, միաժամանակ, այնքան երկրային, որ հարազատ մարդկանց պատկերներն անբաժան մնան իր շնչառությունից: Եվ Ռոբերտ Եսայանը բանաստեղծությամբ ստեղծել է սիրելիներով բնակեցված աշխարհ, ուր թեև ժամանակը բռնակ չունի, ու բանաս-

տեղծի խոսքն է ձայնն ու տարածությունը և այդ ամենի հրաշքով էլ ամեն մանկան հետ վերածնվում է դեմքը ժամանակի:

Արցախի գրական ընտանիքի նահապետ, բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանը քաջատեղյակ է Ռոբերտ Եսայանի անցած ստեղծագործական ուղուն՝ բանաստեղծական աշխարհ նրա մուտքից մինչև այսօր: Ու բանաստեղծ-գրականագետի իր դիտարկումները ներկայացրել է մի շարք հոդվածներում՝ Ռոբերտ Եսայանի պոեզիային նվիրված: Օրվա հանդիպմանը ևս Սոկրատ Խանյանը նշեց Ռոբերտ Եսայանի բանաստեղծական աշխարհի առանձնահատկությունների մասին, որոնք վառ արտահայտվել են նաև «Հիշողության ասուպներ» գրքում:

Ռոբերտ Եսայանի բանաստեղծական պատկերները իրենց ներքին դրամատիզմով թատերական գործի արարներ են հիշեցնում, և պատահական չէ, որ Շուշիի Մկրտիչ Խանդամիրյանի անվան թատրոնը «Հարության ժամանակը» գրքի բանաստեղծությունների հիման վրա բեմադրություն է ներկայացրել՝ իր խոսքում նշեց թատրոնի ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանը:

Իմ ծննդով ելքն է բացվել հայոց բառի…

Գրում է Ռոբերտ Եսայանը, և հենց իր ծննդով սկիզբ դրված բառի ելքով քննության առնում հին աշխարհը, որը ամեն նոր եկողի համար դառնում է «հասցե, երազ, ակունք»: Իր հասցեն, երազն ու ակունքն իր արմատներն են, որոնք այնքան են միահյուս, որ կարող են մեկը մյուսի համար դառնալ նկարագիր, «մասունք հող», «խղճի կնիք»:

Այդ աշխարհը պահող հիշողության ասուպները, թեև, «իրենց քարե արձագանքներից» ընկնում են ուշաթափ, սակայն «ելնում են հողից բուսնելու նման…»: Սա է բանաստեղծի գտածն ու այնքան տենչալի հեռուն, որին հասնելու համար հավերժ որոնումն է ուղեցույցը: Ուրեմն, տարիքը բանաստեղծի համար ընդամենը նոր գործերի սկիզբ է նախանշում: Ահա թե ինչ է ասում Ռոբերտ Եսայանը:

- Տարիքը բանաստեղծի համար նշանակում է բանաստեղծական փորձ, կյանքի փորձ, բայց, ասեմ, որ մարդը հոգեպես չի փոխվում, համարյա միշտ մնում է նույնը: Ու, եթե իր մեջ զգում է երիտասարդական ավյուն, տարիքը չի սահմանազատում որևէ ընթացք: Ավանդույթի համաձայն ես էլ ամեն տարեմուտի փորձում եմ տարվա ընթացքում արած-չարածն ամփոփել: Իսկ երբ դա համընկնում է հոբելյանական տարեթվի հետ, ապա ամբողջ կյանքի ամփոփումն է, ասես, դառնում առաջնային:

- *Եվ նման փորձ արվե՞ց…*

- Այո, և ինքս ինձնից այսպիսի պատասխան ստացա. ամեն ինչ կիսատ է, բայց ամեն ինչ շարունակական է…

- *«Պատվիր քո հորն ու մորը». Սուրբ պատվիրաններից մեկն է, այս հարցում որդի ու բանաստեղծ Ռ. Եսայանը միշտ նույնադեմ են, ով է ում առաջնորդում:*

- Իմ ստեղծագործության մեջ ամենասկզբից էլ այդ թեման բավականին արթուն է եղել, ես զգացել եմ, որ ուժեղ բաբախող երակ է ծնողներիս նկատմամբ իմ զգացողությունը, որի հիմքում նաև հայրենի գյուղն է: Այդ կարգի բանաստեղծությունները միշտ առանձնանում էին ու դրանք նաև մշտապես նոր պատկերներով էին ներկայանում: Միտք հղացավ տարբեր բանաստեղծություններից պոեմ հյուսել ու այսպես ծնվեց «Հիշողության ասուպները»: Այստեղ բանաստեղծությունները իրար շաղկապված՝ հարազատ ներդաշնակություն են ստեղծել: Շարքին ավելացրել եմ վերջին տարիներին գրած երկու բանաստեղծություն ու զարմանքով նկատել, որ դրանք «հներից» չեն տարբերվում: Զգացողությունը պահպանվել է հուզականությամբ ու ընկալումով:

- *Տարիքն առավել զգայո՞ւն է դարձնում զգացողությունը:*

- Մարդը վերադառնում է իր մանկությունը, այդ շրջանի հիշողություններն են արթնանում, հետաքրքիրն այն է, որ մանկության տարիները մշտապես ապրում են ու այդ ժամանակահատվածն

անսպառ է, գունեղ ու հեքիաթային, քանզի այնտեղ նաև երազն է ապրում: Մեր մանկությունը մեր երևակայության երազի մեջ է, դրանից էլ չի մոռացվում:

- Ասում են բանաստեղծ ծնվում են, բայց ինչ է ավելացնում ժամանակը և, դրան ի տրիտուր, ինչ է տանում: Բանաստեղծ ծնվում են, բայց մարդն այդ մասին չի իմանում, այդ իմացությունը հետո է գալիս, ինչն էլ պայմանավորված է տարիների փորձի վերարտադրմամբ: Բնատուր շնորհքը սկզբնական շրջանում միշտ չէ, որ վառ երևում է, պիտի ամենօրյա աշխատանքով բացահայտվի: Իր աշխատանքով բանաստեղծն ինքն իրեն ամեն օր վերստեղծում է: Իսկ, թե ժամանակն ինչ է տանում իր հետ, դա միայն գիտե ինքը՝ ժամանակը, որպես ամենամեծ քննադատ:

«Որոնումը որպես շապիկ», որոնումը՝ մոտ ու հեռավոր, ափում պահած թռչուն՝ ամեն պահ հեռուն թևելու պատրաստ, կամ բանաստեղծական հեռուն որքանո՞վ տեսանելի է:

- Որոնումը ստեղծագործողի կյանքն է, եթե որոնումը դադարում է, ապա վերջանում է նաև ներշնչանքը, մշտապես լինել որոնման մեջ, նշանակում է գնալ նոր տողի հետքերով, պատկերի ծնունդին ականատես լինել և երբեք չգոհանալ: Այն որքան էլ դժվարընթաց, այնուհանդերձ, միշտ նոր ճանապարհ է, և դու սկսում ես այդ ոճի մեջ ապրել, ինչն էլ ստեղծագործողի երջանկությունն է:

- Ռոբերտ, 2013-ին արժանացել ես ՀՀ գրողների միության մրցանակին, ինչ գործ էիր ներկայացրել:

- ՀՀ գրողների միության այդ հատուկ մրցանակին արժանացել եմ ես ու Սասուն Գրիգորյանը՝ ռազմահայրենասիրական ստեղծագործությունների համար: Իմ պոեզիայում ռազմահայրենասիրական թեման լայն ծավալում ունի, զինվորի ոգին նաև պոեզիայով պետք է ամրապնդվի:

- Առաջիկա ծրագրերի մասին, ինչի՞ վրա ես աշխատում:

2014 թ. ուզում եմ հրատարակել իմ բանաստեղծությունների

քառալեզու գիրքը /հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն/, նաև իմ առաջին ընդհանուր ժողովածուն, որտեղ կընդգրկվեն տասնմեկ պոեմ, հարյուր սոնետ: Քսան տարի շարունակ աշխատել եմ սոնետների շարքի վրա և, վերջապես, ավարտել եմ: «Ծնունդ կամ ինքնառերեսում» պոեմը անտիպ գործերից է, գրվել է 2013-ին: Ասեմ նաև, որ նախկինում գրված մի շարք բանաստեղծություններ ենթարկվել են փոփոխությունների և նման տեսքով հրատարակվելու անհրաժեշտությունը կա:

Ստեփանակերտի Հովհաննես Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանում կայացած Ռոբերտ Եսայանի 55-ամյակին նվիրված միջոցառմանը հնչեցին շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ, որ ստեղծագործական ճանապարհը դառնա բեղուն ու բանաստեղծը գրական իր ժամանակի տերը լինի, որ բանաստեղծության տողը պոետի համար շարունակի մնալ ընթերցողի հետ լավագույն հանդիպատեղին:

Նվարդ Ալեքսանյան
Հունվար, 2014թ.

«ԻՄ ԳՐՉԻ ԵՐԱԿՈՎ ԲԱԲԱԽՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԸ»

«Հարության ժամանակը» գրքի շապիկը։Նկարը՝ Ռաֆայել Պետրոսյանի

- Ինչո՞վ է առանձնանում «Հարության ժամանակը» ժողովածուն նախորդներից:

- Ստեղծագործական ճանապարհին ամեն մի նոր գրքի ծնունդ հեղինակի համար դառնում է ոչ միայն ուղեցույց, այլև հոգևոր քարտեզ, որով նա գտնում է իր հոգու անկյուններում (և դարերի խորքում) պահպանված Ոգու բացառիկ նշխարները… «Նժար» (1995թ.), «Երազի սահանքներ» (2004թ.), «Հարության ժամանակը» (2001թ.) գրքերը շրջադարձային նշանակություն ունեն իմ ստեղծագործական կյանքում:

Այդ ժողովածուները իմ ստեղծագործական կյանքի՝ նախնական, միջին և նոր շրջանների արտահայտությունն են: Նրանք իրարից տարբերվում են և՛ բառապաշարով, և՛ մտածողության եղանակով, և՛ պատկերավորության միջոցներով:

Ներկայացնեմ այդ գրքերից երեք պատառիկ.

Մի երեխա
(երբվանի՞ց)
հագել է իմ Որոնումը,
որպես շապիկ, և նայում է դեպի
օրը,
ուրկախվել է ճամփան,
ինչպես պորտալա՛ր…*(«Նժար» գրքից)*

Ճանապարհիս դեմքը
ազատագրումն է
մեղքի,
որ իջնում է
վարքի զոհասեղանին՝
վերածվելով լույսի…

(«Երազի սահանքներ» գրքից)

Բառերի խավարը ուտում է ճանապարհիս լույսը:
Որպես վարդ՝ բուրում է վայրկյանը:
Իմ ներկան բանալի՜ է:
Հավատիս խորանում վառվող մի մո՜մ է
ստվերը պապիս:
Եվ հիշողությունը դառնում է ճանապարհի բիբ:

(«Հարության ժամանակը» գրքից)

Երեք հատվածներում էլ ճանապարհի բանաստեղծական արտահայտությունն է: Բայց երրորդ հատվածը մյուսներից տարբերվում է նրանով, որ միահյուսված է զուգահեռ, անկախ, իրար հետ կարծես կապ չունեցող տողերով, առնչությունները պահվում են անտեսանելի ոգու խորքերում, «Եվ հիշողությունը դառնում է ճանապարհի բիբ» տողով ամբողջանում է պատկերը:

- «Հարության ժամանակը», այդպես եք անվանել այս ժողովածուն: Ի՞նչ է նշանակում գրքի վերնագիրը:

- Դա սովորական, վայրկյաններից ու րոպեներից կազմված ժամանակ չէ: Դա հոգեաշխարհի քարտեզ հանդիսացող ժամանակ է, որը չի անցնում, այլ տևում է, ինչպես մոգական ակնթարթ, ինչպես առեղծվածի պայթյուն՝ բողբոջի լույսո՜վ: Այդ ժամանակը հյուսված է մանկության հետքերից, ուռկանի անցքերից դուրս մղվող արցունքներից ծովի, թարթիչների վրա երջանկացող ծվեն-

ներից լույսի, երակների մեջ լցվող վարդաբույրից հետքերի, դեմքից, որ սերմի պես թաղվում է դաշտերում ազատության, ճանապարհի աչքերից ընկնող արցունքից, որ… սանձն է տառապանքի: Այդ ժամանակը «Հարության ժամանակն» է: Այդ ժամանակը կազմված է բանաստեղծություններից, որոնք ունեն համանվագային շնչառություն, միտված են դեպի կյանքի առեղծվածային տարերքը, փորձում են լուծել ժամանակակից մարդուն հուզող հարցեր, մարմնավորել և ռիթմավորել ապագան:

- Ի՞նչ զգացմունքներ է արթնացնում յուրաքանչյուր գրքի ծնունդը:

- Յուրաքանչյուր գրքի ծնունդ հեղինակի համար ներաշխարհային մեծ տեղաշարժ է, որի արդյունքում կերպավորվում է ժամանակը, մարմնավորվում են տեսիլքն ու ոգին, դառնում իրականություն: Գիրքը ճանապարհ է դառնում այն ժամանակ, երբ հեղինակից հետո նրանով անցնում են ընթերցողները:

Գիրքը հասցե ունի և տարածություն:
Ընթերցողն այստեղ
պատանդ չէ՛, այլ՝
ճանապարհի խորհրդավոր երակ:
Ընթերցողը վիհ չէ,
այլ՝ պիրկ լեզվակը
Հիշատակի զանգի:

- Ինչո՞ւմն է կայանում «Հարության ժամանակը» գրքի գաղափարաբանությունը:

- Միայն այն կասեմ, որ գրքում գաղափարը չի դառնում կաղապար, իսկ կաղապարը՝ գաղափար: Ինքնարտահայտման ազատությունը վեր է ամեն ինչից:

Շուրթերով ընթերցված տողերը
հոսում են ջրերում գետի,
ինչպես ուռկանից դուրս մղված
ձկներ…

Բայց պիտի նշեմ նաև, որ բանաստեղծը առանց իր ժամանակի հետ առնչվելու («Ժամանակիդ շունչը դարձիր»), չի կարող արտահայտել իր հոգու տեսիլներն ու ոգորումները: Բանաստեղծությունների համար թեմա են դարձել 1915-ը, սումգայիթյան մրմուռը, պարետային ժամի մագիլներից արյունոտված առավոտները, Սպիտակի սև ժայթքումները, ազատագրված Շուշիի վերածնված ոգին, ամայացած Նախիջևանի ղողանջող ցավը, արցախյան պատերազմի հետքերը, քաղաքական բեմահարթակներից ճոճվող սրերը:

Կան թեմաներ էլ, որոնք միայն մտքով են շոշափվում, չեն բռնվում հայացքով և մարմնավորվում են միայն ոգու երկինքներում: Այդ են վկայում «Հարության ժամանակը» գրքի բանաստեղծությունների վերնագրերը՝ «Անհասության ծաղիկ», «Ճակատագրիս աբսուրդը», «Անհեթեթության կետը», «Ընկերքը ցավի», «Օազիսն Անհայտի», «Առօրյայի ճյուղերը», «Ես բուռ-բուռ ըմպում եմ դեմքը տարերքի», «Ինքնամոտեցում՝ անհայտությունից», «Հարության լաբիրինթոս», «Տողերի օազիսը»:

- Հայտնի է, որ Դուք առանձնահատուկ վերաբերմունք ունեք այս գրքի նկատմամբ: Ինչո՞վ է այն պայմանավորված:

- «Հարության ժամանակը» ծավալուն գիրք է (224 էջ), որը ընդգրկում է բանաստեղծությունների երեք շարք («Այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահմանագծում», «Աներևույթ տեղանքը եսի», «Եվ հորիզոնից քամվում է բառը՝ նուռը երկնքի») և մեկ պոեմ («Իմ արյունն իմ հասցեն է և իմ ճանապարհը» կամ «Արյան համաստեղությունը»): Այս գրքով ես կատարել եմ ևս մի հաստատուն քայլ ինքնաբացահայտման դժվարին ու բարդ ճանապարհին: Պոեզիա եմ բերել ազատ բանաստեղծության իմ տեսակը: Բառերի ազատությամբ կերտել եմ հոգու ճանապարհը՝ այն անընդհատ ու անընդհատ բացահայտելով լռության խորքերից: Լռության խորհուրդը լսելով՝ հասել եմ բանաստեղծության տարածության արմատներին և այդ արմատներով բարձրացել դեպի Ոգու կենարար լույսը:

Վան Նովիկով

Ձեռքս, որ նկարում է,
երբևէ եղե՞լ է վրձին: Աչքերս,
որ տեսնում են, ներշնչանքի
հասցեներ են:
Կամքս թռչուն է, որ վերադառնում է՝
հորիզոնի
շյուղը կտցին:

Հիմա իմ ստեղծագործական ճանապարհին անընդհատ դռներ են բացվում… Եվ կարևորն այն է, որ այս գիրքն ունի ոչ միայն ճանապարհ, այլև՝ հորիզոն, ուր կայծկլտում են ներշնչանքի նորանոր ասուպներ… «Ես իմ չգրած բանաստեղծության լռությունն եմ համբուրում և սպասում ճիչին անհայտի»: Հիմա ես աշխատում եմ… նոր գրքի ստեղծագործական ուղեծիրում: 25-ից ավելի նոր բանաստեղծություններ են գրվել, որոնց ելակետը «Հարության ժամանակը» գրքի հորիզոնն է: Իսկ հորիզոնից այն կո՞ղմ…

Ապագայի երկինքների միջև
ծնվում է բանաստեղծությունը հրեշտակի պես
և թևերով սրբում հետքերը Քաոսի:

Դա բանաստեղծության երա՞զն է, որ երբեք չի մարմնավորվում… Մնում է անհասանելի՞ ու անըմբռնելի՞… Միաժամանակ՝

Բանաստեղծության հայացքը հանապազօր հաց է,
որից չի՞ կշտանում
Ժամանակը…

Հարցազրույցը՝ Վան Նովիկովի

ՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՎՈՂ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆ Է ՄԵԶ ԸՆԴԱՌԱՋ ԳԱԼԻՍ

- Ռոբերտ, անշուշտ, դժվար է ընդգրկուն հայացք ունենալ ժամանակակից հայ պոեզիայի համայնապատկերին, այնուհանդերձ, համոզված եմ, որ ժամանակի պոետիկ ընթացքին քաջածանոթ եք: Շատ հակիրճ կարո՞ղ եք ուրվագծել ժամանակակից հայ պոեզիայի ընդհանուր պատկերը:

- Ժամանակակից հայ պոեզիան բազմաբնույթ է, հետաքրքիր ու գրավիչ: Ի վերջո, պոեզիան հոգևոր մի աշխարհ է, տարաբնույթ իրականությունների հաղորդակցություն, որ կատարվում է լեզվի միջոցով: Լեզվի հնարավորությունների անհատական կիրառումով բանաստեղծը ստեղծում է անկրկնելի մի պատկեր, առաջին հայացքից իրականության հետ առնչություն չունեցող մի աշխարհ, որ հոգևոր սնունդ դառնալով, մասնակցում է մարդու ներաշխարհի վերակերտմանը: Իրենց անհատական ձեռագրով և ոճով առանձնանում են Ռազմիկ Դավոյանը, Հենրիկ Էդոյանը, Հովհաննես Գրիգորյանը, Արտեմ Հարությունյանը, Վարդան Հակոբյանը, Դավիթ Հովհաննեսը, Հրաչյա Սարուխանը, Արմեն Մարտիրոսյանը, Հրաչյա Բեյլերյանը, Ժաննա Բեգլարյանը, Հրանտ Ալեքսանյանը, Նորեկ Գասպարյանը:

- Իմ կարծիքով, պոեզիան մարդու առանձնահատուկ հայացքն է, վերաբերմունք՝ իր և աշխարհի հանդեպ, բնության բոլոր տարերքների հանրագումարը, որը տիեզերական քարշակի բարեբախտությամբ հոսում է ժամանակների միտք-կյանքի միջով: Եթե փորձենք փնտրել առանձնահատուկի՝ այսինքն ժամանակակից հայ պոեզիայի առանձնահատկությունները, կխոճվե՞նք, թե՞…

- Պոեզիայի միջոցով ես ճանաչում եմ ինձ և հայտնաբերում հոգուս ներաշխարհը: Ինքս ինձ համար մի ծանոթ և անծանոթ տեղանք եմ: Եվ պոեզիան է, որ իմաստավորում է կյանքիս յուրա-

քանչյուր պահը: Բանաստեղծության ծնունդը անկանխատեսելի է: Ինչ էլ ասենք՝ թերի կլինի: Բայց փորձեմ բնութագրել առեղծվածային այդ երևույթը:

Երբ շարժվում է տողը իբրև Տիրոջ ընծա,
Խլրտում են թղթի ճերմակ ակոսներում
Կայծքարե ցավն ու բերկրանքի ձյունը պայծառ.-
Եվ իմ գրչի կասկածն է ինձ շանթահարում:

Որպես բերկրանքի ճառագայթ՝ տողը ցավից է ծնվում և դառնում կասկածի շանթ, քրքրում է հոգիդ և գտնում այն պատուհանը, որ բացվում է դեպի անհայտություն: Ամեն ինչ սկսվում է Տիրոջ հղած շշուկից: «Իմ ձայնից կախվող հուշերի պարսը// Արթնացնում է սուրբ ոգիներ նիրհից»: Լռությունը, որպես նժար, կշռում է բանաստեղծի տարերքը, նրա ճանապարհի հետքերից հանո՛ւմ է ձայներ, որոնցով և կերտվում է ներշնչանքի պատկերը:

Կայծքա՛ր է շունչս՝ քարերիդ դիպչում, բո՛ց է արձակում,
Երազ է բառս՝ դրոշ է տնկում… անհա՛ս գագաթին:

«Ճանաչման սահմանն անցած բառի պես// Սարսռո՛ւմ եմ ես, ընդլայնվում լույսով»: Գնում ես դեպի խորքերը, այնտեղից վերադառնում դեպի իրականություն: Երբ հանդիպում ես ինքդ քեզ, բոլորովին նոր զգացողություն է առաջնորդում քեզ: Անհայտը մարմին է ստանում, ձեռք բերում դիմագիծ ու անուն…

Ժամանակակից հայ պոեզիայի առանձնահատկությունը, իմ կարծիքով, այն է, որ պոեզիան հաղթահարելով սովորույթի ուժը, մանևրելու մեծ դաշտ է ձեռք բերել…Հոգևոր այդ աշխարհում կարող են հանդիպել միֆն ու իրականությունը, առասպելական լույսը կարող է հենվել պատուհանիդ փեղկին և քեզ հետ միասին շնչե՛լ տարածության բույրը: Հոգու ազատությունից է բխում բառի դիմագիծը:

- Պոեզիայի՝ իր առանցքի շուրջ պտտվելը ի՞նչ է խորհրդանշում և ի՞նչ ակնկալիք…

- Պոեզիայի առանցքը ոգին է: Իսկ ոգու բանալին բառն է:

Բանաստեղծը նախօրոք չի ընտրում այնպիսի բառեր, որ լինեն բանաստեղծական: «Բանաստեղծականն է, ուրեմն կրկնություն է» (Լև Տոլստոյ): Երբեմն բանաստեղծն ու բառը բախվում են, որպես անծանոթ էություններ: «Բառերը պիտի զարմանան իրենց հարևանությունից» (Հորացիուս): Եվ բառերը դառնում են ոգի, ձեռք բերում տարածություն ու ժամանակ: Երբեմն բառերն ուղեկցում են և թողնում, որ լռությունը խոսի: Պոեզիան լռության կեղևից քամվող օրինությունն է:

Ապագայի երկինքների միջև
ծնվում է բանաստեղծությունը հրեշտակի պես
և թևերով սրբում հետքերը Քաոսի:

- Որքան էլ տարբեր լինեն արդի հայ պոետների ոճն ու մտածողությունը, ներքին մի համադրությամբ նրանց առանձին խմբերի կարող ենք դասել: Ձեր կարծիքով, որոնք են առաջնահերթ և իշխող ուղղությունները ժամանակակից հայ պոեզիայում:

- Բանաստեղծի համար ինչ ուղղություն, ինչ հոսանք, ինչ կերպ… Նա լսում է միայն ներշնչանքի ձայնը… Իմ կարծիքով, այդ ուղղություններն ու խմբավորումները գուցե լինելության միջոցներ են… Բայց բանաստեղծը, որպես տիեզերական ոգի և շնչառություն, վեր է ամեն հոսանքից և ամեն ուղղությունից…

Բանաստեղծը գրականություն է բերում պատկերավոր մտածողության իր տեսակը: Նա հաստատում է ինքն իրեն՝ արմատներ խորացնելով: Միաժամանակ՝ նա անընդհատ փշրում է մտածողության տրաֆարետը, նրա փշրանքներից (եթե հաջողվում է) հյուսում նոր պատկեր: Սա նոր բան ասելու ճանապարհներից մեկն է… Լինել՝ նշանակում է հրաժարվել… Երբեմն ես ընթերցում եմ բանաստեղծություններ՝ իմանալու համար, թե ինչպես պետք է չգրել…

Իսկ բանաստեղծներն առանձնանում և միմյանցից տարբերվում են իրենց «պատկերավոր մտածողությամբ» (Պարույր Սևակ): Բանաստեղծությունները տարբերվում են իրենց ռիթմով, երևակայության գունավորումով, բառերի համով, խորքերի լռությամբ:

Նկատել եմ նաև, որ յուրաքանչյուր բանաստեղծ ստեղծագործելիս, ինչպես ծովում փոթորկի ժամին, հենվում է միայն իր ոգու ամենաուժեղ երակների վրա, իսկ երբեմն ամենահամարձակները՝ գնում են նոր փորձարկության…

-Ժամանակի մեջ ծնված բանաստեղծությունը ժամանակ է պահում գալիքի համար և դատելով արդի հայ պոեզիայի զարգացման միտումներից, ո՞ր տիպի բանաստեղծությունն է մեզ ընդառաջ գալիս:

-Ահա մի քանի տող իմ պոեզիայից.

Օ՜, երևակայություն, թևաբախում Ոգու,
աշխարհից մի կետ եմ վերցնում, դնում պոեզիայի
հատակում,
որ նրա վրա հենվի՜ երկինքը քո…

Ստեղծագործական փորձս հասցրել է ինձ այս հանգրվանին: Համոզվել եմ, որ ամեն բանաստեղծ ի՛ր փորձով կարող է հաղթահարել որևէ բարձունք: «Բաներ էլ կան,- հուշում է Պ.Սևակը,- մինչև չանես, չե՛ս սովորի»: Ժամանակի մեջ ծնված բանաստեղծությունը կրում է իր մեջ հետքը որևէ իրականության: Եվ այդ հետքի՛ց է կախված նաև, թե ինչպիսի ճակատագիր կունենա տվյալ բանաստեղծությունը: Բանաստեղծը, ինչպես նաև նրա ստեղծագործությունը, ունեն ինքնապաշտպանական զգացողություն, որի շնորհիվ իրենցից դուրս են մղում ավելորդ տարրերը, որոնք խոչընդոտ կարող են լինել թռիչքի համար: Մարդու հոգուն հաղորդակցվող բանաստեղծությունն է մեզ ընդառաջ գալիս:

- Ռոբերտ, կոնկրետ Ձեր տողի առումով պատկերային ուրույն մտածողությունը և բառապաշարի բազմաշերտությունը դարձել է բանաստեղծության ամրությունը, որն արտահայտվում է այսօր թեմաների լայն տարածքում: Նկատի ունեմ մեր ազգային ազատագրական շարժումը, պատերազմը, Ձեր ստեղծագործությունում բանաստեղծության ու պատերազմի առճակատումը: Փոխվել է, արդյո՞ք, ահեղ օրերին Ձեզ՝ արցախյան գոյապայքարի մասնակից պոետին ընկերակից հզոր ռիթմերի տոնայնությունը:

- Տողը ինձ համար ելք է, տողը ինձ համար մուտք է, տողը տարածություն է ու նաև՝ հանգրվան: Ազատ բանաստեղծության տողը շնչառություն է, որ, ասելիքից բացի, նաև պատկերը ներդաշնակող միավոր է: Տողը հոգեվիճակներ բացող թրթռուն ալիք է: Միաժամանակ նա ապրող մասնիկն է բանաստեղծության:

Տողի համբերության միջով
սուրում է խորհուրդը Աստղի:

Կարևորն այն է, որ Աստղի խորհուրդը հասնի ընթերցողին: Այստեղ մեծ է բառի գործը: Բառապաշարից վերցնում ես մի բառ: Դա ծովից ալիք վերցնել չէ: Բառը տուն ու տեղ, հարազատներ կորցրած մարդն է, որին պիտի համոզես՝ սկսել նոր կյանք… Կյանքի իրադարձությանը արձագանքել և իրական փաստը բերել պոեզիա՝ առնչելով այն միֆային ակունքներին,- այնքան էլ հեշտ չէ: Կամ միֆն այնպես ներկայացնել (կերպավորել), որ ավելի իրական լինի ու սարսռազդու, միայն պոետը կարող է անել, անհնարինը դարձնելով հնարավոր: Բառն իր խորքից պատկեր է հանում, հայտնվելով նոր տեղանքում՝ որսում է երանգներ, ագուցում իրար, դարձնում իրավիճակ, մի անկրկնելի պեյզաժ: Անգամ պատերազմը, դժվար է՝ թեմա կոչել, գրական նյութ դարձնելիս՝ պիտի պրտըտուսել… Ղարաբաղյան բառով արտահայտվեցի: «Ոգու թռչուններիի հայրենիքում» գրքից ներկայացնեմ մի բանաստեղծություն.

Գարնան բացակայությամբ լցվում
են խրամատները…
Պատերազմ է: Արյան
կաթիլները սերմեր են
Ոգու: Մի ծիտ
թառել է լուսնի պես սպիտակ
գանգատուփին
և իր արտակարգ երգով
լցնում է

դատարկությունը
տիեզերքի:

- Հաճախ եք խախտում բանաստեղծության ինքնուրույնությունը և լինո՞ւմ են պահեր, որ երկյուղեք սեփական տողի առջև…

- Բառը (կամ բանաստեղծությունը) դնելով նոր իրավիճակում, ինքնին խախտում ես նրա ինքնուրույնությունը: Եվ նա ստիպված է լինում իրեն դրսևորել նոր կողմերից, մահացու հարվածներին դիմանալ ու… վերածնվել…

Եվ բռունցքվող ցավից կաթում է
աչքը
հորիզոնի,
որպես արյան կաթիլ,
որով գրելն արդեն
խելագարությո՛ւն է…

Եվ լինում են պահեր, երբ կասկածն է մտնում հոգուս մեջ, երկյուղում եմ սեփական տողի առջև… Այդ պահերն, իհարկե, անկումային պահեր են, բայց, միաժամանակ, խթանող ուժ ունեն:

- Անվանի գրականագետների կարծիքով, բանաստեղծությունը ուղղված չէ մարդուն վերափոխելուն, այսինքն քարոզի, հորդորի, խրատի վտանգավոր գայթակղությունից պետք է հեռու լինի: Միաժամանակ, ինչո՞վ բացատրել հայ պոեզիայի՝ մեր ժողովրդի հոգևոր ներուժի «ծանր հրետանին» լինելը:

- Բանաստեղծները ձգտում են, որ բանաստեղծությունը քարոզի, հորդորի, խրատի վտանգավոր գայթակղությունից հեռու լինի: Ինչո՞ւ: Որովհետև մեր պոեզիան քարոզի, խրատի մոտիվներով հագեցած է: Դրա կարիքը չկա: Մյուս կողմից՝ բանաստեղծությունը լինելով հոգու ազատ արտահայտություն, հոգու պոռթկում, բնական է, որ որևէ պարտադրանք չի՛ հանդուրժում: Դեռ ավելի՛ն: Բանաստեղծության ծնունդը արարչագործություն է, բայց այն արարվում է ինքնաբերաբար: Կան նույնիսկ պահեր, երբ բանաս-

տեղծն անգամ պիտի տողից դուրս կանգնի ու նայի կողքից: Նայի իր ստեղծածին: Այդքանով հանդերձ, չենք կարող չնշել նաև, որ բանաստեղծությունը կյանք մտնելով, ազդեցության նորանոր տարածություններ է գտնում: Հեղինակից զատվելով, նա ապրում է բոլորովին նոր կյանքով: Անգամ կարող է գայթակղվել քարոզով, հորդորով, խրատով: Բայց այս դեպքում, այդ գայթակղությունն արդեն վտանգավոր չէ, այլ՝ օգտակար: Բանաստեղծությունը դառնում է հոգևոր սնունդ: Շուշիի Մ.Խանդամիրյանի անվան թատրոնի դերասաններից մեկը խոստովանել է, որ իմ սիրային բանաստեղծություններից մեկը ասմունքելիս՝ սիրահարվել է մի աղջկա…

- Բոլոր ժամանակներում բանաստեղծությունը ընթերցողի համար հայտնության պես է և տուրք տալով բանաստեղծների տենչանքին՝ պոետիկ հանգով կարող եմ ասել, որ հայ քնարերգությունը իր լավագույն էջերը կշարունակի գալիքում:

- Այո՛, պոեզիան ժամանակ է խտացնում գալիքի համար: Բանաստեղծությունը ստեղծում է անկրկնելի մի իրականություն, որն ապրեցնում է սերունդներին: Պոեզիան, որպես հայտնություն, հարստացնում է ընթերցողի հոգեաշխարհը: Համոզված եմ, որ այդ առաքելությունը կկատարի նաև գալիքում:

Դու անցնում ես և այս տարածքները
բարձրացնում, ինչպես կափարիչներ…
Քո մեջ մշտապես արթնանում ցավը
և ծավալվում է բյուր ղողանջներով:
Մի բառ ես դնում քարին և իսկույն
հառնում են քարից ոգու տաճարներ:
Մի սեր ես բացում. նա աստղի նման
ազդում է Ելքի սյուների վրա:

Հարցազրույցը՝ Նվարդ Ալեքսանյանի
14.08.2014թ.

ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԱՆԱԿՆԿԱԼ ԾՆՎԱԾ ՊԱՏԿԵՐԻ ՄԵՋ Է

Երևանում հոկտեմբերի 25-30-ը կայացած «Նռան հատիկ» փառատոնին, Շուշիի Մ.Խանդամիրյանի անվան թատրոնի հետ միասին, մասնացկել է նաև բանաստեղծ Ռոբերտ Եսայանը: Թատրոնը փառատոնին տարել էր բանաստեղծի «Հարության ժամանակը» (պոեզիայի թատրոն), ինչպես նաև «Սասունցի Դավիթը» (ասացողների թատրոն): Ստորև ներկայացնում ենք Ռ. Եսայանի հետ մեր զրույցը:

- Պարոն Եսայան, 2011թ., երբ լույս տեսավ Ձեր «Հարության ժամանակը» գիրքը, մտածե՞լ եք, որ այն երբևէ կարող է դառնալ թատերական ներկայացում:

- «Հարության ժամանակը» գիրքը ծնվել է բախտավոր աստղի տակ: Նկարչական ձևավորումն անմիջական է, պարզ ու ազդեցիկ, իսկույն ձգում է ընթերցողին: Նկարիչ Ռաֆայել Պետրոսյանի խոսքով՝ կազմի և բաժինները ձևավորող նկարները թեև բխել են բանաստեղծական նյութից, իրենց մեջ ներշնչանքի աստղային լույս են պարունակում:

Գիրքը թատերական ներկայացման վերածելու փորձը անակնկալ էր: Ես ցնցված էի: Դա դեպի ընթերցողի սիրտը տանող կարճ ճանապարհ է: Սկսեցի մոտիկից շփվել թատրոնի ստեղծագործ ուժերի հետ, հասկանալ իրերի բեմական խորհուրդը, լսել բեմից Անդիի ձայնը:

- Ի՞նչ եք կարծում, թատրոնը կարո՞ղ է դառնալ ընթերցող գրավելու միջոց, թե այլ գրավիչ հատկանիշներ ևս ունի, որոնք նպաստում են ոգու տարերքի արտահայտմանը:

- Չորս տարի առաջ էր, որ «Հարության ժամանակը» բեմադրվեց, և ես սկսեցի ավելի մոտիկից ծանոթանալ թատրոնին: Ես տե-

սա, թե ինչպես է ստեղծվում ներկայացումը, ծանոթացա ռեժիսորի աշխատանքի հետ, և ինձ սկսեց գրավել դրամատիզմը: Իմիջայլոց ասեմ, որ դերասանները իրենք են ընտրել պոեզիայի թատրոնի նյութը: Ամեն մեկն իր սիրելի բանաստեղծությունն է առանձնացրել և սովորել: Ես նրանց աչքերով եմ հիմա նայում իմ բանաստեղծություններին: Նոր ապրումը սա՛ է: Չէ որ ես սովոր չէի իմ բանաստեղծություններից որևէ մեկն առանձնացնել: Ես միշտ ապրում եմ նոր բանաստեղծության ծննդով: Դա՛ է իմ առաջմղիչ ուժը: Որոնումի ոգին: Այդ ընթացքում ես գրեցի «Թատրոն» բանաստեղծությունը՝ նվիրելով այն ԼՂՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանին:

Թևող հրեշտակը նոր արա՞ր է
հուշում,
և դու պտտում ես սկավառակը
Ոգու՝
առնչվելով Անհայտի ձեռքի
պտտահողմին:

Ես այն կարծիքին եմ, որ պոեզիան վերին երևույթ է, և այն կարիք չունի արվեստի այլ ձևի միջնորդության: Բայց անժխտելի է, որ հասարակության համար բավականին օգտակար է, երբ բանաստեղծությունը բեմից է հնչում, այս ձևով այն միանգամից մտնում է ունկնդրի սիրտը: Մեր ընթերցողներից շատերը այսօր չեն տիրապետում այն բառապաշարին, որ կա պոեզիայում: Բառապաշարի կորուստը Ոգու կորուստ է: Եվ այստեղ թատրոնը կարող է իր անկրկնելի դերակատարությունն ունենալ: Իմ կարծիքով, պոեզիայի թատրոն է անհրաժեշտ ստեղծել նաև գրողների միություններում:«Դժվար գործ է բանաստեղծության բեմականացումը»:-«Հարության ժամանակը» ներակայացումը դիտելուց հետո ասել է ԼՂՀ գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Հակոբյանը: -Այն ներքին դեկորացիա է պահանջում, ինչն ամենևին էլ

առարկայական չէ: Ու այդ ներքին դեկորների միջոցով կարողանալ դնել միզանսցեններ, բեմական իրողություններ դնել, էֆեկտներ ստեղծել, բավականին դժվար գործ է, ինչը Լեոնիդ Հարությունյանը լավագույնս է կատարել»:

- Տողի բեմականացումը ի՞նչ տվեց բանաստեղծ Ռոբերտ Եսայանին: Ստեղծագործական ի՞նչ ելքեր բացեց որոնումների ոգին:

- Թատրոնը օգնում է բանաստեղծության ընկալման, իսկ ինձ օգնել է, որ ավելի շատ խորքային աշխատանք կատարեմ: Այժմ ես բառին այլ աչքով եմ նայում: «Հարության ժամանակը» ներկայացման հաջողությունը նաև նրա մեջ է,- մի անգամ զրույցի ժամանակ ինձ ասաց բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանը,- որ քո բանաստեղծությունները ունեն հասցեատեր»: Բառը լռության և ոգու արտահայտության հասցեն է, որ պայթում է, որպես բողբոջ, ու դառնում ծաղիկ: Թատրոնի հետ շփումը նոր մոտեցումներ է բերում: Իմ տողը ավելի դինամիկ է դառնում, սկսում եմ մտածել պատկերը ամբողջական դարձնելու հնարների և ձևերի մասին: Չնայած ամեն ինչ ներշնչանքից է կախված, իսկ ներշնչանքը տիրապետում է բանաստեղծության խորքերին: Պոեզիայի ուժը անակնկալ ծնված պատկերի մեջ է, իսկ պատկերի ծնունդը բանաստեղծը չի պլանավորում: Այն տողերն են ուժեղ, որ անակնկալ են ծնվում:

- Ձեր տպավորությունները «Նռան հատիկ» փառատոնից:

- «Նռան հատիկ» փառատոնին առիթ եմ ունեցել շփվելու Հայաստանից և Սփյուռքից եկած երեխաների հետ: Բեյրութաբնակ արվեստագետ Հակոբ Գույումճյանի հետ զրուցել ենք արվեստի, մշակույթի և մի շարք ստեղծագործական ծրագրերի իրագործման մասին: Ուրախությամբ ծանոթացա Երևանի Ավ.Իսահակյանի անվան գրադարանի տնօրեն Հասմիկ Կարապետյանի հետ: Նա մեծ ինտելեկտի տեր մտավորական է և լավ զրուցակից: Գրքեր եմ նվիրել փառատոնին մասնակից երեխաներին, խոստացել եմ նոր

հանդիպում: Հյուրանոցային կյանքը հնարավորություն տվեց շփվել Հայաստանի տարբեր շրջաններից, այլ երկրներից եկած մարդկանց հետ: Բանաստեղծը իրավունք չունի իներտ կյանքով ապրելու: Շարժումը կյանք է: Շփումների մեջ նոր միտք, նոր պատկեր, նոր գաղափար է ծնվում: Հայաստանի գրողների միության հրավերով հյուրընկալվեցինք նաև գրչակից ընկերների շրջապատում: Ոգևորիչ էր գրողների հետ հանդիպումը: Հայաստանի գրողների միության քարտուղար, գրականագետ Պետրոս Դեմիրճյանը հավաստեց, որ «պոեզիայի թատրոնը ունի իր դերն ու նշանակությունը, որ դա առանձնության մեջ պոեզիա կարդալ չի նշանակում կամ ոչ էլ պոեզիա յուրացնել: Ուրիշ տպավորություն է, ուրիշ ընկալում»: Իրենց ներկայությամբ մեզ պատվել և ներկայացումը դիտել են գրողներ Արևշատ Ավագյանը, Պետրոս Դեմիրճյանը, Արտաշես Ղազարյանը, Գուրգեն Խանջյանը, Շանթ Մկրտչյանը, Հասմիկ Հակոբյանը, Գրիգոր Ջանիկյանը, Ալիխանե Մամեն, Վանիկ Սանթրյանը, Մանիկ Աճեմյանը և ուրիշներ:

- Առիթն օգտագործենք հարցնելու՝ այսօր ինչն է հուզում բանաստեղծ, քաղաքացի Ռոբերտ Եսայանին:

- Բանաստեղծն այսօր պայքարի և մաքառումի մեջ է: Ապրելով ժամանակի մեջ՝ ստեղծում եմ իմ ժամանակը: Մոռացության կափարիչը բարձրացնեմ՝ այնտեղ են հոգևոր արժեքները: Լեզուն իմ ուղեկիցն է, իմ ուղեցույցը, անորոշության միջանցքով անցնելիս, վառում եմ բառը, որպես լապտեր: Ընթերցողը հեռացել է գրքից, քանի որ գրքերում օգտագործված բառապաշարը նրան անհասկանալի է դարձել: Այնպես, ինչպես մեզ համար գրաբարն է հեռացել: «Քաոս և լույս» հատորն եմ պատրաստել տպագրության: Ասեմ, որ չեմ առաջնորդվում ընթերցողի ճաշակով: Ցավալի է, բայց հիմա իշխում է խոսակցական բառապաշարը: Սա տանում է դեպի աղքատացում: Ընթերցողը քեզնից պահանջում է նյութ, որը մատչելի լինի: Մինչդեռ բանաստեղծը հայտնություն պիտի տա:

Տողը ծնվում է և ընթերցողի համար մի նոր հոգեաշխարհ պիտի բացվի: Մենք ապրում ենք մի ժամանակում, որն ունի հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ: Իսահակյանն է մեզ առաջնորդում և բացում ոգու աշխարհի նորանոր գաղտնիքներ: «Թե ուզում ես երգդ լսեն…»,- Չարենցն է մեզ հուշում կյանքային նոր ելքեր: Իսկ Մեծարենցը բուրո՛ւմ է եդեմային բողբոջ աստղերով: Պարույր Սևա՛կը: Կոստան Զարյա՛նը: Գևորգ Էմի՛նը: Բոլորն ապրում և սնուցում են մեզ «հոգու ընդհանուր արթնության մեջ»: Եվ ես դուռ եմ փնտրում, որ բացվի դեպի Անհունը… Դեպի աստղային հեռուն ու մոտակա դրախտավայրը, որ Արցախն է…

Երկու խոսք իմ սերնդի մասին: Իմ սերունդն ասպարեզ մտնելով ազգային զարթոնքի ժամանակաշրջանում, բանաստեղծությամբ և զենքով ազատագրեց ու վերակերտեց երկիրը: Հավատալով բանաստեղծության արարչական ոգուն, լեզուն դարձրեց հոգևոր քարտեզ, որի հուշագծերով ընթանալով՝ բացահայտեց անկրկնելի ներաշխարհներ: Իմ սերունդը ժամանակից թելադրված առաքելություն ունի: Նրա ուժը՝ հավա՛տն է, նպատակը՝ փրկել Արցախը ուծացումից և աշխարհի հոգևոր քարտեզին թողնել իր հայաշո՛ւնչ հետքը:

Հարցազրույցը՝ Նվարդ Սողոմոնյանի
26 նոյեմբերի, 2015թ.

Ներշնչանքին դիմավորելը

Կամքի ազդեցության տակ եմ, ինչպես
Ի սխրանքման,
և ինչ շոյում են չամբ փեղուրները աղջամուղների:
Որպես պատանդը Խակատագրի,
սիրտիս մեջ եմ ես ու երգանկանում,
երբ իմ սրտի մեջ
կարում է ապագան բանաստեղծության:
Իսկ Խանապարհին վառվող ջուները
ուղեկիցներ չեն,
այլ զուգարանները Ոգու և Կամքի:
Եվ Ներշնչանքին դիմավորելը
ինչ համար հույնն է,
ինչ ցախահարույց դռներ բացվեր,
երբ ակնոցվող Ի փորտրիկ են
իմ Հերան ու դարար:
Յուռերս Խարիրող բներ են, որոնք
հանգրվանում են հեռապարների ցառապանքների
և սպասում հոգի արագիլներին:

22.12.2018թ.

Ռոբերտ Եսայան – [signature]

«Ներշնչանքին դիմավորելը» բանաստեղծության ինքնագիրը

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ռոբերտ Եսայանը առանձնահատուկ երևույթ է և՛ որպես պոետ, և՛ որպես քաղաքացի: Նա այն բանաստեղծներից է, որ բերեց իր ոճը, աշխարընկալումը, իր բառը, քայլը, շարժումը, իր գեղագիտությունը: Նրա բանաստեղծության փիլիսոփա-յությունը հենվում է կյանքի վրա, որը նա վերարտադրում է բարձր արվեստով:

Վարդան ՀԱԿՈԲՅԱՆ
Բանաստեղծ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
31 դեկտեմբերի, 2018թ.

ՁԵՌԱԳԻՐ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերջերս Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի պոեզիայի և նիստերի դահլիճում կազմակերպվեց Ռոբերտ Եսայանի «Արամորդու գիրը» ժողովածուի քննարկումը:

Միջոցառումը կազմակերպվել էր ԱՀ գրողների միության և «Գրիգոր Նարեկացի» համալսարանի համատեղ նախաձեռնությամբ: Հանդիպման ձևաչափը նոր էր և նախորդ հանդիպումներից տարբերվող: Գրողների միությանը կից գոյություն ունի հրատարակչական հանձնաժողով, որն ամեն տարի պլանավորում և տպագրում է մեր գրողների ստեղծագործություններն՝ առանձին ժողովածուներով: «Մենք որոշեցինք մեր գործելակերպի մեջ որոշակի փոփոխություն կատարել և մտցնել նաև այսպիսի ձև՝ բաց քննարկում, որին մասնակցում են ոչ միայն գրողները, այլ նաև մեր ակտիվ ընթերցողները, գիտնականները,- բացման խոսքում ասաց ԱԳՄ նախագահ, ԳՆՀ ռեկտոր, բ.գ.դ. պրոֆեսոր Վարդան Հակոբյանը:- Կարծում եմ սա հետաքրքիր ձեռնարկում է, որից կշահեն և՛ գրողը, և՛ հրատարակվելիք գիրքը»:

Ռոբերտ Եսայանի գրքի մասին կարծիքներ հայտնեցին Ն. Ալեքսանյանը, Դ. Միքայելյանը, Ժ. Բեգլարյանը, Զ. Բալայանը,

Ն. Սիմոնյանը, Լ. Հարությունյանը, Ն. Գասպարյանը և ուրիշներ: Դրվատանքի խոսքերի հետ միասին հնչեցին նաև դիտողություններ ու առաջարկություններ:

Ռոբերտ Եսայանն իր ելույթի ժամանակ խոստովանեց, որ վերջին 10 տարիների ընթացքում իր գրքերը ստեղծվել են միանգամից, կարճ ժամանակահատվածում: Իր խոսքում նշեց նաև, որ տպագրվելիք գրքի վրա աշխատել է ընդամենը 6 ամիս:

Գիրքը երաշխավորվեց հրատարակության:

Հանդիպման վերջում՝ ԳՆՀ Գիտական խորհրդի որոշման համաձայն Ռոբերտ Եսայանին շնորհվեց ԳՆՀ համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Ա. ՍԱՎԱԴՅԱՆ

ԳՆՀ հասարակայնության հետ կապերի
լրատվության բաժին

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻ «ԱՐԱՄՈՐԴՈՒ ԳԻՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



Բանաստեղծ-գրականագետ Սոկրատ Խանյանի հետ

Ծանոթանալով հայ պոեզիայի զարգացման ու հարստացման բազմաշերտ փուլերին, համոզված ես, որ յուրաքանչյուր դարաշրջանի գեղարվեստական խոսքի դասական սահմանները ընդգծում ու որոշում են աստվածաշնորհ տաղանդները, այնպիսիք, որպիսիք են Գրիգոր Նարեկացին (X դար), Ներսես Շնորհալին (XII դար), Նահապետ Քուչակը (XVI), Սայաթ-Նովա (XVIII դար): Ապա հանդես պիտի գան Հ.Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Վ.Տերյանը, Պ.Դուրյանը, Մ.Մեծարենցը, Սիամանթոն, Դ.Վարուժանը:

Խորհրդահայ պոեզիան, որ այսօր անվանում ենք Նորագույն շրջանի պոեզիա, անուններ շատ ունեցավ, միասնաբար ստեղծեցին ժամանակի չափածոն: Սակայն մոտ 100 տարի անց՝ նոր ժամանակների բարձունքից, երբ հետ ես նայում, անպայմանորեն տեսնում ես Ե.Չարենցի, Ն.Զարյանի, Հ.Շիրազի, այնուհետև Պ.Սևակի, Հ.Սահյանի աստղաբույլը, որոնք տիրաբար մտել են ազգային, ապա համամարդկային պոեզիայի ծաղկադաշտ ու հպարտորեն գրավել իրենց հաստատուն տեղը:

Հայ պոեզիայի ակունքները չեն ցամաքում: Հետսևակյան շրջանն այսօր ունի Ռ.Դավոյան, Հ.Սարուխան, Հ.Գրիգորյան, որոնք մթնոլորտ են ստեղծել: Շատերն են գրում, և վատ չեն գրում, մենք

նկատելին ենք նկատում, այն նկատելին, որ հետք է թողնում, դառնում դպրոց-ավանդույթ: Նմաններին մատների վրա են հաշվում:

Օրինական զգացումով նշենք, որ Հայոց Արցախը վերջապես հնչեցրեց իր գեղարվեստական ինքնատիպ խոսքը՝ իհարկե հայի անունից, այն էլ հաղթանակած հայի: Բանաստեղծներ քիչ չունեցանք,-բեղմնավոր, սրտագետ, ազգանվեր: Բայց անդրադառնանք վերոնշյալ պահանջին. առանց երկմտանքի բարձրաձայնենք, որ մեր գրչեղբայրներից իրենց նկատելի հասակով արդեն մնայուն տեղ ունեն Գ.Գաբրիելյանը, Հ.Բեգլարյանը, Վ.Հակոբյանը, Ռ.Եսայանը, Ն.Գասպարյանը, Ժ.Բեգլարյանը, Ս.Համբարձումյանը: Որպես մեր ասածի վկայություն, Ռ.Եսայանի «Ինքնության դռներ» ժողովածուն է (2018թ.), որի վերաբերյալ մեր գրախոսությունը զետեղվեց «Գրական թերթ»-ի նոյեմբերի վերջին համարում՝ ստանալով հաճելի արձագանք:

Եվ ահա, որպես տպագրության երաշխավորվող ժողովածու, մեր սեղանին է Ռ.Եսայանի երգերի նոր ծաղկեփունջը՝ «Արամորդու գիրը» խորագրով:

Մեր սովորությամբ գիրքը կարդացի երկրորդ անգամ և եկա այն համոզման, որ Ռ.Եսայանը սովորական պոետ չէ, որ նրա աշխարհը միանգամայն ուրիշ սահմաններ ունի՝ անշուշտ, մեզ հուզող կյանքի երանգներով: Այդ աշխարհը Ռ.Եսայանը այս անգամ ներկայացնում է բառերի ճանապարհով: Սակայն շտապենք ասել, որ Ռոբերտի բառերի աշխարհը միանշանակ «բառարան» հասկացություն չէ, այլ մարդկային կյանքի տեսադաշտի վրա հառնած անհատականությունների կերպարների պատկերասրահ: Շարունակելով Ռոբերտի բառ-պատկերների ընթերցումը, պարզ նշմարում ես, որ նրա յուրաքանչյուր բառ պատկերների հյուսաշարք է՝ բառ-կերպար, բառ-ապրում, բառ-բնապատկեր, բառ-գործողություն և այլն: Գրքի հինգ բաժինների ստեղծագործությունների հենքը բառ-պատկերների հյուսվածքն է: Ակադեմիական հերթա-

պահ բնորոշումներից խույս տալու միտումով ընդգծենք, որ Ռոբերտը պատկերների մի նոր, թարմ գոբելեն է հյուսել: Բառը Ռ.Եսայանի համար բառ չէ: Նրա բառը կերպար է, շքամուտք է, դուռ է, հորիզոն է, որոնք ընթերցողին տանում են կանգնեցնում XXI դարի մարդու առջև և ասում՝ «ծանոթացիր, այդ կերպարը դու ես, ես եմ, նա է, պարզապես մենք ենք»: Բառերի մեջ քայլում է նա և զգուշացնում ընթերցողին ընտրել բառի ճանապարհը.

Բառերիս միջով հոսում է երկինքը,
և Աստծո շուրթերից բուսնում է լռությունը,
որպես ծաղիկ: (էջ 3):

Ռոբերտի բառերը մեզ ուղեկցում են դեպի պատկեր-կերպարների այն տեսադաշտը, որտեղ ամեն ինչից անհայտի հոտ է փչում, հոտը մեր ժամանակակցի: Այսպես: Քնարական հերոսի ինքնաբնութագրումը բառի օգնությամբ.

Բառն անցնում է իմ միջով,
Որպես ճանապարհորդ,
Իսկ ես ապրում եմ բառի մեջ,
Որպես զանգահա՞ր Ոգու:

Ռոբերտ Եսայանի համար բառերը ժամանակների սահմանները հատող դյուցազուններ են, որոնք առասպելական վճռականությամբ «հատում են շեմը Անհայտի և հայտնվում մի նոր հարթության վրա»: Ու դրա շնորհիվ

և ժամանակը ձեռք է բերում հայացք,
և ճանապարհը ձեռք է բերում հայացք,
և ընթերցողը ձեռք է բերում հայացք:

Ռոբերտը նշմարում է նաև ժամանակի հայացքը, որը ազդարարում է վերածնվող բառի տեսլադաշտը, ասել է թե՝ հոգու տարածությունը:

Ռ.Եսայանի երգերի քնարական հերոսները անհատների մի զորագունդ են կազմում: Նա բացականչում է. «Բառն եմ գիշերա-

յին, ասուպն եմ ոգու»: Բառը Ռոբերտի հուզաշխարհում «խղճի ավերակներից բուսած մանուշակն է»: Բառի հայացքը տարածություն է: Նրա աշխարհում բառերը նորահրաշ երևույթներ են, որոնք կարող են մտնել ծովը «բառի նավակով» և բացահայտել.

Բառերը սիրահար զույգերի նման
շրջում են իրար թևանցուկ արած,-
կյանքը նրանց մեջ թեև ներդաշնակ է,
իրենց խորքերում կրում են ի վերուստ
սե՞րմը բաժանման:

Ասել է թե՝ Ռ.Եսայանը կյանքի բանաստեղծ է, տեսնում է ոչ միայն սրտերի ներդաշնակությունը, այլև, ցավոք, գոյություն ունեցող դրամատիզմը: Ուստի հարցնում է.

Այն բառերը, որոնց շաղոտ շվաքի տակ
Մերթ մերկանում էինք, մերթ էլ հագնում պես-պես
Եղանակներ, բույրեր, միջօրեներ անթագ,
միթե՞ իրենց լուսե արգանդներն են պղծել: (էջ 37):

Եթե խոսքը կարճ ասելու միտումով ընդհանրացնելու լինենք, ապա և ուրախությամբ, և հպարտությամբ կարող ենք մատնանշել Ռ.Եսայանի չքնող տաղանդի անհանգստությունը՝ այն իմաստով, որ նա դափնիների վրա չի քնում, ունկերի մեջ հնչում է Աստծո հորդորը. «Մի քնիր, որդյակս, ես քեզ արարելու կարողություն եմ ընծայել, ստեղծագործիր, որ ամենայն իրավունքով կոչվես խոսքի վարպետ»:

Ռոբերտ Եսայանի նոր գրքի տպագրությունը կլինի մեր գրական կյանքի նոր խիզախումներից մեկը:

Սոկրատ Խանյան
Բանասիրական գիտությունների
դոկտոր-պրոֆեսոր

ԱՐԱՄԱ ՑԵՂԻ ՈԳՈՒ ՕՐՀՆԵՐԳԻՉԸ

Ժաննա Բեգլարյան

Մոտ 45 տարվա գրական ճանապարհի անցած բանաստեղծը նոր ժողովածու է դրել ընթերցողի քննարկմանը՝ «Արամորդու գիրը»: Վերնագիրն անմիջականորեն կապ ունի Ռոբերտ Եսայանի կենսագրության հետ: Նա ի ծնե արամորդի է, բայց վերնագրի իմաստային ընդգրկումն ավելի խորն է: Բանաստեղծն իրեն Արամա ցեղի դպիր է հայտարարում: 60-ի շեմն հատած բանաստեղծն իր իմաստասիրական տարածքներից խոսք է բացում ընթերցողի հետ: Բանաստեղծի անցած ճանապարհն այն հենակետն է, որտեղից նոր մտահղացումներ են ճառագում: Ռոբերտ Եսայանը բանաստեղծական ճանապարհի սկզբից ինքնատիպ մտածողության ու գեղագիտության տեր արվեստագետ է: Բառը նրա գրչի տակ նոր երանգներ ու իմաստներ է ձեռք բերում: Նրա համար ավանդականի և ազատ բանաստեղծության խնդիրներ չկան: Ասելիքն ինքն է ընդունում իր անհրաժեշտ ձևը: Արարումը բանաստեղծի ինքնահաղթահարման պահն է, որը միաժամանակ նրան ինքնաճանաչում է բերում: Բանաստեղծն արարումով է առնչվում իրականության հոգուն: Նրա հոգու մեջ անդրադարձվում են ժամանակի հակադրություններն ու համադրությունները: Եվ որքանով որ այդ ժամանակի դեմքը խիստ կնճռապատ է, բանաստեղծի տողերն ասուպի փայլատակումով լուսավորում են նրա ճանապարհը: Անձնական և անանձնական ցավը խոհի նոր դռներ է բացում: Բանաստեղծի դեմքին նաև ցավի աստղն է լուսանում:

Ռոբերտ Եսայանը միշտ էլ հեռու է եղել ավելորդախոսություններից ու սնամեջ տողերից: Իր բառերով ասած՝ նա շպրտած տող չունի: Եվ եթե անգամ կան շպրտյալ թվացող տողեր, այդ տողերից ներշնչանքի նոր կրակներ են բռնկվում: Բանաստեղծական ճա-

նապարհի սկզբից էլ նրա հայացքն ուղղված է անհունին: Եվ ամեն քայլափոխի նրան զգաստացնող քաոսի երախը նոր մտասևեռումների պատճառ է դառնում: Այս հին աշխարհում միշտ էլ կեղծ աստվածներ կան հաստատված, միշտ էլ իրար են խառնվում կեղծի և շիտակի հասկացությունները: Բայց բանաստեղծը համոզված է, որ ամենակարող ժամանակն ամեն ինչ իր տեղն է դնում, ու կեղծ աստվածներն իրենց «բարձունքներից» գահավիժում են ցած: Բանաստեղծի հիշողությունը լույսի ու տառապանքի շաղախ է: Նրա համար տարածության խիղճը բառի հզորությունն է: Հիշողության արյունն անընդհատ ունակ է ընդվզման:

Ռոբերտ Եսայանի բառի հզորությունն ընթերցողին տանում է առասպելական ժամանակներ, միաժամանակ նրա պոեզիան իր վրա կրում է ներկա հողմապտույտների դրոշմը: Արտաքուստ հանգիստ թվացող բանաստեղծի հոգին շարունակ դեգերում է լույսի ու մութի շերտերում: Պոետի ոգեշնչումը ոգու պատերին խփվող թռչուն է, և այդ խփոցների մեջ երբեմն տեսանելի են նաև դժոխքի հետքեր, սակայն բանաստեղծի նպատակն ակնհայտորեն մեկն է. նրա մեսրոպատառ ժամանակի բառերը դրախտի շեմ պիտի հանդիսանան:

Բանաստեղծի լռության ակունքներից անգամ ծաղիկ է բացվում:

Ռոբերտ Եսայան-գեղագետը գիտակցում է իր թողած հետագծի հոծության չափը: Այդ հետագիծը միտված է տիեզերական անչափելի տարածքներ, որտեղից Արևը նրա անունը մի օր կաթեցնելու է հիշողության տանիքներին: Ապագայի կանչը լսվում է պոետի արյան ընդերքից: Պոետը թեև ցավի ստվերի աքսորականն է, ունի հույսի սփոփանք, որը բանաստեղծության աստղն է, միակ գործոնը, որ Ռոբերտ Եսայան-գեղագետին շարունակ պահում է ոգու ու կամքի գագաթներին:

Ժաննա Բեգլարյան

Բանաստեղծուհի, բանասիրական գիտությունների թեկնածու

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻ «ԴՐԱԽՏԻ ՇԵՄԸ» ՇԱՐՔԸ

Նանար Սիմոնյան

Ռոբերտ Եսայանն ինքնատիպ մտածողության ու գեղագիտության արվեստագետ է: Նրա պոեզիան ներծծված է քնարականությամբ, փիլիսոփայական ընդհանրացումներով և նուրբ զգացմունքայնությամբ: Կարդալով վերնագիրը՝ «Արամորդու գիրը», ես հիշեցի ամերիկահայ գրող Հակոբ Կարապենցի «Ադամի գիրքը» վեպը, քանզի նույն անկեղծ ապրումն ու նախամարդու մաքրություն են երազում և՛ Արցախում ապրող ու ստեղծագործող Ռոբերտ Եսայանը, և՛ հեռավոր ամերիկաներում հայրենիքի կարոտն իր ստեղծագործություններում անթեղած Հ. Կարապենցը: «Արամորդու գիրը» նոր մտահղացման արդյունք է:

Գրքի «Դրախտի շեմը» շարքում վաթսունի շեմին հասած բանաստեղծն իր սրտի խորքերից խոսք է բացում աստվածապարգև ու առեղծվածային սիրո ապրեցնող հույզերի մասին:

Շարքը գրված է Հին Կտակարանի «Երգ-երգոց»-ի շնչով.

Թող քո շուրթերով սահի հայացքս,
որպես գաղտնաբա՛ռ.
այդպես բողբոջի շուրթով սահում է սարսուռը լույսի,
և ծաղիկնե՛րն են բացվում համբույրից հրեշտակների…

Բանաստեղծի համար դրախտի շեմը սիրելիի անունն է, նրա ջերմ համբույրն ու առեղծվածային ժպիտը, նրա լույս հայացքն ու տաք մարմինը: Ռոբերտ Եսայանը երազում է շողի նման թեթև արթնանալ և Սիրո լույսն ամբողջ տիեզերքի համար դարձնել հենակ («Ոգի կառնի սիրո դողը»): Բանաստեղծի լռության ակունքներից անգամ սեր է հորդում: Սերը Ռոբերտ Եսայանի համար ծնվում է

ներշնչանքի սահմաններից դուրս: Սերն Անհունն է, իրականության հաճելի եզրը, որը սրբագործվում է հոգիներ վեհացնող համբույրով («Հորիզոնի միրգը»).

…Չէ՞ որ իրականության հաճելի եզրը
ո՛չ թե այս մայթն է
կամ այս փողոցը,
այլ մեր… համբույրը,
որ տարածության ծյուղից կախվելով,
շողո՛ւմ է, որպես
հորիզոնի միրգ:

Բառը Ռոբերտ Եսայան գեղագետի բանատողերում նոր գունեռանգներ ու իմաստներ է ձեռք բերում: Բառը շնչում ու ապրում է բանաստեղծի յուրաքանչյուր տողում: Բառն ունի հայացք, հոգի ու երազ: Նա պատրաստ է անգամ բառի տաք թևերով համբուրել սիրելիի լռությունը:

Բառս բողբոջի պես կուզեմ այսօր պայթի,
համբույրի պես ապրի մեր շուրթերի միջև...

Առանց սիրած էակի մենությունը ցավի ցանց է հյուսում բանաստեղծի հոգում («Սիրո տարածությունների միջև»): Փոխադարձ սերն էլ ավելի երջանիկ ու ամբողջական է դարձնում պոետին: Նա խնդրում է սիրելիին չվանել իրեն, քանզի այդ սերն է լուսավորում ու սնում երկու սիրահարների կարոտների հունդերը: Ինքնաըմբռնման նոր եղանակի մեղեդին է լսվում Ռոբերտ Եսայանի սիրային շարքի յուրաքանչյուր բանաստեղծություն ընթերցելիս: Բանաստեղծն այնքան ուժգին է սիրում, որ այդ սիրուն ու գգվանքին մասնակից են դառնում անգամ ծաղիկներն ու աստղերը («Մասնակցության տեսակները»):

«Աղջիկը նվագում է ստեղներին հորիզոնի» բանաստեղծության մեջ գիժ գարունն ու սիրո ծիծեռնակներն իրենց տեղը զիջում են ամենակուլ հողմերին, հոգեվարք ապրող թռչուններին ու արցունքոտված հրեշտակներին: Դուրյանական «Սիրել»-ի (Ո՜հ,

խուրձ մը վարս, եղեմ մը շունչ՝/ Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ) հոգեբանական ապրումների շղթան ենք տեսնում Ռոբերտ Եսայանի հետևյալ տողերում.

Կյանքի
Ու մահի միջև հայտնվում են և անհետանում
թովչանքը քայլերիդ,
Շրջազգեստիդ շրշյունն առինքնող:
...Մի տեղ գրկում է ինձ և հրապուրում
պտտահողմը թախծի:
Մի այլ տեղ ընդառաջ է գալիս ինձ
խայտանքը լույսի,
և ես ըմբռնում եմ,
որ ուսերիս տանում եմ աձյունը Համբույրի:

«Խոսք՝ կնոջը» բանաստեղծության մեջ երևում է կնամեծար բանաստեղծը, բանաստեղծ, ում համար կինն աստվածուհի է, «լուսաբացից առաջ աշխարհին շնորհված լուսայգ»: Կինն անուրջ է ու կարոտ: Կինն Անհունն է: Նա իր մեջ ամփոփում է գենի շարունակականությունն ապահովելու կարևոր ու մեծ առաքելություն՝ աստվածաշնորհ, հրաշք մայրություն: Բանաստեղծն ակնարկում է, որ առաքինի հայ կնոջ արյան խորքերում է նստած հատկապես հայ մարդ ծնելու ու հայեցի դաստիարակելու գաղափարը:

«Դրախտի շեմը» շարքում Ռոբերտ Եսայանը փորձում է պեղել սիրո անհատնում գանձերը, շոշափել այդ «աներևույթ տեղանքի» ամեն հյուլեն, շոյել սիրուց բացվող «հայտնության ծաղիկները», վանել «արցունքի մոխիրն» ու տրտմությունը: Սիրելիի անունը բուրող վարդաստան է, շունչը՝ կոկոն վարդ, մարմինը՝ չխամրող արշալույս: Բանաստեղծի համար տառապանքների քարանձավներն ասուպի նման լուսավորող համբույրն ու սիրելիի գիրկն է իրական երջանկության կղզին:

Նանար Սիմոնյան
Բանասիրական գիտությունների
թեկնածու

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

1. «Հենակետեր», Երևան, 1989թ., 68 էջ,
   խմբագիր՝ Արմեն Շեկոյան:
2. «Ծարաված հետքեր», Ստեփանակերտ, 1991թ., 48 էջ,
   խմբագիր՝ Սեյրան Բալայան:
3. «Տարածություն և հոգի», Ստեփանակերտ, 1992թ., 40 էջ,
   խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
4. «Նժար», Ստեփանակերտ, 1995թ., 120 էջ,
   խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
5. «Քաոս և լույս», Երևան, 1997թ., 100 էջ,
   խմբագիր՝ Սպարտակ Ղարաբաղցյան:
6. «Հետագիծ», Ստեփանակերտ, 1998թ., 64 էջ,
   խմբագիր՝ Մաքսիմ Հովհաննիսյան:
7. «Սիրո գիրք», Ստեփանակերտ, 1998թ., 96 էջ,
   գեղ. խմբագիր՝ Ն. Հակոբջանյան:
8. «Հիշատակի ափ», Ստեփանակերտ, 1999թ., 32 էջ,
   խմբագիր՝ Կոմիտաս Դանիելյան:
9. «Հույսի դուռ», Ստեփանակերտ, 2001թ., 20 էջ,
   խմբագիր՝ Արիս Գրիգորյան:
10. «Ելք» (պոեմ), Ստեփանակերտ, 2002թ., 16 էջ,
    խմբագիր՝ Արիս Գրիգորյան:
11. «Հրեշտակ», Ստեփանակերտ, 2002թ., 72 էջ,
    խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
12. «Ոգու ճանապարհ», Ստեփանակերտ, 2002թ., 42 էջ,
    խմբագիր՝ Վարդան Հակոբյան:

13.«Ելք», Ստեփանակերտ, 2002թ., 184 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
14.«Երազի սահանքներ», Ստեփանակերտ, 2004թ., 160 էջ., խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
15.«Ընկնող վարագույրներ և հառնող լույս», Ստեփանակերտ, 2005թ., 120 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
16.«Ռեքվիեմ» (պոեմներ), Ստեփանակերտ, 2006թ., 40 էջ, խմբագիր՝ Նորեկ Գասպարյան:
17.«Անդրժամանակի հենարաններ», Ստեփանակերտ, 2006թ., խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
18.«Զինվորի երգը», Ստեփանակերտ, 2006թ., 48 էջ, գեղ. խմբագիր՝ Արևիկ Մուսայելյան:
19.«Աներևույթ տեղանքը եսի», Ստեփանակերտ, 2007թ., 64 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
20.«Ասուպների եզերք», Ստեփանակերտ, 2008թ., 480 էջ, խմբագիր՝ Նորեկ Գասպարյան:
21.«Час, который превыше судьбы», Степ., 2008г., 44 ст., редактор: Л. Мартиросян.
22.«Ինքներգություն» (պոեմ), Ստեփանակերտ, 2009թ., 48 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
23.«Երազը դուռն է ժամանակի», Ստեփանակերտ, 2009թ., 48 էջ., տեխ. խմբագիր՝ Լ. Գրիգորյան:
24.«Ես գրառումներ եմ անում», Վալ դե Մար, 2011թ., տարեգիրք, 208 էջ, ֆրանսերեն:
25.«Հարության ժամանակը», Ստեփանակերտ, 2012թ., 224 էջ, խմբագիր՝ Ժաննա Բեգլարյան:
26.«Կենսագրության եռանկյունի», Ստեփանակերտ, 2012թ., 160 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:

27. «Տողերի ճակատագիր», Ստեփանակերտ, 2012թ., 192 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
28. «Ոգու թռչունների հայրենիքում», Ստեփանակերտ, 2013թ., 400 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
29. «Հիշողության ասուպներ», Ստեփանակերտ, 2013թ., 40 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
30. Երկեր, հատոր առաջին, Ստեփանակերտ, «Քաոս և լույս», 2015թ., 240 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
31. Երկեր, հատոր ութերորդ, Ստեփանակերտ, «Խաչ և սուր», 2017թ., 240 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
32. Երկեր, հատոր յոթերորդ, «Թատերարվեստի երախտավորը», 2018թ., 240 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:
33. Երկեր, հատոր հինգերորդ, «Ինքնության դռներ», 2018թ., 212 էջ, խմբագիր՝ Վարդան Հակոբյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄՈՐԴՈՒ ԳԻՐԸ

ԲԱՌԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ 5
ԴՐԱԽՏԻ ՇԵՄԸ 25
ԵՎ ԼՈՒՅՍ Է ԵԼՆՈՒՄ ԵՐԱԿԻՑ ՑԱՎԻ.....67
ԼՌՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳԻՐԸ 103
ԼՈՒՍԱՅԳԻ ՇԻՎԵՐԸ.....127
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....149
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ 159
ԱՆԴՐԱԴԱՐՁ 239

ՌՈԲԵՐՏ ԱՐԱՄԻ ԵՍԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

Հատոր վեցերորդ

ԱՐԱՄՈՐԴՈՒ ԳԻՐԸ

Սրբագրիչ՝ Անահիտ Եսայան
Էջադրումը՝ Ժաննա Ավանեսյանի
Կազմի ձևավորումը՝ Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 16.25 տպ. մամուլ, տպաքանակը՝ 150:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2020

256